

# ՄԱՐԶԻԿ

ՀԱՇՄ

# Մարզիկ

مجلة رياضية شهرية  
تصدرها جمعية الهولمنتمن بيروت

# marzig

SPORTS MAGAZINE

42-ԸԴ ՏԱՐԻ ԹԻԲ 425 - Vol. XXXXII N° 425 - السنة الثانية والاربعون - العدد ٤٢٥



## ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹԻՒՆ ՆԿԱՐԱԳԻՐ ԵՒ ԴԻՄԱԳԻԾ

«Անդրդուելի կերպով...»

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 11-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ 20-30 ՅՈՒԼԻՍԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ



**Ք**որոնայի համաճարակին պատճառով մէկ փարուան ակամայ յեղաշփոխմէ ետք, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերը այս ամառ, 20-30 Յուլիս 2022-ին, փեղի պիտի ունենան Հայաստանի մէջ:

Ի փարքերուծին նախորդ մարզախաղերուն, 11-րդ մարզախաղերը պիտի յարկանշուին քանի մը նորութեամբ: Արդարեւ, այս մարզախաղերուն առաջին անգամ ըլլալով պիտի կիրարկուին 3x3 պասքեթպոլի, ծովափի վոլիպոլի եւ կոլֆի մրցումներ, ֆութպոլի, պասքեթպոլի, վոլիպոլի, ֆութսալի, ճապոնական, աթլէթի, փինկ-փոնկի, լողի եւ թենիսի մրցումներու կողքին:

Մարզախաղերուն երկրորդ նորութիւնը անհատական կարողութեան մրցումներն են, որոնք առաջին անգամ կիրարկուեցան անցնող չմրան կազմակերպուած համա-Հ.Մ.Ը.Մ.ական առցանց մարզախաղերուն: Մրցումները արշանագրեցին մեծ յաջողութիւն եւ նկարի առնուեցան նաեւ այս մարզախաղերու պաշտօնական մրցումներուն կողքին:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերը կը յարկանշուին այն իրողութեամբ, որ առաջին անգամ ըլլալով, մասնակիցներու արեւելումի աշխարհները կը կարարուին նախապէս, առցանց, դաստիարակչական բնոյթի էօրը փեսանիութեամբ, որոնք մասնակիցներուն կը ծանօթացնեն միութեան մարզական պարմութիւնը, համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու նպարակը, 11-րդ մարզախաղերու ընթացքը, Fair play-ի արդար խաղի կանոնները, մայրաքաղաք Երեւանը եւ այլ նիւթեր:

Մարզախաղերը ունին բարեւարակական աշխարհներուն եւ Հայաստանին ծանօթացման յարուկ յայրագիրներ: Նախապեսուած է մարզախաղերու մասնակիցներուն անունով երեխաներու ի նպարս Ծրագիր մը իրականացնել Հայաստանի սահմանային շրջաններէն մէկուն մէջ: Կը մշակուի նաեւ Ծրագիր մը, որպէսզի մասնակիցները առիթը ունենան առնչուելու իրենց ազգային, հոգեւոր, մշակութային արմարներուն հեպ:

Իբրեւ նորութիւն պէտք է նշել նաեւ «Հրաշք» մարզախաղերու կազմակերպումը՝ մարզական այս մեծ իրադարձութեան օրերուն: «Հրաշք» մարզախաղերը


յարուկ խնամքի կարօպ մանուկներու եւ երիրասարդներու համար կազմակերպուող խաղեր են, որոնք 2018-էն ի վեր կը կիրարկուին Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ.Նահանգներու շրջանին մէջ: «Հրաշք» մարզախաղերուն կը նախապեսուի որ մասնակցին 12-22 փարեկան 200 երեխաներ եւ երիրասարդներ Հայաստանի զանազան շրջաններէն եւ Սփիւրքէն: Այս մարզախաղերուն համար նկարի առնուած են յարուկ դաշտ եւ մարզական սարքեր:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերը ընթացք պիտի առնեն 20 Յուլիս 2022-ին կազմակերպուած պաշտօնական մամլոյ ասուլիսով: Յաջորդ օր, մարզախաղերու մասնակիցները կ'այցելեն Եռաբլուր եւ Ծիծեռնակաբերդ, սպա ընթացք կ'առնեն մրցումները, որոնք կ'երկարին ինը օրերու վրայ: Բացման պաշտօնական հանդիսութիւնը նախապեսուած է «Հայ մարզիկի օրը» 22 Յուլիսին, իսկ աւարական մրցումները եւ փակման հանդիսութիւնը՝ 29 Յուլիսին: 30 Յուլիսին կը կարարուի յաղթանակի պարահանդէս:

Կը սպասուի, որ մարզախաղերուն մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւր շրջաններէն աւելի քան 600 մարզիկ-մարզիկուիներ, ինչպէս նաեւ Թեհրանի «Արարապ» եւ «Նայիրի» միութիւններէն պարուիրակութիւններ:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը միայն մրցում, մեկրալ, բաժակ եւ պարգեւարում չեն: Մարզախաղերը մթնոլորտ են, ազգային սպրում եւ հաւաքական պարկանելիութեան գիրակցութիւն: Գլխաւոր յաղթանակներ այս պարազային հայութիւնն է, որ գիրք 104 փարի սպրեցնել Հ.Մ.Ը.Մ.ը եւ սպրիլ Հ.Մ.Ը.Մ.ով, ոգեւորուած անոր «մարզական բանակ»ով եւ ամրապնդուած անոր հայկականութեամբ, ինչ որ գլխաւոր երաշխիքն է պարրասպրութեանը սերունդի մը, որ բարոյալքում չճանչնայ, յաղթանակի հպարտութիւն ունենայ եւ միշտ ընթանայ յառաջ, անասան ու անդեղեղ:

Հ.Մ.Ը.Մ.Ի  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



**ՅԱԶՈՐԴ ԹԻՒԸ**

«Մարզիկ»ի յաջորդ քիչը ամբողջությամբ նրկիրում է համա-Հ.Մ.-Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերուն, որնք 20-30 Յուլիս 2022-ին տեղի պիտի ունենան Երեւանի մէջ, Հայաստան, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի 19 շրջաններու եւ Թեւրաւանի Հ.Մ.Ա.Կ.-ի աւելի քան 600 մարզիկներու:

- ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**
- «Անդրդուելի կերպով...» 2
- Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ**
- 11-րդ մարզախաղեր 4
- Սկաուտական 5
- Կազմակերպական 6
- Պատգամ 10
- Անդրադարձ 13



- ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**
- Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը մայր հայրենիքի մէջ 1918-1927 (Է. մաս) 16
- ՍԱՆԱԾԻՐՆԵ ՍԱՆԱԾԻՐՆԵ** 30
- ՄԵՐ ԿՈՐՈՒՍՆԵՐԸ** 78

Marzig sports magazine is published by Homenetmen Central Committee-Sevan Building, Rue 77, Sector 4, Bourj Hammoud, Beiruth, Lebanon. Tel: 961 1 248043, 961 1 260117, E-mail: marzig@Homenetmen.org, P.O.Box: 80486 Bourj Hammoud, Lebanon, www. Homenetmen.org

**Խմբագիր:** Վիգէն Աւագեան (vicken.avakian@homenetmen.org)  
**Խմբագրական կազմ:** Գրիգորիս Պողարեան, Սեւան Նազարեան, Սիրվա Ալլահվերդեան, Յոլեր Փանոսեան, Բաֆֆի Սիւլահեան, Սիւզի Օհանեան եւ Շանթ Ժամկոչեան:  
**Վարչական կազմ:** Արօ Մոսիկեան, Սիրվա Սաղրեան, Վարդուի Զրննզիւհեան, Վարդան Զսաճիկեան, Տիրան Ըահինեան եւ Եղիա Քիլէնեան:  
**Էջադրում եւ ընդհանուր ձեւաւորում:** Արշօ Պալեան, **Կողքի պատրաստութիւն:** Y Concept International, **Գրաշարութիւն:** Շողիկ Պոյսանեան, **Տպագրութեան պատրաստութիւն:** Photogravure Paklayan, **Տպագրութիւն:** Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, Պէյրութ, Լիբանան:  
**Քաճանորդագրութիւն:** «Մարզիկ» կը հասնի աշխարհի 25 երկիրներու քաճանորդներու: Տարեկան քաճանորդագրութեան սակ ճշդում է՝ Լիբանան 40,000 Լ. ռ., Սիւրիոյ Արեւելեան երկիրներ 50 \$, Երուսալեան երկիրներ 65 \$, Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 75 \$: Լիբանանի մէջ թերթին հատարական սակն է 5000 Լ. ռ.: **Ցրում:** «Մարզիկ»ի ցրումը Լիբանանի մէջ կը կատարուի յարուի ցրուիչով (հեռ. 71/239209): Թերթը կարելի է ստանալ նաեւ «Համազգային»ի գրասխանութէն: Լիբանանէն դուրս թերթը կը ստացուի «Liban post»-ի միջոցով:  
**«Մարզիկ» կը հրատարակուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ - Հասցէ:** «Սեւան» շէնք, քիւ 77 փողոց, քիւ 4 հատում, Պուրճ Համուտ, Պէյրութ, Լիբանան 9611248043, 9611260117 marzig@Homenetmen.org Homenetmen - Հ.Մ.Ը.Մ. www.Homenetmen.org

# «ԱՆԴՐԴՈՒՆԵԼԻ ԿԵՐՊՈՎ...»

**Ո**ւշագրաւ է «Հայ սկաուտ»ի Մայիս 1922-ի թիւէն առնուած (Բ. տարի, թիւ 19, էջ 301) եւ այս խմբագրականին հետ տրուած փաստաթուղթը, որ կը ներկայացնէ Հ.Մ.Ը.Մ.ի օրուան Կեդրոնական Վարչութեան կեցուածքը՝ մարզական կեանքի արհեստավարժութեան մասին:



Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութենէն հազիւ երեքուկէս տարի ետք հրապարակուած այս յայտարարութիւնը կը շեշտէ, որ՝

*«ա. Հ.Մ.Ը.Մ. սիրոյի եւ արթնօրէնի խնդիրներուն մէջ անդրդուելի կերպով կապուած ըլլալով ամաթօրութեան սկզբունքներուն, որոշած է ամէն կերպով եւ օրինական ամէն միջոցներով արգիլել փրոֆեսիոնէլութեան մուտքը եւ զարգացումը շարքերուն մէջ:*

*«բ. Այս տեսակէտը կը համապատասխանէ իր կանոնագրին, ինչպէս նաեւ այն սկզբունքներուն, որոնցմով ան կ'առաջնորդուի, հետապնդելով մեր երիտասարդ սերունդին ֆիզիքական զարգացման կողքին, անոր նկարագիրին ազնուացումը:*

*«գ. Ան պիտի չներէ որեւէ առիթով կամ պատրուակի տակ Հ.Մ.Ը.Մ.ի որեւէ խումբ կարենայ մրցիլ ուրիշ խումբի մը հետ, որուն մէջ փրոֆեսիոնէլ խաղացողներ կան, նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի ռեւէ անդամ պիտի չկարենայ մրցիլ կամ նոյնիսկ փորձեր կատարել խումբի մը դէմ, որ իր մէջ փրոֆեսիոնէլ անդամներ ունի»:*

Այսքան պարզ ու յստակ:

Հարցը նոր չէ ուրեմն: Ունի մէկ դարու պատմութիւն: Ծնած է Հ.Մ.Ը.Մ.ին հետ, մնայուն օրակարգ դարձած է միութեան կեանքի բոլոր հանգրուաններուն, մինչեւ որ եկած-հասած է մեր օրերը:

Հարցադրումը չէ փոխուած, պատասխանը՝ նոյնպէս:

Հ.Մ.Ը.Մ. «անդրդուելի կերպով» կապուած կը մնայ սիրողականութեան՝ «ամաթօրութեան սկզբունքներուն», որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի համար մարզախաղերը, ինչպէս սկաուտութիւնը, միջոց են հետապնդելու «մեր երիտասարդ սերունդին ֆիզիքական զարգացման կողքին, անոր նկարագիրին ազնուացումը»:

Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը մարզիկ ըլլալէ առաջ Հ.Մ.Ը.Մ.ական է: Ունի պատկանելիութիւն, նկարագիր եւ դիմագիծ: Ան չի նմանիր, իրաւունք չունի՝ նմանելու, մարզական որեւէ ակումբի մաս կազմող ֆութպոլ-

լիստի կամ պասքեթպոլիստի, որ կը գործէ «ուր հաց՝ հոն կաց» սկզբունքով կամ «Ով աւելի կը վճարէ՝ անոր շապիկը կը կրէ» մօտեցումով: Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը մաս կը կազմէ համահայկական մեծ ընտանիքի մը, որ դատ ու տեսլական կը հետապնդէ, ազգային արժէքներու հանդէպ յարգանք եւ յանձնառութիւն ունի, հետեւաբար ան կրողն ու հաւատացողն է այդ արժէքներուն: Ան լաւ գիտէ, որ իր ժողովուրդը «օդի եւ ջուրի պէս պէտք ունի յաղթանակի», ինչպէս որ կը պատգամէ Թէքէեան:

Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկին համար իւրաքանչիւր մրցում եւ յաղթանակ միջոց է նախ բարձրանալու՝ ինքզինք գերազանցելու, ապա տուեալ յաղթանակով իր շրջապատը՝ միութիւնն ու ազգը եւս բարձրացնելու:

Պարտութիւններով եւ յուսախաբութիւններով լեցուն մեր կեանքին մէջ, յոյսի, բերկրանքի, ազգային հպարտութեան եւ յաղթանակի աղբիւր է Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը: Հաւաքական փառքի կերտիչ է ան: Խումբին եւ միութեան ճամբով ազգին ու հայրենիքին վերելքին նպաստողն է ան:

Մովորական թիւ, անձ կամ անուն չէ Հ.Մ.Ը.Մ.ի նուիրական դրօշին տակ մրցող մարզիկը: Ան Հ.Մ.Ը.Մ.ական է, պէ՛տք է ըլլայ, հոգումով ու սրտով, համոզումով եւ խառնրածքով, իր ամէնօրեայ նիստ ու կացով: Ենթակայ՝ միութեան կանոնագիրին, գերադաս ժողովներու եւ մարմիններու որոշումներուն: Այլապէս Հ.Մ.Ը.Մ.ական չէ ան, այլ՝ անհատական շահուն եւ հաճոյքին համար որեւէ մարզախաղ կիրարկող պատահական մարզիկ մըն է:


«Գնուող» ու «ծախուող» ապրանք մը չէ Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը, որովհետեւ ան հոգի, գաղափար ու կամք է: Ազնիւ հոգի, վսեմ գաղափար եւ հզօր կամք: Նիւթը՝ դրամը փորձութեան կ'ենթարկէ հոգին ու գաղափարը, կը խաթարէ կամքը, որովհետեւ «առք» ու «վաճառք»ի ժամանակ սակարկութեան կը դնէ ամէն արժէք եւ սկզբունք: Մինչդէռ Հ.Մ.Ը.Մ.ի շապիկը կրող մարզիկը ամէն բանէ առաջ բարոյական արժէքներու եւ անժամանցելի սկզբունքներու մարդ է, տիպար քաղաքացի է: Միութենական է ի վերջոյ, միութենական բառին ամենալայն իմաստով՝ գաղափարական, դաստիարակչական եւ կազմակերպական առումներով:

Իսկ ի՞նչն է, որ միութիւն մը կը զատորոշէ սովորական մարզական ակումբէն, եթէ ոչ՝ միութեան մը նպատակին հանդէպ անդամներուն պարտականութեան զիտակցութիւնը, պատասխանատուութեան զգացումը եւ անշահախնդրութիւնը, որոնք դրամով չեն գնուիր, այլ միայն դաստիարակութեամբ եւ կրթութեամբ ձեռք կը բերուին. միութեանակա՛ն դաստիարակութեամբ, միութեանակա՛ն տիպարներու հետեւողութեամբ եւ միութեան պատմութեան հաւատարմութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.ը միութիւն է հիմնադրութեան առաջին օրէն եւ, ահա թէ ինչու, դեռ 100 տարի առաջ, ան որոշած է «ամէն կերպով եւ օրինական ամէն միջոցներով արգիլել փրոֆեսիոնէլութեան մուտքը եւ զարգացումը շարքերուն մէջ» եւ արգիլել մրցիլ խումբի մը դէմ, որ արհեստավարժ մարզիկներ ունի իր շարքերուն մէջ եւ կամ... փորձեր կատարել խումբի մը դէմ, որուն շարքերուն մէջ արհեստավարժներ կան:

Այսքան խստապահանջութիւն, այսքան սկզբունքայնութիւն կրնայ անհասկնալի թուիլ շատերու, սակայն Հ.Մ.Ը.Մ.ի «կամատր բանակ»ին եւ հետեւորդներուն համար ան կը մնայ գերագոյն արժէք՝ առանց որուն դժուար թէ Հ.Մ.Ը.Մ.ը Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն ըլլայ, իսկ Հ.Մ.Ը.Մ.ականը՝

- Հարազատ հայ մնայ,
- Մարմնակրթական արժէքներով ազնուանայ,
- Ընդհանուրին ծառայէ եւ
- Միութեան արժանի ժառանգորդն ու պահապանը ըլլալ:



### Հ.Մ.Ը.Մ.Ի 26 ՇՐՋԱՆՆԵՐ, 111 ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ԵՒ ՄԵՎԻՈՐՆԵՐ

**Հայաստան:** «Գ. Յակոբեան» (Երեւան), «Յ. Հինդիկեան» (Երեւան), «Վ. Չարսեան» (Երեւան), Արուիկան (Արուիկան), «Հ. Առուստամեան» (Չարենցաւան), «Վ. Չերազ» (Կիւմրի), «Շ. Բրիստեան» (Երեւան), «Վ. Չերազ» (Երեւան), «Վ. Բախչեան» (Արմաւիր), «Հրազդան» (Հրազդան), «Վ. Ռոստոմեան» (Էջմիածին), Մարտունի (Մարտունի), «Ա. Չոհրապեան» (Վեյրի), «Տ. Խոյեան» (Երեւան), «Դ. Վարդան» (Երեւան). **Արցախ:** Սրեպիանակերպ. **Վրաստան:** Արաքսալաք, Արաքսալաք, Թիֆլիս. **Ռուսիա:** Մոսկոյա. **Լիբանան:** Պէյրութ, Չախլէ, Թրիփոլի, Պ. Համուր, Այնճար, Դրնի, Անթիլիաս, Ժըրէյ-յրէ, Պաուշրիէ, Ռաուրա. **Սուրիա:** Հալէպ, Դամասկոս, Լաթաքիա, Գամիշլի, Բեսապ. **Յորդանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա. **Իրաք:** Պաղտապ. **Քուէյթ:** Բուէյթ. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Աթէնք, Գոթինիա, Մելանիկ. **Անգլիա:** Լոնդոն. **Աստորիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսէյ. **Հոլանդիա:** Ամսթըր, Արմսթըր, Առնհեմ. **Գերմանիա:** Միւնիխ. **Շուէդ:** Սթոքհոլմ, Վեսթերոս, Սոլերթրիա. **Պուլկարիա:** Սոֆիա, Ռուսէ, Փրովփիլ Վառնա, Շումէն, Պորկաս. **Գանապոս:** Մոնթրէալ, Համիլթըն, Թորոնթօ, Բէնյարի, Սէնթ Գաբրիէլ, Լաւալ, Վանքուվըր. **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելըս, Սան Ֆրանսիսքօ, «Սասուն» (Ֆրեզնօ), Մոնթրէալ, «Ազատամարտ» (Փասադինա), «Արարատ» (Կլեմէնթ), Օրէնն Բաունթի, «Մասիս» (Սան Ֆեռնանտօ), «Մեան» (Սան Տիէօ), «Արազ» (Ինչընր Էմիլայր), «Անի» (Սանթա Գլարա), «Շանթ» (Բրեսէնթա Հոլիպ), «Սիլիան» (Պըրպէնթ), «Արցախ» (Լաս Վեկաս), Ֆինիքս, «Կարս» (Ուոլնաթ Բրիք) «Չալաք» (Նորթ Հոլիվուդ), «Լոռի» (Սաքրամենթօ), «Կիլիկիա» (Սանթա Բարթոլոմէ), «Հրազք». **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինկթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Նիւ Ըրրօք, Շիքաօ, Ֆիլադելֆիա, Տիքոնթ, Փրովիդընս, Ֆլորիդա, Ալլընի, Շարլոթ, Մերիլենթ Հոլիպ. **Հարաւային Ամերիկա:** Պուէնոս Այրէս, Գորդոպա, Մոնթեւիդէօ. **Աստորիա:** «Անդրանիկ» (Միլանի), «Արաքս» (Մելպոնե), «Կամք» (Միլանի), «Նաւասարդ» (Միլանի), «Արարատ» (Միլանի).

**Արեւելում**


- 1 Հ.Մ.Ը.Մ.ի պատմություն
- 2 Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու պատմություն
- 3 Հ.Մ.Ը.Մ.ի օժանդակությունը Արցախին
- 4 Ուղեղային ցնցումի ուղեգիծ և անմիջական բուժօգնություն
- 5 Fair play Մասնակիցներուն վարուելակերպը
- 6 Բարի գալուստ Երեւան
- 7 Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերու ծանօթացում

Արեւելումի ստաֆին 4 տեսերիզները հարցարաններ ու նիս: Արեւելումի 7 տեսերիզները դիտելը ՊԱՐՏԱԴԻՄ'Է:

# ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 11-ՐԴ ՄԱՐԶԱԽԱԴԵՐՈՒ ՆԱԽԱԳԻՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԺՈՂՈՎԸ ՄԱՐԶԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ՀԵՏ


**Հ**ամա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբին հրաւերով, Շաբաթ, 14 Մայիս 2022-ի երեկոյեան ժամը 5-ին, տեղի ունեցաւ մարզախաղերու նախապատրաստութեան առցանց երկրորդ ժողովը, որուն իրենց մասնակցութիւնը բերին մարզախաղերու մասնակից շրջաններու պատուիրակուծիւններու, ինչպէս նաեւ՝ Թեհրանի «Արարատ» եւ «Նայիրի» միուլթիւններու ներկայացուցիչներ, մար-

զախաղերու պատասխանատուներ եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներ, ընդամենը՝ 46 մասնակիցներ: Առցանց առաջին ժողովը կատարուած էր 29 Յունուար 2022-ին, դարձեալ մեծաթիւ մասնակցութեամբ:



Մարզախաղերու բացումէն 65 օր առաջ գումարուած այս ժողովը առիթ մը եղաւ ծանօթանալու խաղերու հարուստ յայտագիրին եւ անոր առընթեր մշակուած դաստիարակչական ու բարեսիրական ծրագիրներուն: Ժողովին խօսքեր առին մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան, անդամներ՝ քոյր Մարիա Գէորգեան, եղբայրներ Սեւակ Կարապետեան, Ռազմիկ Նալպանտեան եւ Արամ Թովմաս: Անոնք ներկայացուցին մարզախաղերու մասնակիցներուն համար քորոնայի նախագրուչական քայլերը, կիրարկուելիք մարզախաղերը, մասնակից պատուիրակուծիւնները եւ այլն:

Այս առիթով, պատասխանատու քոյրեր եւ եղբայրներ ներկայացուցին մարզախաղերուն քարոզչական աշխատանքները (քոյր Սանտրա Վարդանեան Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.էն եւ եղբ. Վիգէն Աւագեան Կեդրոնական Վարչութեան), որդեգրուած մարզաղաշտերը (եղբ. Արշակ Գէորգեան՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.էն), IT-ի աշխատանքները (եղբայրներ Վիգէն Աբէլ-




եան Արեւմտեան Մ. Նահանգներէն եւ Շանթ Տէմիրճեան Լիբանանէն) եւ «Հրաշք» մարզախաղերը (քոյր Վանիա Մովսէսեան Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.էն):

Ժողովականները ծանօթացան նաեւ մարզիկներու արեւելումի համար պատրաստուած եօթը տեսանիւթերէն երկուքին, որոնք ցուցադրուեցան այս առիթով: «Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերը» եւ «Հ.Մ.Ը.Մ.ի նպաստը Արցախին»:

Ժողովին սկիզբը մասնակիցները ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վահէ Նաճարեան: Եղբայրը յայտնեց, որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերը արդէն իսկ իրականութիւն են: Խաղերուն կազմակերպումը կտրած է երկար ճամբայ եւ աշխատանքները կ'ընթանան լայն թափով: Եղբայրը նշեց, որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը միայն մրցում եւ խաղ չեն, այլ՝ առիթ են, որպէսզի տարբեր շրջաններէ եկած մարզական մեր նոր սերունդի տղաքն ու աղջիկները իրարու ծանօթանան, իրենց հայրենիքին եւ արմատներուն ծանօթանան, որպէսզի խաղերու աւարտին շրջաններ վերադառնան աւելի հայացած:

Աւելի քան երկու ժամուան ժողովին փակումը կատարեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ մարզական յանձնախումբի մօտ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչներէն եղբ. Արմանտ Քիլիճեան: Ան ըսաւ, որ մարզա-




### ԵՐՈՊԱՅԻ ՄԵԿՈՒՍԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՎԿԱՅԵԱԼ ԿԱՐԳԻ ԴԱՍԸՆԹԱՅԲԸ

Եւրոպայի մեկուսի շրջաններուն համար Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպած սկստութեան Վկայեալ կարգի դասընթացը ընթացք առաւ Կիրակի, 22 Մայիսին, առցանց հանդիպումով մը:

Հանդիպումին ներկայ էին Կեդրոնական Վարչութեան արեւնապետ եղբ. Վաչէ Նաճարեան, ինչպէս նաեւ վարչութեան սկստութեան ներկայացուցիչներ եղբ. Ֆէրի Խաժակ Գազանճեան եւ քոյր Թային Օրտոդեան: Յունաստանէն, Երուսաղէմէն, Լոնդրոնէն, Աստրիայէն, Հոլանդիայէն, Ֆրանսայէն եւ Շուէդէն սկստութեան խումբերու 39 խմբապետներ եւ պատասխանատուներ մասնակցեցան հանդիպումին, որուն ընթացքին խօսք առին Կեդրոնական Վարչութեան արեւնապետը, սկստութեան ներկայացուցիչ քոյրն ու եղբայրը: Ապա, կազմակերպիչ յանձնախումբին անունով ծրագիրին մանրամասնութիւնները փոխանցեց քոյր Մենար Պոյաճեան: Յանձնախումբին մաս կը կազմեն նաեւ քոյրեր Աննա Աւագեան եւ Կարինէ Միսեռեան:

Եւրոպայի Վկայեալ կարգի րեսսկան առցանց հանգրուանը պիտի աւարտի Նոյեմբերին, իսկ գործնական բանակումը րետի պիտի ունենայ Մարտ 2023-ին:



խաղերու կազմակերպման աշխատանքները կը կատարուին մեծ խանդավառութեամբ: Ծիշդ է, որ աշխատանքները կը դիմագրաւեն որոշ դժուարութիւններ, բայց դժուարութիւնները անպայման կը յաղթահարուին եւ մենք 20 Յուլիս կը հասնինք ամենայն յաջողութեամբ, շեշտեց ան: Եղբ. Քիլիճեան անդրադարձաւ նաեւ «Հրաշք» մարզախաղերուն, նշելով որ խաղերը իրենց տեսակին մէջ նորութիւն մը պիտի ըլլան Հ.Մ.Ը.Մ.ին եւ Հայաստանին համար:

Ժողովի աւարտին, մասնակիցները իրարու հրաժեշտ տըին 18 Յունիսին դարձեալ հանդիպելու եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու մրցումներուն վիճակաձգութիւնը կատարելու խոստումով:



**Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԵՂԲՕՐ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝**

## **Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐՈՒՄԱՂԷՄԻ, ՀԱՅՖԱՅԻ ԵՒ ԵԱՖԱՅԻ ՄԵԿՈՒՄԻ ՀՐԶԱՆՆԵՐՈՒ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ**

**31** Մարտին 2 Ապրիլ 2022-ը յիշատակելի օրեր եղան Հ.Մ.Ը.Մ.Ի Երուսաղեմի, Հայֆայի եւ Եաֆայի մեկուսի շրջաններուն համար, որոնք պատեհու-թիւնը ունեցան հիւրընկալելու կազմակերպական առաքելու-թեամբ շրջան այցելող, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչու-թեան անդամ եղբ. Ֆէտի Խաթակ Գազանճեանը:

Եղբ. Գազանճեան իր այցելութեան սկսաւ Հայֆայի շրջա-նէն, ուր Հ.Մ.Ը.Մ.Ի մասնաճիւղ մը կը գործէ 1937-էն ի վեր: Մասնաճիւղը վերջին շրջանին կորսնցուցած էր իր երբեմնի աշխուժութիւնը եւ կարիքը ունէր անդամական յատուկ ժո-ղովի՝ նոր թափ տալու համար իր աշխատանքներուն:

Անդամական ընդհանուր ժողովը, Կեդրոնական Վարչու-թեան ներկայացուցիչ եղբոր ներկայութեամբ, տեղի ունեցաւ 31 Մարտի երեկոյեան ժամը 7.30-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Հայֆայի ակումբին մէջ, մասնակցութեամբ 40 քոյր-եղբայրներու: Ժո-ղովին բացումը կատարեց եղբ. Երեմ Լափանճեան, ապա՝ Կեդ-րոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Ֆէտի Խաթակ Գազանճեան խօսք առնելով իր ուրախութիւնը յայտնեց շը-ջան այցելութեան համար: Ան շեշտեց Հ.Մ.Ը.Մ.Ի մարդակեր-տումի եւ հայակերտումի դերը եւ հաստատեց, որ աւելի քան 100-ամեայ այս միութիւնը ամէնէն դժուարին օրերուն իսկ կարողացած է իր առաքելութիւնը շարունակել անխափան՝ ծառայելով հայկական բոլոր գաղութնե-րուն եւ հայ ժողովուրդի բոլոր զաւակ-ներուն, անխափր:

Խօսքերէն ետք, անդամական ընդհա-նուր ժողովի ատենապետ ընտրուեցաւ եղբ. Ճոնի Մուրաճալեան, ատենադպիր՝ եղբ. Սարգիս Շահինեան: Դիւանը ըն-թերցեց ընթացաւարտ վարչութեան նիւ-թաբարոյական տեղեկագիրը: Ապա, ժո-ղովականներ իրենց առաջարկները ներ-կայացուցին յառաջիկայ շրջանի գործու-նէութեան համար:

Այնուհետեւ, ընտրուեցաւ եօթնան-դամ նոր վարչութիւն, որուն մաս կազ-մեցին քոյրեր Անի Շահինեան, Թամար Գաթրեան, Արեւ Շահինեան, եղբայր-







ներ Երեմ Լափաճեան, Մանուէլ Բանոյեան, Յակոբ Մուրաճաբեան եւ Եուհան Բանոյեան:

Աւարտին, փակման խօսքով հանդէս եկաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ֆէտի Խաժակ Գազանճեան եւ նշեց, որ 1944-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Հայֆայի շրջան այցելած է միութեան հիմնադիրներէն եղբ. Հայկ Ճիզմէճեան: Ան ներկայացուցած է դասախօսութիւն մը եւ իր խօսքը եզրափակած է լաբով, թէ «Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադիրները ուրախ են տեսնելով իրենց երազներուն իրականացումը»: Իր կարգին, եղբ. Գազանճեան աւելցուց, որ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը այսօր ուրախ է, որովհետեւ կը տեսնէ միութեան երազներուն իրականացման շարունակութիւնը տարիներ ետք:

Փակման խօսքէն ետք, Հ.Մ.Ը.Մ-ի Հայֆայի մասնաճիւղին կողմէ յուշանուէր մը փոխանցուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին:

**ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՅ. ԺՈՂՈՎԸ**

Յաջորդ օր, Ուրբաթ, 1 Ապրիլին, այս անգամ Հ.Մ.Ը.Մ-ի Երուսաղէմի մասնաճիւղի ակումբին մէջ, տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի տեղւոյն մասնաճիւղին անդամական 77-րդ ընդհանուր ժողովը, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Ֆէտի Խաժակ Գազանճեանի եւ Հ.Մ.Ը.Մ-ական 60 քոյր-եղբայրներու: Հ.Մ.Ը.Մ-ի Երուսաղէմի մասնաճիւղը հիմնուած է 1935-ին:

Անդամական ընդհանուր ժողովի զիւանի անդամներ ընտրուեցան եղբ. Յակոբ Սեւան՝ ատենապետ եւ քոյր Անժելա Տիքպիբեան՝ ատենադպիր: Ընթացաւարտ վարչութեան նիւթաբարոյական տեղեկագիրը ներկայացուցին քոյր Սեւանա Հէքիմեան, եղբայրներ Նարեկ Սեւան եւ Յարութ Պաղամեան: Տեղի ունեցաւ գործունէութեան քննարկում եւ համապատասխան գնահատականի բանաձեւում:

Իր վերջին օրակարգով, ժողովը ընտրեց եօթը հոգիներ նոր վարչութիւն՝ հետեւեալ եղբայրներով.- Յարութ Պաղամեան, Զոհրապ Տէմիրճեան, Պետրոս Պաղամեան, Յակոբ Սեւազեան, Զարեհ Նալպանտեան, Յովսէփ Եագուպեան եւ Ճիւան Օհաննէսեան:

Ժողովին իր սրտի խօսքը փոխանցեց Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ֆէտի Խաժակ Գազանճեան եւ խրախուսեց ներկաները կառչած մնալու միութեանական արժէքներու եւ ազգային-բարոյական սկզբունքներու, որոնք Հ.Մ.Ը.Մ-ականը պիտի գատորոշեն ուրիշներէ:

Անդամական ընդհանուր ժողովը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

**ԵԱՅԱՅԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՅ. ԺՈՂՈՎԸ**

Անդամական ընդհանուր ժողովներու շարքը եզրափակուեցաւ Շաբաթ, 2 Ապրիլին, Եաֆայի Ս. Նիկողայոս վանքին «Հայկաչէն» կեդրոնին մէջ գումարուած՝ Հ.Մ.Ը.Մ-ի Եաֆայի մասնաճիւղին ընդհանուր ժողովով: Հ.Մ.Ը.Մ-ի Եաֆայի մասնաճիւղը, Հայֆայի մասնաճիւղին նման, հիմնուած է 1937-ին, սակայն ատենէ մը ի վեր ան կը պարզէր գրեթէ կազմալոյծ վիճակ: Անդամական ընդհանուր ժողովը ծառայեց մասնաճիւղը վերականգնելու եւ նոր թափով աշխատանքի մղելու:

Անդամական ընդհանուր ժողովին բացումը կատարեց եւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը ողջունեց եղբ. Մեսրոպ Ղուկասեան: Ան նշեց, որ միութեան համագաղութային կառույցի ստեղծումէն՝ 1974-էն ի վեր առաջին անգամն է, որ Կեդրոնական Վարչութեան անդամ մը ներկայ կ'ըլլայ մասնաճիւղին ընդհանուր ժողովին:





Ժողովին ընթացաւարտ վարչութիւնը բերանացի տեղեկագիր մը ներկայացուց իր գործունէութեան մասին, նշելով թէ վերջին շրջանին մասնաճիւղին աշխատանքները կանգ առած են նախ՝ քորոնայի համաճարակին ու ապա՝ վանքին վերանորոգութեան պատճառով:

Հուսկ, կատարուեցան յառաջիկայ մէկ տարուան գործունէութեան վերաբերող առաջարկներ, որոնցմէ ետք ընտրուեցաւ եօթը հոգինոց նոր վարչութիւն՝ բաղկացած հետեւեալ



եղբայրներէն.- Մերոպ Ղուկասեան, Յակոբ Մազաբեան, Արմէն Վանայեան, Գէորգ Ղուկասեան, Փօլ Խինաուրի, Կարո Պաղպուտեան եւ Յակոբ Վանայեան:

Փակման խօսքով հանդէս եկաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Ֆէտի Խաթակ Գազանճեան եւ նշեց Հ.Մ.Ը.Մ.ի մարմնակիրժական, դաստիարակչական, սերնդակերտ միութիւն մը ըլլալու հանգամանքը, դիտել տալով որ պայմանները կրնան փոփոխուիլ, սակայն Հ.Մ.Ը.Մ.ի դերն ու առաքելութիւնը կը մնան անփոփոխ՝ մարդակերտում եւ հայակերտում ամէն տեղ եւ ամէն ժամանակ:

**ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՒ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ**

Անդամական ընդհանուր ժողովներու առընթեր, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ֆէտի Խաթակ Գազանճեան շարք մը հանդիպումներ ունեցաւ իր այցելած քաղաքներուն մէջ: Այդ հանդիպումներէն զլիաւորը կատարուեցաւ Ուրբաթ, 1 Ապրիլի առաւօտեան, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Նուրհան Արք. Մանուկեանի հետ: Հանդիպումին ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Երուսաղէմի վարչութեան եւ Հ.Յ.Դ. տեղւոյն կոմիտէի նախագահներ: Հանդիպումը անցաւ սիրալիր եւ ջերմ մթնոլորտի մէջ:

Երուսաղէմի մէջ, եղբ. Ֆէտի Խաթակ Գազանճեան այցելեց երկրի հայկական կրթական միակ հաստատութիւնը՝ Սրբոց Թարգմանչաց վարժարանը, ուր հանդիպում մը ունեցաւ տեսուչ Արսէն Քհնյ. Աբրահամեանի հետ: Ան հանդիպումներ ունեցաւ նաեւ շրջանի Հ.Յ.Դ. կոմիտէին եւ ՀՕՄ-ի վարչութեան հետ:

Հայֆայի մէջ, եղբ. Գազանճեան տեսակցեցաւ Ս. Եղիա եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տիրայր Քհնյ. Յովակիմեանի հետ, իսկ Եաֆայի մէջ՝ Ս. Նիկողայոս վանքի տեսուչ Գէորգ Աբղ. Հայրապետեանի հետ:

Եղբայրը առիթը ունեցաւ այցելելու նաեւ Քրիստոսի Ս. Յարութեան տաճարը, Ս. Յակոբեանց եկեղեցին եւ Բեթղէհէմի Ս. Ծննդեան այրը:



## Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ՔՈՅՐ ԹԱԼԻՆ ՕՐՏՈՂՎԵԱՆԻ ՅՈՐԴԱՆԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

**26**<sup>-29</sup> Մայիս 2022-ին, աշխատանքային այցելութեամբ մը Յորդանան այցելեց Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ քոյր Թայլին Օրտողլեան: Ան ներկայ գտնուեցաւ Հայաստանի անկախութեան 104-ամեակին առիթով Հ.Մ.Ը.Մ.Ի Ամմանի մեկուսի շրջանի կազմակերպած տօնակատարութեան եւ հանդիպումներ ունեցաւ շրջանի վարչութեան եւ խմբապետական կազմին հետ:

Անկախութեան 104-ամեակը ճաշկերոյթով մը նշուեցաւ Հինգշաբթի, 26 Մայիս 2022-ի երեկոյեան: Քոյր Օրտողլեան փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան խօսքը:

Ամման այցելութեան ընթացքին քոյր Օրտողլեան հանդիպում մը ունեցաւ մեկուսի շրջանի նորընտիր վարչութեան հետ: Հանդիպումին քննարկուեցան շրջանը յուզող հարցերը, դժուարութիւնները եւ զանոնք յաղթահարելու կարելիութիւնները: Քոյր Օրտողլեան վարչութեան փոխանցեց, որ Կեդրոնական Վարչութիւնը պատրաստ է ամէն ձեւով օժանդակելու,



դակելու, որպէսզի շրջանը վերաշխուժանայ: Ան նաեւ թելադրեց, որ մասնակցին Կեդրոնական Վարչութեան բոլոր աշխատանքներուն, որոնք իրենց կարգին կը նպաստեն շրջանին եւ անոր ծրագիրներուն:

Խմբապետական կազմին հետ հանդիպումին ընթացքին արծարծուեցան սկաուտութեան առնչուող հարցեր՝ շրջանի սկաուտներու թիւը, տարիքային բաժանումները, աստիճանաւորական քատրերու եւ խմբապետներու պատրաստութիւնը, սկաուտական յայտագիրները, նոր անդամներ ներգրաւելու կարելիութիւններն ու միջոցները:





# ԵՐԲ ՀԱՅ ԱԶԳԸ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՒՆ ԱՊԱԲԻՆԻ, ԱՆԿԱՐԵԼԻՆ ԿԱՐԵԼԻ ԿԸ ԴԱՐՁՆԷ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՎԱԶԷՆԱՃԱՐԵԱՆԻ ԴԱՏԳԱՄԸ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՄԱՅԻՍԵԱՆ ՏՈՂԱՆՑՔԻՆ)

**Ե**րկու տարուան ակամայ ընդմիջումէ ետք, դարձեալ հաւաքուած ենք բոլորս՝ վայելելու համար մեր սիրելի միութեան՝ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Լիբանանի շրջանի այսօրուան տօնակատարութիւնը, Մայիսեան տողանցքը, նշելու համար՝ 1918-ի Սարգարապատեան յաղթանակին, որ պայծառ փարոսը հանդիսացաւ մեր պատմութեան յաջորդող յաղթանակներուն եւ բարոյական կողմնացոյցը ապագայի մեր երթին:

Հ.Մ.Ը.Մ.ի անցեալ հարիւրամեակին կազմակերպած փառատօններուն նման, երկրորդ 100-ամեակի սկիզբը կատարող Մայիսեան այս հանդիսութիւնը եւս կը մնայ խանդավառութեան, յոյսի աղբիւր մը բոլորիս համար:

Արդարեւ, Մայիս 28-ը եղաւ ու կը մնայ մեր ազգին վերածնունդի օրը եւ ուժի աղբիւրը:

Պատմական զուգադիպութեամբ է, որ Հայ ազգի ծոցէն ծնած, Հայ ազգի ծառայութեան նուիրուած այս միութիւնը եւս իր երթը սկսաւ 1918-ին եւ իր անփոխարինելի տեղը ունեցաւ մեր ժողովուրդի կեանքին մէջ: Հ.Մ.Ը.Մ.ը այսպիսով դարձաւ Մայիս 28-ի արժէքներուն դրօշակիրը եւ Եռագոյնին պաշտպանը:

Հ.Մ.Ը.Մ.ը ամէն տարի տօնելով Մայիս 28-ի փառաւոր անցեալը, կը տօնէ այդ փառաւոր անցեալին արժէքները, որ պէտք է մենք կարենանք արժեւորել մեր ներկան, առաջնորդուելու համար դէպի Հայ ազգի աւելի լաւ ապագայ:



Մայիս 28-ը ո՛չ միայն հպարտալի թուական մըն է յաղթանակի իմաստով, այլեւ՝ փաստ մըն է, թէ հայը կրնայ իր ձեռքով կերտել հանրապետութիւն, ինքնուրոյն ազգային նկարագիր եւ իր ազատ կամքով պարտադրել հայօրէն ապրելու իր իրաւունքը:

Մայիս 28-ը եղաւ Հայ ազգի դարաւոր երազին իրականացումը, նոյնիսկ եթէ կարճ տեսողութեամբ, բայց ան պիտի մնայ ներշնչման աղբիւրը մեր բոլոր գոյապայքարներուն, երկրորդ հանրապետութեան ստեղծումին թէ Արցախեան պահանջատիրութեան մեր յաջորդական ճակատամարտներուն:

Յարգելի՛ ներկաներ, Կար ժամանակ, երբ Մայիս 28 տօնելը շատերու համար անհասկնալի էր եւ Հ.Մ.Ը.Մ.ն էր Մայիս 28-ին եւ Եռագոյն դրօշակին պահապանը: Ան էր, որ տեւաբար յիշեցուց մեր նախորդներուն կտակը, պատգամը եւ յարատեւ պայքարելու կամքը՝ մինչեւ որ վրայ հասաւ Հայաստանի վերանկախութիւնը:

1991-ի վերանկախութենէն ետք, կարծէք Մայիս 28-ը կորսնցուց իր երբեմնի իմաստն ու փայլքը շատ մը շրջանակներու քով: Ան նկատուեցաւ սովորական ազգային տօն՝ անարժան փառաշուք տողանցքներով նշուելու:

Հ.Մ.Ը.Մ.ը սակայն շարունակեց ջահը բարձր պահել, հաւատարմով իր պատգամին, ճիգերը չխնայելով եւ առանց յանձ-



նուեղու այդ կացութեան, շարունակեց վառ պահել Մայիս 28-ի գաղափարը՝ արժանավայել կերպով կատարելով անկախութեան տօնակատարութիւնը, Մայիս 28-ի գաղափարին ընդմէջէն իր ծնունդը նշելով յաջորդաբար երկու տարի, 1500-է աւելի թիւով տողանցողներով, Երեւանի «Հանրապետութեան» հրապարակին վրայ:

**Յարգելիներ,**

Մայիսեան այս տողանցքը կը կատարուի Լիբանանի քաղաքական, ընկերատնտեսական բարդ պայմաններուն մէջ, ուր հակայական ջանք եւ ճիգ ի գործ կը դնէ միութեան Լիբանանի շրջանը՝ մեր պատանի-երիտասարդներուն հետ ըլլալու, անոնց մարմնակրթական առողջ դաստիարակութիւն տալու եւ իբրեւ տիպար քաղաքացիներ եւ առաքինի հայեր դաստիարակելու համար:

Մայիսեան այս տողանցքը վկայ, թէ հակառակ երկրի չափազանց ծանր պայմաններուն, ինչքան գործ կը կատարուի, ինչքան նուիրում եւ զոհողութիւն կայ այստեղ՝ Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերը կանգուն պահելու, մեր ժողովուրդին ազգային խանդավառութիւն եւ հպարտութիւն տալու համար: Բոլորին վարձքը կատար:

Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը այսօր, աւելի քան երբեք, Լիբանանի շրջանի կողքին է եւ ուրախութեամբ կը հետեւի անոր աշխատանքներուն՝ միշտ պատրաստ օժանդակութեան ձեռք երկարելու անոր, որովհետեւ ինչպէս բոլորին, նաեւ Հ.Մ.Ը.Մ-ին համար Լիբանանը եղած է ու կը մնայ Սփիւռքի կեդրոնական գաղութը՝ իր պատմական դերակատարութեամբ, ներկայ եւ ապագայ յանձնառութիւններով:

Այսպէս, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի շրջանը կը շարունակէ ժո-

**Մայիս 28-ը ո՛չ միայն հպարտալի քուսկան մըն է յաղթանակի իմաստով, այլև՛ փաստ մըն է, թէ հայը կրնայ իր շեռքով կերպել հանրապետութիւն, ինքնուրոյն ազգային նկարագիր եւ իր ազատ կամքով պարտադրել հայօրէն ապրելու իր իրաւունքը:**

ղովուրդի ծառայութեան ջահը բարձր պահել՝ քաջ գիտնալով, որ Մայիս 28-ի գաղափարը Ֆիզիքական հայրենիքէն անդին է եւ իրեն համար «Զարթիւր լաօ» լոկ կարգախօս չէ, այլ՝ Հայաստանի եւ հայութեան փրկութեան տեսական աշխատանք է, պայքար է ու կամք: Վկայ Արցախեան 44-օրեայ պատերազմը, ուր միութիւնը իր բոլոր կարողութիւնները ի սպաս դրաւ պատերազմին եւ անոր հետեւանքներուն դարձանումին: Յարգանքով պէտք է խոնարհիլ յիշատակին դիմաց այն 10 Հ.Մ.Ը.Մ-ականներուն, որոնք նահատակուեցան 44-օրեայ պատերազմի ճակատներուն վրայ: Փա՛ռք իրենց յիշատակին:

Այսօր Հ.Մ.Ը.Մ- կը շարունակէ կատարել իր առաքելութիւնը նոյն թափով, հաւատքով եւ վճռակամութեամբ՝ պահպանելով միութեան գաղափարախօսութիւնը, կրթելով եւ ստեղծելով հոգեկան հայրենիք, առիթը ընծայելով մեր հայրենակիցներուն ապրելու իբրեւ հայ, հայրենիքէն հեռու, բայց հայրենիքը միշտ պահելով իրենց սրտին մէջ, Մայիս 28-ի պատգամով առաջնորդուելով:

Առանց ազգային միացեալ գիտակցութեան եւ ամբողջական Հայաստանի տեսլականին, առանց միացեալ ու կարգապահ նուիրեալ շարքերուն, առանց Ֆիզիքայէս ու հոգեպէս տոկուն երիտասարդութեան կարելի չէ հօր ու բարգաւաճ ամբողջական Հայաստան ունենալ, կարելի չէ վերականգնող Արցախ ունենալ:

Այս հաստատ համոզումներով կ'ողջունենք Մայիսեան այս տողանցքը, խոստանալով միշտ բարձր պահել այն դրօշը, որ մեզի աւանդ ձգուեցաւ:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան անունով կը շնորհակարանք Հայաստանի անկախութեան 104-ամեակը:

Մեր ազգի պատմութեան մէջ 28 Մայիսը ապացոյցը եղաւ այն իրողութեան, որ երբ հայ ազգը իր սեփական ուժերուն ապաւինի, անկարելի կարելի կը դարձնէ:

Կեցցէ՛ Մայիս 28-ը, կեցցէ՛ հայ ժողովուրդը, Եւ կեցցէ՛ք դո՛ւք, որ այս տօնակատարութեան ձեր մասնակցութեամբ վերարժեւորեցիք անկախութեան խորհուրդը եւ ազատ, անկախ ու միացեալ Հայաստանի մեր յաւերժական նպատակը:

# ԵՐԲ ՀԵՌՆԿԱՐ ՈՒ ՏԵՍԻԼՔ ԿԱՅ, ԾՐԱԳՐՈՒՄ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾՈՒԹԻՒՆ ԿԱՅ, ԳՈՐԾ ԵՒ ԱՐԴԻՒՆՔ ԱՆՊԱՅՄԱՆ ԿԱՅ

**25**<sup>-27</sup> Մայիս 2022-ին, Երևանի մէջ տեղի ունեցաւ Համազգայինի Թ. Պարզամատրական Ժողովը, որուն հիւրաբար իր մասնակցութիւնը բերաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը, յանձինն եղբ. Վիգէն Աւագանի:

Պարզամատրական Ժողովի բացման նիստին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը հանդէս եկաւ ողջոյնի խօսքով մը, զոր կը ներկայացնենք ստորև:

Յարգելի հիւրեր,  
Միւրելի Համազգայնականներ,  
Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան մեծ ընտանիքին անունով ուրախութիւնն ու պարտականութիւնը ունիմ ողջունելու մեր քոյր միութեան՝ Համազգայինի Թ. Պարզամատրական Ժողովը եւ յաջողութիւն մաղթելու անոր աշխատանքներուն:

Ճակատագրակից երկու միութիւններ՝ Հ.Մ.Ը.Մ. եւ Համազգային կը գտնուին հայ ժողովուրդի ծառայութեան նոյն պատնէշին վրայ՝ հայակերտման եւ հայապահպանման նոյն առաջադրանքներով: Միջոցներ կը փոխուին, սակայն նպատակը կը մնայ նոյնը՝ ի՛նչպէս հայը հայ պահել գաղութներու մէջ, ի՛նչպէս հայկական արժէքներու կրողն ու տարածիչը ըլլալ աշխարհի չորս ծագերուն, հոն ուր հայութիւն կայ, համախումբ եւ կազմակերպ ապրելու կարելիութիւն կայ:

Կար ժամանակ, երբ միութենական գործը յատուկ գրաւչութիւն մը ունէր: Կամաւոր աշխատանքի տրամադրութիւնները բարձր էին, մեր ժողովուրդին մեծ մասը Հայաստանամերձ գաղութներու մէջ կ'ապրէր, հայախօսութիւնը լայն տարածում ունէր, երիտասարդութիւնը ստուար շարքերով մեր շուրջն էր, մեր մէջն էր: Այսօր, ընդունինք, որ պայմանները փոխուած են, մարտահրաւէրները աւելցած են, իսկ գանոնք դիմագրաւելու կարելիութիւնները անցեալին նման չեն գոհացներ բոլորս:

Համազգային եւ Հ.Մ.Ը.Մ. ունին տասնամեակներու վաստակ եւ փորձառութիւն՝ ամէն տեսակի դժուարութեան լուծում գտնելու, տեսաբար երիտասարդ տարրեր ներգրաւելու, միշտ իրարու հետ ըլլալու, իրարմով զօրանալու, ի հարկին մէկը միւսը փոխարինելու՝ հոն ուր կարելիութիւն չկայ երկուքը կողք-կողքի գործելու: Համազգային, Հ.Մ.Ը.Մ. եւ ՀՕՄ կոչուած են միշտ միասին ըլլալու, իրարու հետ գործակցելու, որպէսզի մեր դժուարութիւնները օրէ օր նուազին եւ



մեր յաջողութիւնները աւելնան:  
Այսօր նոր իրականութիւններ կան մեր կեանքին մէջ. 44-օրեայ պատերազմի հետեւանքներու յաղթահարման պարտաւորութիւն, ազգային ինքնութեան եւ դիմագիծի լուրջ հարցեր, ցանցային ընկերութեան պարտադրած կեանքի ու աշխատանքի նոր ոճեր, հայ դպրոցի եւ լեզուի նահանջ, կազմակերպ եւ կամաւոր աշխատանքի պակաս, մշակոյթի եւ մարմնակրթութեան կրպակներու տարածման երեւոյթ, քիչ մը ամէն տեղ որակի եւ չափանիշներու անկում եւ տակաւին շարքը կարելի է երկարել:

Այս բոլորը, անկասկած, բոլորս կը մատնեն, պէ՛տք է մատնեն զօրաշարժի, որպէսզի կազմակերպական մեր մեքենաներու առաւելագոյն լարումով ու արդիականացումով կարենանք միշտ ըլլալ մեր ժողովուրդի ակնկալութիւններու մակարդակին, արժանի՝ անոր վստահութեան եւ զօրակցութեան:

Յարգելիներ,  
Միութիւններու գոյութիւնը չափանիշ է ժողովուրդներու ինքնագիտակցութեան, եւ միութենականներու թիւը կարելի է չափանիշ նկատել հաւաքականութիւն կազմող անհատներու քաղաքակրթական եւ քաղաքացիական զարգացման աստիճանին:

Միութիւն հասկացողութիւնը կ'ենթադրէ կազմակերպութեան թույլութիւն, իրարու շղթայուած հազարաւոր անդամներ, յանձնախումբեր, մասնաճիւղեր, վարչութիւններ եւ միաւորներ, որոնք ունին իրենց առաքելութիւնը, առաջադրանքները, տարիներով հետապնդուած, նկարագրի դարձած, հաւաքական կամքի արտայայտութեան վերածուած:

Ինքնագիտակցութեան տէր ժողովուրդի մը համար անխուսափելի է տեսակաւոր միութիւններու ներկայութիւնը նոյն միջավայրին մէջ: Ու եթէ կարգ մը ժողովուրդներ քիչ թիւով միութիւններ ունին, պատճառը այն է, որ ժամանակի բնական հոլովոյթով եւ ինքնասրբագրութեամբ այդ միութիւնները կարողացած են իրենց ժողովուրդի տարբեր պահանջները բաւարարել: Մենք, տակաւին շատ հեռու ենք այդ իրականութենէն: Մեր պարագային, մեր ժողովուրդի աշխատանքի դաշտերը շատ են, կարիքները՝ բազմազան. աւանդական Սփիւռք, նախկին Խորհրդային երկիրներ, ահաւոր տագնապներու մէջ գալարող Հայաստան, վիրաւոր Արցախ եւ դեռ՝ հայութեան գիրկը վերադառնալու պատրաստուող թրքացած կամ իսլամացած զանգուածներ:



Պահանջուածը մէկ ընդհանուր ռազմավարութիւն է եւ համակարգուած ու դերերու յստակ բաժանումով կատարուելիք աշխատանք: Երբ հեռանկար ու տեսիլք կայ, երբ ծրագրում եւ կազմակերպւածութիւն կայ, գործակցութիւն եւ աշխատանք կայ, գործ եւ արդիւնք անպայման կայ:

Այս դրական տրամադրութիւններով կ'ողջունենք Համազգայինի Պատգամաւորական ժողովը եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ աշխարհասփիւռ 111 մասնաճիւղերուն ու միաւորներուն անունով նորանոր վերելք ու յաջողութիւն կը մաղթենք մեր քոյր միութեան աշխատանքներուն եւ ապագայի ծրագիրներուն:

Շնորհակալութիւն:

# Հ.Մ.Ը.Մ.Ը ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՀՈՒՆՉՆ ՈՒ ՈԳԻՆ

Սերոբ Սահակեան  
ԵՐՈՒՍԱԴԵՍ

**Գ**ամիչլի ըսես, հաւանաբար աչքիդ պիտի պատկերանայ Սուրբոյ հիւսիսը մոռցուած աւանդ: Գամիչլի ըսես, հաւանաբար միտքդ պիտի երթայ քիւրտին բախտ ինկած Տահէչի փորձանքին: Գամիչլի ըսես, հաւանաբար դուն քեզի պիտի ըսես, վախ եմ ըսեր:

Բայց եւ այնպէս, երբ Սուրբ Զատիկուան խանդավառութիւնը տեսնես:

Երբ տօնական միջոցառում ըսես, այս ողջ գաղութին իրարանցումին վկան ես:

Երբ կը տեսնես ՄԱՆԱԻԱՆԴ Հ.Մ.Ը.Մ.ի հոգեւորագ դերակատարութիւնը ու ներկայութիւնը այս օրը:

Երբ կը տեսնես այդ գայլիկ-



կառուներուն կառավարումը, ամէն մէկը ձեռքին երաժշտական գործիք մը:

Երբ կը տեսնես տիրապետումը հրապարակին, մինչեւ եկեղեցոյ ներքնասրահը, չըսելու համար խորանը:

Կը համոզուիս, որ ինչ որ շունչ, Հ.Մ.Ը.Մ. անուն, իր ոգեշունչ ներգործումը առատօրէն կը շուրջէ այդտեղ:

Կը համոզուիս եւ չես կրնար վրտաս չըլլալ, որ եթէ Հ.Մ.Ը.Մ.ը չըլլար, ամէն համայնք, իբրեւ իր ապագայ սերունդներու երաշխաւորութիւն, անպայման որ պիտի ստեղծէր զայն:

Շնորհաւորանքներս Գամիչլիի Հ.Մ.Ը.Մ.ին, որ միայն կրնայ պարծանքը ըլլալ իր շրջանին թէ ընդհանրապէս Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին:



# Հ.Մ.Ը.Մ.Ը ՆԱԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՎԵՐԸՆՁԻՒՂՄԱՆ ԿՈԹՈՂ



Սերոբ Սահակեան  
ԵՐՈՒՍԱՂԵՍ

**Հ**ակառակ անոր, որ աւելի քան քառասնամեայ ծառայութիւն ունեցած եմ Հ.Մ.Ը.Մ.Ի աշխատանքային անմիջական շրջանակին մէջ:

Հակառակ անոր, որ ժամանակ մըն ալ, իբրեւ մարզիկ թէ հանդիսատես, գտնուած եմ Փոլիթպոլի դաշտերուն մէջ:

Բայց եւ այնպէս, երբեք չեմ հասկացած ու չեմ իսկ հարցուցած, թէ մրցումի մը արդիւնքը ի՞նչ եղած է:

Չեմ իսկ պրպտած, թէ խնդրոյ առարկայ խաղը, իբրեւ անմիջական վիճակագրական արդիւնք, ի՞նչ պատկեր ունեցած է:

Շատերու համար թերեւս այդ բոլորը շատ բան նշանակած են, ինծի համար սակայն, ցուցատախտակին վրայ երեւցած էն աւելին երբեք չեն ըսած:

Հետեւաբար, այս պահուս ինծի համար ուրախանալի է, բայց անպայման հետաքրքրական չէ, թէ Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Պոլրճ Համուտի Փոլիթսալի խումբը իրապէս ի՞նչ աստիճանաւորում ունի:

Շատ ալ հետաքրքրական չէ, եթէ երկրորդ թէ երրորդ տեղը գրաւած է:

Շատ ալ հետաքրքրական չէ, թէ յաջորդ խաղին որո՞ւ ղէմ պիտի ճակատի:

Արդարեւ, ինծի հետաքրքրողը խաղին ընթացքը, մարզիկին թէ հանդիսատեսին մօտ ստեղծուած ոգեւորութիւնը,

դաշտին վրայ սերունդներու գիրկընդիսառնումը, կարգապահութիւնը, վեհանձն ու մաքուր խաղը, փոխադարձ հանդուրժողութիւնը, վերջապէս, դաշտէն ներս թէ դուրս հայուն հպարտանքը եւ ինքնասիրութիւնը շոյող Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկի դրսեւորումներն են:

Հետեւաբար ըսեմ:

Եթէ հպարտ եմ, հպարտ եմ իմ մարզիկով:

Հպարտ եմ անոր բացառիկ տեսակով:

Հպարտ ու երջանիկ եմ նոյն մասնաճիւղի յաղթանակէն աւելի, անոր երիտասարդութեան շարքերէն ցոլացող ոգեւորութեամբ ու խանդով:

Հպարտ եմ մանաւանդ այսպիսի նեղ օրերուն, այսպիսի դժուար պահերուն, մեր երիտասարդներու ոգեւորութեամբ, խանդավառութեամբ, վաղուան յաղթանակներու նկատմամբ լաւատեսութեամբ եւ մասամբ նորին:

Վերջապէս, հպարտ եմ այնպիսներով, որոնք կը խօսին այդ խաղին արդիւնքէն շատ վեր ու հեռու յաղթանակներու եւ ձեռքբերումներու մասին:

Ախոյեանութիւն մը աւելի, ախոյեանութիւն մը նուազ, բան չի նշանակեր 104-ամեայ միութեան մը համար:

Այնուամենայնիւ, սրտաբուխ շնորհաւորութիւններս բոլորին, առանց բացառութեան:

«Յառա՛ջ նահատակ, ցեղի անմահներ»:

## ԻՒՐԱՅԱՏՈՒԿ ԵՒ ՀՊԱՐՏ

**Ա**յո՛, Դամասկոսի, Հալէպի, Գամիշլիի Հ.Մ.Ը.Մ.Ի սկառուտական տողանցքները միշտ ալ իւրայատուկ զգացումներ պիտի յառաջացնեն:

Միշտ ալ տարբեր հպարտանքով մը պիտի ապրեցնեն քեզ:

Միշտ ալ քեզի պիտի տանին փոթորկոտ հեռուները, այնուհետեւ, աւելի գօտեպնդուած վերադարձնեն քեզ:

Այդպիսին է պարզ իրողութիւնը, ու ոչ մէկը այս գծով տարբեր բան կրնայ ըսել:

Դամասկոսին թէ սուրիական հայրենիքին անցեալին

աղերսուածը այդ զգացումներէն տարբեր չի կրնար ըլլալ:

Թէ լաւ նայեցէ՛ք այս տղոց հպարտ տողանցքին ու ղէմքերուն՝ այս հողին նկատմամբ, ու փոխադարձ սիրոյ եւ կարեկցութեան հարազատ հայելիէն տարբեր բան չէք կրնար տեսնել այնտեղ:

Եւ այդպէս ալ է:

Քանզի գիտցողը գիտէ, թէ մինչեւ այս պահը հայր այս հողին որքա՞ն է տուեր ու նոյն հողէն որքա՞ն է ստացեր:

Քանզի գիտցողը գիտէ, թէ այս հողը հայուն համար ի՞նչ



նշանակած է ու հայն ալ իր կարգին նոյն հողին որքա՞ն կապ-  
ւած է:

Քանզի գիտցողը գիտէ, թէ երբ սուրիական հայրենիք կ'ը-  
սեն, ան ինչքան նշանակած է հայուն եւ հայր որքա՞ն նշանա-  
կած է սուրիական այդ հայրենիքին:

Արդարեւ, ճիշդ է, որ շատ բան անցած է այս երկրի գլխէն  
թէ հայու գլխէն:

Այնուհետեւ, այս հողն է, որ իբրեւ գործադուր հայր ըն-  
դունած է գաղթականի ցուպը ձեռքին իւրաքանչիւր հայ:

Ու այս հողին վրայ է, որ հայը առաջին առիթով գաղթա-

կանի ցուպը մէկ կողմ չպրտած եւ հող գտած է ի սպաս իր ար-  
ժանապատիւ հացին:

Իրապէս, ես ալ չեմ գիտեր հայրենիքէն դուրս այլ տեղ,  
հայր ո՞ր այնքան տէր կը զգայ կամ զգացած է իր կոխած հո-  
ղին վրայ՝ որքան Սուրիոյ մէջ:

Վերջապէս, Սուրիան իրապէս ալ հայրենիք է, յաճախ նա-  
եւ հայու արեամբ շողախուած:

Պարզ է չէ, թէ ինչո՞ւ Հ.Մ.Ը.Մ.ով երանգաւորուած հայու  
Եռագոյնը կը փողփողէ հոն՝ ու այսքան իւրայատուկ եւ  
հպարտ:

# ԱՅՍ ՕՐԵՐՈՒ ԱՅՍ ՆՈՐՈՒԹԻՒՆԸ՝ ՀԻԱՆԱԼԻՆ

**Հ**Մ.Ը.Մ.ի Ամմանի մեկուսի շրջանին դիմատետրի  
էջը կը տեղեկագրէ իր անդամական վերջին ընդհա-  
նուր ժողովին կայացման մասին:

Կը տեղեկագրէ իր նորընտիր վարչական կազմին մասին:

Կը տեղեկագրէ ընդհանրապէս աշխատանքային վերանո-  
րոգ ու յուսադրիչ թափի մը մասին:

Անկեղծ ըսած՝ Ամմանի Հ.Մ.Ը.Մ.ը միշտ ալ իր իւրայա-  
տուկ տեղը ունեցած է իւրաքանչիւր սաղիմահայ Հ.Մ.Ը.Մ.ա-  
կանի մօտ:

Միշտ ալ Ամմանի-Երուսաղէմի սիրտերը բաբախած են  
իրարու զուգահեռ:

Միշտ ալ Ամմանի յաջողութիւնը անմիջական դրական  
տրամադրութիւններ հրահրած է Երուսաղէմի մասնաճիւղին  
մօտ:

Արդեօք պատճառը աշխարհագրական մերձաւորութի՞ւնն  
է:

Արդեօք պատճառը ժամանակ մը, թերեւս մինչեւ օրս,  
նոյն թագաւորին նկատմամբ հաւատարմութի՞ւնն է:

Թերեւս Ամմանի առաքելական համայնքին Երուսաղէմի  
աթոռին անմիջական ենթակայութեան փաստն է:

Անկեղծ ըսած, չեմ գիտեր:

Ինչ որ գիտեմ, Ամմանը իմ կը նկատեմ:

Ամմանի Հ.Մ.Ը.Մ.ը անմիջական իմ տարածքս կը տեսնեմ:

Անոր յաջողութիւնն ու ձախողութիւնը ուղղակի կը բաժ-  
նեմ:

Կը բաժնեմ նաեւ անոր համար, որ գէթ առիթով մը, երբ  
Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ը ինկած էր շինարարական բաւական  
լուրջ պարտքերու տակ ու իր սրահներէն մէկուն առաստաղը  
փաստօրէն մնացած էր անծածկ, Ամմանի Հ.Մ.Ը.Մ.ի հան-  
գուցեալ ատենապետ եղբ. Ճորճ Տագէսեանն էր, որ անձնա-  
պէս հասած էր անմիջական օգնութեան եւ իր վրայ վերցու-  
ցած էր այդ շինարարութեան ամբողջ ծախսը եւ մնացեալ  
պարտքը:

Այդ մարդուն մեծահոգութեան թէ միութեանականի



բարձր գիտակցութեան մասին մինչ օրս կը խօսուի:

Վերջապէս, այսօր երբ կը տեսնեմ Ամմանի Հ.Մ.Ը.Մ.ի աշ-  
խոյժ, աշխատանքի տրամադրուած դէմքերը, որոնցմէ քանի  
մը հատին աւելի քան ծանօթ եմ, սիրտս կը լեցուի աննախըն-  
թաց ուրախութեամբ:

Ու կը լեցուի առաւել ուրախութեամբ, երբ Հ.Յ.Գ.ի շունչն  
ու ոգին դեռ եւս կը սաւառնին այդ յարկին տակ ու ինծի կը  
տանին հեռո՞ւն:

Հեռո՞ւն, 2006-ի Սեպտեմբերի իւրայատուկ օր մը, Ռեալ-  
Փա, Յորդանան տեղի ունեցած Հ.Մ.Ը.Մ.ի Միջին Արեւելքի  
վարչութիւններու միջ-դիւանական առաջին խորհրդաժողո-  
վին, որ կը վայելէր նախագահութիւնը Կեդրոնական Վարչու-  
թեան օրուան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի: Այն  
մարդուն, որ ազգային հազար յանձնառութիւններու հասցէ  
էր, բացառիկ իր տեսակին մէջ:

Ինչքան լաւ կը յիշեմ, ժողովներու փակման առաւօտուն,  
զիս անկիւն մը գտնելով՝ ամենայն խորհրդաւորութեամբ  
ըսաւ. «Սերո՞ք, դուն այս Ամմանին մօտ ես, այս մարդոց լե-  
զուն լաւ կը հասկնաս, արդեօք քեզի պէս մէկը չի՞ կրնար իր  
ժամանակը տրամադրել եւ այս շրջանի Դաշնակցութեան  
շարքերը վերակազմակերպել»:

Եղբայր Գառնիկին փափաքը մնաց փափաք:

Ես չկարողացայ որեւէ ձեռով գոհացում տալ իմ տարա-  
բախտ ընկերոջ:

Բայց այսօր երբ կը տեսնեմ այս նկարը, անմիջապէս պիտի  
տեղեկագրեմ ընկեր Գառնիկին:

Ու ըսեմ.- Գառնիկ, Ամմանի մէջ թերեւս Դաշնակցու-  
թեան շարքեր չկան, բայց ոգին հոն է, անհո՞գ եղիր:

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԷՋ. 1918-1927 (Է. ՄԱՍ)



Հ.Մ.Ը.Մ.Ի պատմության նշանակալից ու անձանոթ մեկ հանգրուանին վրայ կարելու լոյս սփռող աշխատասիրութիւն մըն է ստորեւ տրուած պատմական ակնարկը, գրուած՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Յարութ Չէքիճեանի կողմէ:

Ակնարկը եօթներորդ եւ վերջին մասն է երկար ուսումնասիրութեան մը, որ մաս առ մաս կը հրատարակուի «Մարգիկ»ի յաջորդական քիւլերով:

Նիւթը կ'անդրադառնայ Ա. Հանրապետութեան եւ անոր յաջորդող շրջանին Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.Ի ծաւալած գործունէութեան: Այս մասին միութեանական պատմագիտութիւնը գրեթէ բան չէ հաղորդած մեզի:

Չէքիճեան նիւթը ուսումնասիրած եւ ներկայացուցած է Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակի գիտաժողովին, ապա զայն վերամշակելով եւ յաւելեալ նիւթերով հարստացնելով, զայն պատրաստած է հրատարակութեան:

«Մեր նպատակն է ապահովել բաւարար թիւով արջառ եւ մսացուններ, որոնք կարենան գոհացում տալ բոլոր որբերու կարիքներուն՝ միս, կարագ, պանիր եւ այլն» կ'ըսէ պրն. Նիւմմըն: Կը ծրագրենք նաեւ խաղախորդարան մը հաստատել կաշիի արտադրութեան համար: Անշուշտ, այս բոլորին գործադրութիւնը շուրջ երկու տարի կրնայ տեսել, սակայն յաջողութեան պարագային Կովկասի որբանոցները ինքնաբաւ կը դառնան:

«Այս երկրագործական եւ ագարակային ծրագիրները գործի սպարէզ պիտի դառնան մեծցող որբերուն, որոնք հազարներով կրնան երկրագործութեամբ աշխատիլ, իսկ հարկւրաւոր աղջիկներ՝ կաթնեղէնի մարգին մէջ, ապահովելով իրենց ապագայի ապրուստը»:

- ՆԻՌ, 3 Դեկտեմբեր 1921. Երեւանէն Սի. Էֆ. Ռոյանտ տիկ. Էմբիշին ուղղուած 16-11-1921 թուակիր այլ նամակով մը կը գրէ՝. «...ՆԻՌ-ի [Երեւանի] որբանոցները գերխճողուած են: 3300 որբեր կը խնամուին, եւ եթէ յարմար չէնքեր գտնուին՝ այդ թիւը կը կրկնապատկուի: Կը փորձենք նոր շէնքեր ապահովել, սակայն դժուար է:

«Փողոցները ցնցոտիներով անտուն երեխաներով լեցուած են: Անոնք փողոցներուն, եկեղեցիներու բակերուն եւ մայթերուն վրայ կը քնանան: Անոնց մեծ մասը սոված վիճակի մէջ են: Կեանքիս մէջ այսպիսի ցաւալի իրավիճակ չեմ տեսած, եւ աւելի վատը այն է, որ ապագան նոյնքան սեւ է: Պետական

## Յարութ Չէքիճեան ՊԵՅՐՈՒԹ

**Յ**օդուածաչարքի այս վերջին մասով պիտի տեսնենք, թէ ինչպէ՛ս անկախ Հայաստանի Հանրապետութեան անկումէն ետք, երբ հազիւ որբահաւաք կատարուած էր, փողոցները փոքրեր եւ մուրացկաններ մնացած չէին, գաղթականները տեղաւորուած էին, այս անգամ ներքին գաղթականներու եւ որբերու նոր ու մեծ հոսանք մը ստեղծուած էր՝ թուրք-պոլշեկի միացեալ ոճիրներուն, հալածանքին եւ ալան-թալանին հետեւանքով:

- ՆԻՌ, 12 Նոյեմբեր 1921. Ամերիկեան Նպաստամատոյցի տրամադրուած Քարաքալայի [հաւանաբար Տաշիր գիւղի շրջանի դաշտերը- այս եւ նմանօրինակ փակագիծերով տրուած բոլոր բացատրութիւնները կը պատկանին յօդուածագիրին- «Ս.»] ագարակը ճեղալ Օղլիէն [Ստեփանաւան] շուրջ 24 քմ., իսկ Ալեքսանդրապոլէն՝ 64 քմ. հեռու կը գտնուի լաւ ճամբայով եւ ունի 6000 հեկտար տարածութիւն:

Ալեքսանդրապոլի Փոլիկոն որբանոցի Չերազին կողմն ամառը հազարավոր որբ տղոց եւ արջկանց հիանալի մարզահանդես, Յուլիտներ 1925-ին:



[պոլիկոն] որբանոց մը այցելեցի, որ տեսնեմ թէ ինչ ո՞վ կըրնամ օգտակար դառնայ: Երեխաները թխմուած էին մէկ սենեակի մէջ, առանց անկողինի, առանց աթոռի, վերմակի կամ որեւէ տեսակ ծածկոցի: Անոնք գետինը կը պառկէին: Հիւանդները խառնուած էին բոլորին հետ, իսկ անոնցմէ ո՞վ առողջ էր որ: Մեծ մասը կիսամերկ: Թէ ինչպէ՞ս այս պայմաններուն տակ կ'ապրէին չեմ գիտեր: Վաղը վերմակներ, հագուստներ եւ քիչ մը սնունդ պիտի տանիմ անոնց եւ հիւանդ փոքրերէն մաս մը մեր քով պիտի բերեմ»:

- ՆԻՌ, 7 Յունուար 1922. «Կովկասի հիւանդանոցային գործը մեծ դժուարութեամբ կ'ընթանայ» խորագիրով էլիզապէթ Թոմ [Ամերիկեան Կարմիր Նաչ] իր այս երրորդ նամակով կ'ըսէ<sup>3</sup>. «Որբերու իւրաքանչիւր նոր խումբ դժուարութեան բեռը կ'աւելցնէ արդէն իսկ չափազանց խճողուած Կովկասի մեր հիւանդանոցներուն: Գրեթէ ամէն նորեկ որբ, քոսով (scabies), գոնջութեամբ (favus), մանրախտով (trachoma) կամ այս երեքով վարակուած է: Մեղուներու նման կ'աշխատինք: Ամէնէն էականը՝ սնունդը եւ լոգանքի ու որակաւոր լուացքի յարմարութիւններն են, որ այժմ ունեցանք:

«Քանի մը ամիս առաջ մահացութեան թիւը բարձր էր, իսկ հիմա՝ գրեթէ ոչինչ: Մէկ տարուան մէջ պայմանները բարելաւուեցան:

Այն ժամանակ, երբ նոր եկայ, հիւանդանոցին 4000 որբերը կը խնամէի եւ դարմանատան 500 ոջլոտ եւ վէրքերով ծածկուած երեխաները: Օդը սարսափելի պաղ էր եւ փայտի սակաւութեան պատճառով կրակարան ալ չունէինք: Ասով մէկտեղ, 5 շաբաթէն այս 500-ը բուժուեցան, սակայն մեզի [ՆԻՌ-ին՝ ամերիկացիներու] հրահանգուեցաւ պարպել [իրականութեան մէջ՝ ձերբակալութենէ փախան անոնք] Ալեքսանդրապոլը...

«Ղրկուեցայ Կարս, ուր 6000 որբեր ունէինք: Չորս շաբ-



Աշխարհի վրայ այսպիսի երեւոյթ չկայ, հազարներով որբեր դասարաններէն զբօսանքի ելած:



**Չախիճ՝ Կոպեռնիկ Թանտրոճեան, Զ.Մ.Ը.Մ.ի Արմաշի եւ Նոր Պայազիտի որբերուն տնօրէնը, ապա՝ երկար տարիներ Զ.Յ.Գ. Բիւրոյի անդամ: Կեդրոնը, Դաւիթ Բէկեան գայլիկներուն խմբապետը՝ գորիսեցի Նիկոլա Բաբայեան: Աջից՝ Կազաչի Փոստ որբանոցի դեղարաններուն մէջ գործող հիւանդապահուի մը:**

Թրւան մէջ մայրանոց մը, մանկանոց մը, սովորական հիւանդանոց մը եւ քոստաներու հիւանդանոց մը հիմնեցինք: Այս վերջինը իսպիւրած նախկին զինանոց մըն էր: Հագուազիւտ էր փայտը, ջուրը գետէն կը կրէինք, եւ երբ ցերեկին տանիքի ձիւնը հալէր՝ ձիւնով գոցուած տանիքին ծակերը կը բացուէին եւ հիւանդներուն վրայ կ'անձրեւէր: Յուսահատական էր վիճակը, սակայն երկու ամիս տոկացիք, երբ նոր կառավարութիւնը [Թուրք] հրահանգեց բոլոր հայ որբերը Ալեքսանդրապոլ փոխադրել...

«Մայիսի 1922-ին վերադարձայ Ալեքսանդրապոլ, ուր երեխաները ձմրան ընթացքին, սնունդի պակասին պատճառով, պոլլեւիկներուն կողմէ մեծ տառապանքի ենթարկուած էին [պոլլեւիկները վատրեցին ամբերկացի խնամատարները եւ թալանեցին որբանոցները, ապա աւար չմնալէն ետք վերստին կանչեցին զանոնք. տես այս յօդուածաշարքին Դ. եւ Ե. մասերը]: Որբերէն շատերը բարդ աղետապով վարակուած էին եւ մահացութեան թիւը սոսկալի էր: Նոյնիսկ պարէնը հասնելէն ետք, կարելի չեղաւ փրկել շատերը:

«Անկէ ի վեր շատ գոհացուցիչ աշխատանք կատարուեցաւ: Այժմ քոսի, գոնջուլթեան եւ մանրախտի առանձին հիւանդանոցներ ունինք: 5000 տղաք շաբաթական բժշկական քննութեան կ'ենթարկուին: Լաւ դեղարան մը ունինք, կատարեալ գործողութեան սենեակ, հիւանդատարի դրութիւն եւ արտաքին հիւանդներու ծառայութիւն:

- ՆԻՌ, 21 Յունուար 1922, Երեւան. Երեւանի ՆԻՌ-ի որբանոցի մը տնօրէնուհի տիկ. Տ. Հ. Սաթընի (D. H. Sutton) նամակէն հատուածներ<sup>4</sup>. «Անցեալ շաբաթ յաւելեալ տան մը պէտք ունեցանք, քանի որ յանկարծ 400 նոր որբեր ունեցանք: Մեր շրջանային տնօրէնը դիմեց «Առ որ անկ է» եւ արտօնութիւն ստացաւ բնակարանի մը: Ո՛չ վարձակալագիր, ո՛չ ալ վճարում-հատուցում, այս է պոլլեւիզմը...

«Բնակարանին առատադր բացուածքներ ունի, նաեւ գետիններն ալ բացուածքներ ունին, ուշադիր պէտք է ըլլաս ո՛ւր կոխել: Անշուշտ պատուհանները ապակի չունէին: Սակայն ինչո՞ւ մտահոգուելի... Մեր գործարանին մէջ հիւսուած կտաւ-

ները ունինք եւ տուփի կաթի անտուկներուն փայտը, յամենայնդէպս մաքուր օդը աւողջարար է աճող ընտանիքի մը համար...

«Երկուշաբթի ստանձնեցինք տունը եւ որոշեցինք Հինգշաբթի բնակիլ: Նախ եւ առաջ մեր սկառուտներուն խումբը բահերով մաքրեց աղտերը, որոնք կուտակած էին նախկին բնակիչները՝ քանի մը տասնեակ ընտանիքներ, որոնք իրենց գիւղերը վերադարձան: Ապա տանիքին ու տախտակամածին բացուածքները ծածկեցինք: Քանի որ խոհանոց, բաղնիք եւ լուացքի սենեակ չկար, որոշեցինք շէնքին կից լքուած քարաշէն, ցեխէ տանիքով կառուցումը երեք մասի բաժնել, մէկուն մէջ քարով եւ ցեխով երկաթէ խոշոր կաթսաները տեղաւորեցինք, միւս երկուքին մէջ փայտէ ջրուղիներով լոգանքի եւ լուացքի տաշտերը տեղաւորեցինք եւ ահա Երեւանի լաւագոյն խոհանոցը, բաղնիքը եւ լուացքի սենեակը ունեցանք»:

- ՆԻՌ, 21 Յունուար 1922. Նախկին սկառուտ խմբապետ, այժմ Ալեքսանդրապոլի տղոց աշխատանքի-արհեստանոցի տնօրէն Լէսթըր Ռէյ Օկտընի (Lester Ray Ogden, տես նաեւ՝ Դ., Ե., Զ. մասեր) նամակէն հատուածներ. «Հնարամիտ [սկա-



**Բժշկուի Սէյպըլ Էլըլիմ Էլիոթ կը խնամէ սոված որբ մը:**



**Ձախին՝ ՆԻՌ-ի Կովկասի ընդհանուր տնօրէն Էրնեսթ Եարօ որբեր եւ գաղթականներ կը ցանկազրէ: Աջին՝ ընդհանուր տնօրէն քէփըըն Եարօ եւ ՆԻՌ-ի ամերիկացի կամաւորներէն խումբ մը: Եարոյին քով, աջէն երրորդը, բաճկոնով, շատ հաւանաբար Ռէյ Օկտընն է:**

ուտ] որբերը կ'օգտագործեն աւելցուքներ» խորագիրով կը գրէ<sup>5</sup>. «Հրաշալի է այս անփորձ ու սկսնակ տղոց ճարտարութիւնը՝ ոչինչէն, թիթեղի կտորէն պիտանի իրեր շինելը: Նախ թիթեղի կտոր մը խարտոցելով դանակի վերածեցին փայտէ կոթ մը շինելով եւ անցընելով, այդ դանակով այլ իրեր շինեցին:

«Տղոցմէ մէկը, որ որբանոցին մետաղի գործարանը կ'աշխատի, իր ազատ ժամերուն թիթեղներով ու երկաթի կտորներով, իրականի նմանող փոքր շոգեկառք մը շինեց եւ իւրաքանչիւրը 120 սմ. երկարութեամբ սայլերով ու իրեն յատուկ թեքուած երկաթուղիով: Այս խաղալիքը միատեղ 12 տղաք կը պտըտցնէր եւ կ'ուրախացնէր [տես նաեւ՝ Ե. մասի փոքր ինքնաշարժը]:

«Որբանոցներուն բոլոր վառարանները այս տղաքը շինեցին, փլատակ շէնքերու տանիքի թիթեղէ ծածկերը օգտագործելով: Անոնք նաեւ շինեցին բահեր, աղբամաններ, ջուրի դոյլեր, լոգանքի փոքր տաշտեր, քարիւղի թիթեղներ, ամաններ եւ շատ մը այլ իրեր, զորս մեր 6000 տղոց պէտք էր: Երբեք թիթեղէ տուփեր չենք թափեր, անոնցմով գաւաթներ կը շինեն

եւ մինչեւ խեցեգործութեան՝ մեր կաւի գործատեղին հիմնելը, բոլոր ամանեղէնները եւ գաւաթները մեր տղաքը թիթեղէ շինած են:

«Կը փափաքէի, որ տեսնէիք այն տնակները, որ այս ճարտար տղաքը շինեցին գրեթէ ոչինչէն: Կողմերը ցելոսով շինեցին, վրան ճերմակ կիրով ներկեցին: Ապակիի կտորներ քառակուսի վերածելով տախտակէ շրջանակով պատուհաններ շինեցին, բոլորովին ձեռքի գործ: Դռները թիթեղով կամ տախտակի կտորներով շինեցին եւ հնարամիտ կերպով գետեղեցին: Ներսը կը գտնենք ձեռակերտ աթոռ, նստարան եւ լայն բազմոց եւ թիթեղէ շինուած վառարան մը, որուն վրայ իրենց շինած թէյյաման մը եւ սամավարը, երբեմն նաեւ՝ իրենց շինած գեղեցիկ կաւէ ծաղկաման մը: Պատի դարակներուն վրայ թիթեղէ գանազան զարդեր շարուած են: Նոյնիսկ կատարեալ գործիքներով, մէկը պիտի չկարենար աւելի լաւը ստեղծել:

«Այսուհետեւ, պիտի սաստեմ Ամերիկայի մեր տղաքը՝ եթէ ըսեն. «Կարելի չէ առանց կատարեալ գործիքներու եւ հում նիւթի բան մը շինել»: Խնայողութեան եւ տնտեսութեան ինչ հիանալի դասընթացք մը պիտի ըլլայ, եթէ Ամերիկայի մեր [սկսուտ] տղաքը երկու շաբաթ արձակուրդի բերենք այստեղ»:

- ՆԻՌ, 21 Յունուար 1922. «Ո՞վ կ'ըսէ ձգենք երթանք» խորագիրով ՆԻՌ-ի Կովկասի բժշկական բաժանմունքի ընդհանուր տնօրէն Մէյպլը Էվլին Էլլիօթ [Mabel Evelyn Elliott: Հեղինակն է 1924-ին «Կրկին Արարատէն սկսելով» յուշագրութեան<sup>6</sup>] Երեւանէն կը գրէ<sup>7</sup>. «Երբեմն երբ նեղութիւնը չափազանց աստիճանի կը հասնի, եւ մենք, ութ ամերիկացիներս մեր միջեւ այս մասին գրուցենք՝ հակամէտ կ'ըլլանք ըսելու. «Մենք ի՞նչ գործ ունինք այստեղ, կը բաւէ՞, տուն երթանք, այլեւ չեմ ուզեր այս հանելի գործը շարունակել»:

«Ապա, սակայն, երբ կը հանդարտինք, որբախնամը բժշկախնամին հարց կու տայ. «Կրնա՞ք երեւակայել մեր 5000 որբերը [Երեւանի] տարի մը ետք, եթէ մենք հեռանանք»: Իսկ բժշկախնամը որբախնամին կ'ըսէ. «Երէկ պետական հիւանդանոցը այցելեցինք եւ այնտեղի ողորմելի վիճակը տեսանք.



**Մայր ու տղայ քաղաքէն եկած են ՆԻՌ-ի բժիշկին:**



«Այս որբերը ընդունելու տեղ չէր մնացած». հայ որբերուն համար Ս. Նահանգներու մէջ նուիրահաւաքի քարոզչութենէն նկար մը:

անունը չկայ, դեղորայք չկայ եւ դրամ ալ չկայ դեղ գնելու: Այս հիւանդանոցին հետ բաղդատելով՝ մեր 10 հիւանդանոցները, 927 հիւանդներով, Շիքակոյի Ս. Ղուկաս (St Luke) հիւանդանոցին կը նմանին: «Տո՞ւն երթալ... երբե՞ք, մինչեւ որ մեր գործը աւարտին հասցնենք»:

- ՆԻՌ, 28 Յունուար 1922. Հատուած մը Երեւանի շրջանի տնօրէնի օգնական Տատլի Լէուիսի (Dudley P. Lewis) «Գործածուած հագուստները ՆԻՌ-ի դպրոցներուն գրադարան մը ապահովեցին» խորագիրով նամակէն<sup>8</sup>. «Մեր 4000 որբերը եւ 800 տեղացի պաշտօնեաները պատշաճ հագուստով օժտելէ ետք, Ամերիկայէն զրկուած այս գործածուած հագուստները բաժնեցինք նաեւ ուսուցիչներուն եւ անոնց բարեկամներուն, որոնք սակայն կը խորչէին այսպիսի բաներէ, քանի որ փոխարէնը տալիք չունէին»:

«Մեր դպրոցներէն մէկուն Պերլին ուսանած տնօրէնը ձեւը գտաւ. հագուստներուն դիմաց գիրք նուիրել: Երեք ամսուան մէջ մեր գրադարանը 200 գիրքէն 20 հազար գիրքի բարձրացաւ, դառնալով Հայաստանի մեծագոյն գրադարանը: Թանկագին այդ գործածուած հագուստները երկուստեք օգտակար դարձան»:

- ՆԻՌ, 28 Յունուար 1922. Երկրաշարժ- Ալեքսանդրապոլէն օրդ. Փ. Ճորտըն (P. Jordan) «Նոր ճարտարարւեստականը պիտի կահաւորէ 3000 անկողինով հիւանդանոցը» խորագիրով կը գրէ<sup>9</sup>. «Եթէ անօթի ես, այն ալ ամիսներով, եւ գաւակներդ կիսամերկ են եւ կէս սոված, չե՞ս պայքարիր եթէ գործի առիթ ներկայանայ: Ճիշդ այդ էր, որ ըրաւ Ալեքսանդրապոլի մէջ ամէն կին, երբ յայտարարուեցաւ, որ ՆԻՌ-ը

կարի աշխատանոց մը պիտի բանայ:

«Արշալոյսէն առաջ հետաքրքիր ամբոխ մը լեցուցած էր մեր փողոցը: Երբ ձիւս իջայ, գրեթէ հագուստս պիտի բզրկտուէր, ամէն կողմէ գործ աղաչող կիներուն կողմէ, մինչեւ որ մեր երկու պահակները ամբոխին մէջէն զիս գործատեղին մտցուցին»:

«3000 անկողին, 10 հազար սաւան-ծածկոց եւ ամէն ինչ՝ ներքնագգեստներ, գիշերանոցներ, վերարկուներ եւ այլն պիտի կարուէին 3000 փոքրերու, որոնց համար այս հիւանդանոցը պիտի սարքաւորուի»:

«Աշխատողները գետինը նստած անկողինի պարկերը տեղական մաքուր բուրդով կը լեցնեն, ապա բաց կողմը կը կարեն եւ տեղ տեղ երկար ասեղով երկու երեսները իրարու կը միացնեն»:

«Անցեալ օր, երբ սեղանի մը վրայ նստած հագուստի բացատրութիւն կու տայի, առաստաղէն կախուած քարիւղի լամբը օրօրուեցաւ: Վախազդեցիկ մումուոցէ մը ետք, բոլոր աշխատողները «երկրաշարժ» պոռալով դուրս վազեցին»:


Սեղանը, որուն վրայ նստած էի վեր բարձրացաւ եւ ինկաւ: Երկրաշարժը քանի մը երկվայրկեան տեւեց, կիներէն մէկը մարեցաւ ու ես ալ ծովահարի նման թեթեւ գլխու պտոյտ ունեցայ:

«Մինչեւ գարուն այս կիներուն համար ահագին գործ կայ, ապա անոնց մեծամասնութիւնը արտերուն մէջ կ'աշխատի: Մինչ այդ, հիւանդանոցը լրիւ պատրաստ կ'ըլլայ, հիւանդապահ որբ աղջիկներուն օժանդակութեամբ»:

- ՆԻՌ, 15 Յուլիս 1922. «Արարատ լեռան շուքին



Սկաուտներուն շինած տախտակէ սիւներով եւ թիթեղէ շերտերով տնակ մը եւ շնիկ մը:



**Ձախին՝ Կազաչի Փոստի որբանոցի լուսաւոր հիւանդանոցներէն մէկը եւ հիւանդապահներ: Աջին՝ հիւանդանոցին գործողութեան սենեակը:**

տակ սկառտներու մարզումներ» խորագիրով կը կարդանք<sup>10</sup>. «Սկառտութիւնը կը տարածուի աշխարհի չորս կողմը եւ Երեւանի մէջ, Հայաստան, կը զարգանայ Արարատ լեռան ստորոտին: Այս համաշխարհային տղոց եղբայրութիւնը իր մէջ առած է ՆԻՌ-ի փոքրիկ որբերը, առիթ տալով որ մարզանքներու միջոցով շարքաշ եւ տոկուն սկառտներ դառնան:

«Դժուար թէ Երեւանի մեր այս որբերէն աւելի եռանդուն ու խանդավառ սկառտներ գտնուին: Իրենց վերջին իրագործումը ցնցողով լողանքի բաղնիքներն են, զորս պատրաստեցին մեր ՆԻՌ-ի աշխատանոցներուն մէջ: Որեւէ նմանութիւն չունի Ամերիկայի սկառտներու բաղնիքներուն հետ, սակայն իր գործը կը տեսնէ: Առտու եւ իրիկուն տղաքը շարքի կը սպասեն ցնցողին (shower) տակ կենալու համար:

«Երեւանի սկառտական նուագախումբը մեր որբանոցներուն եւ հիւանդանոցներուն մէջ կը նուագէ: Անոնց համբաւը շուտով մինչեւ էջմիածին հասած է եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Գէորգ Ե. աշխարհի ամենահին ազգային եկեղեցւոյ առաջնորդը սկառտական նուագախումբը էջմիածին հրաւիրեց, որպէսզի նուագեն»:

Վերեւ նշուած բժ. Մէյլըլլ էյլըլին էյլիթի (1881-1968) «Կրկին Արարատէն սկսելով» յուշագրութիւն արժէքաւոր գիրքը<sup>6</sup>, որ 1924-ին լոյս տեսաւ, առնուազն երեք անգամ վերահրատարակուած է, վերջինները՝ 2007-ին, 2011-ին եւ 2013-ին: Թէեւ, կարգ մը անուններ (օրինակ, Վարդանը՝ Վարդօն, Սոլաքեանը՝ Սոլաքիօն, Խորէնը՝ Խորեան եւ այլն), տեղանունները, աշխարհագրութիւնը եւ ընդհանուր պատմութեան տուեալները երբեմն ճշգրտմի կը կարօտին, մասնաւորապէս Հա-

յաստանի Հանրապետութեան մասին հարեւանցի, սխալ ու անարդար մեկնաբանութիւնները, սակայն ուժեղ անհատականութեան տէր, հինգ տարիներ հայութեան մէջ ապրած եւ ինքն ալ թուրքէն հալածուած հայերու հետ հետիոտն Մարաշէն փախուստ տուած այս բժշկուհիին մասին կ'արժէ ամփոփելով անդրադառնալ՝ ՆԻՌ-ի կայքէջէն<sup>11</sup> եւ իր այս գիրքէն, յուշերէն.

«...Ան 14 անդամնոց ընտանիքին կրտսերն էր. ինք եւ քոյրը Շիքակոյի համալսարանը աւարտած առաջին կին բժշկուհիներէն էին: Ա. պատերազմի աւարտէն ետք, «Ամերիկեան կիներու հիւանդանոցներ»էն Փետրուար 1919-ին փոխ կը տրուի Ամերիկեան Նպաստամատոյցին, ուր կը ծառայէ մինչեւ Հոկտեմբեր 1923: Ծառայած է ամէնէն վտանգաւոր եւ ճգնաժամային անյոյս թուող վայրերու մէջ՝ Սիլետար, Մարաշ, Իզմիտ, Ալեքսանդրապոլ, Երեւան եւ յունական կղզիներ:

«...Առաջին գործը կ'ըլլայ թուրք տուններէն, գերութենէ եւ հարեմներէն հաւաքուած, ազատուած 150 հայ աղջկանց Սիլետարի «Փրկութեան տան» մէջ: Ապա, Ապրիլ 1919-ին կը ղրկուի Մարաշ, ուր լքուած գերմանական հիւանդանոցը վերստին կը կենդանացնէ: Սակայն, Յունուար 1920-ին, քեմալական թուրքերը Մարաշի վրայ կը յարձակին եւ երեք շաբաթ հիւանդանոցին մէջ պաշարուելէ ետք, Փրանսական բանակը, որուն ենթակայ էր Կիլիկիան, կը քաշուի, հայութիւնը կրկին բնաջնջման վտանգին ենթարկելով:

«Էլիոթ, իր պաշտօնէութիւնը, որուն մէջ տասնեակ մը այլ ամերիկացիներ եւ



**Ապագայ հողագործներ եւ շինարար ուրախ սկառտներ կ'աշխատին:**



Հայաստանի Հանրապետության բանակի «Ռազմիկ» շաբաթաթերթին առաջին թիւը, որ կը քաջալերէ սկաուտութիւնը:

**Ալեքսանդրապոլի Կարլ Լիբնեխտի գրադարան-ընթերցարանը եւ գիւղացիներուն գրեթէ միակ փոխադրամիջոցը՝ դանդաղ զոյգ եզաքարչ սայլ մը:**

5000 հայեր հետիոտն ձիւնին բուքին մէջ, Ֆրանսացի բանակայիններուն հետ [10 Փետրուար 1920, գիշերուան ժամը 10.30-ին ճամբայ կ'ելլեն շուրջ 70 քմ. դէպի հարաւ՝ հասնելու Իսլահիէ, ուր Ֆրանսական զօրանոց կար] խոյս կու տան լեռներու եւ խիստ ու դժուար միջավայրերու մէջէն, երբեմն մինչեւ մէջքը ձիւնի մէջ թաղուելով, որուն ընթացքին երկրորդ անգամ գաղթական դարձած շուրջ 3000 հայեր կը մահանան, իսկ ինք՝ սառցահար (frostbite) կ'ըլլայ: Արդէն 3 շաբաթ պաշարուած վիճակէն, շատեր անօթուլթենէն եւ սառելով կը մահանան: Էլիոթ կը դատապարտէ թուրքերուն այս ոճիրները, նոյնպէս նաեւ՝ անգլիական ու Ֆրանսական անմարդկային քաղաքականութիւնը, որ պատճառ դարձաւ իրենց պաշտպանութեան տակ գտնուող հայրենադարձ հայերուն քանիերորդ սպանդին:

«Էլիոթ նախապէս ականատես եղած էր նաեւ անգլիական բանակին Այնթապէն քաշուելուն, Ֆրանսացիները դեռ չհասած [թուրքերուն զինելէն ետք]: Ֆրանսացիները կ'ամբաստանէին անգլիացիները, թէ անոնք թուրքերը զինած էին: Յատկանշական է Էլիոթի վկայութիւնը, որ Ֆրանսացի հրամանատարը՝ Արլապոզ (Arlabose) դէմ գտնուած է հայերու փախուստին, հակառակ անոր որ հայերուն կոտորածը սկսած էր արդէն»:

«...Սեպտեմբեր 1921-ին ՆիՌ-ի Կովկասի բժշկական տնօրէն կը նշանակուի: Ալեքսանդրապոլը Նոյեմբեր 1920-էն Ապրիլ 1921 գրաւուած էր թուրքերուն կողմէ: Այդ միջոցին 200 հազար որբեր ու գաղթականներ սնունդէ զրկուած էին: Բժ. Էլիոթ մտաւ նորաստեղծ Հայաստան՝ Խորհրդային հանրապետութիւն, ուր 30 հազար որբեր պիտի խնամէր, մահաւանդ որ ոեւէ առողջ երեխայ չկար այս փոխանցիկ հիւանդութիւններու համաճարակներուն մէջ: Գլխաւոր դարմանը պղինձէ մատիտ մըն էր, որ իւրաքանչիւր երեխայի կը տրուէր, ամէն առաւօտ իրենց կողերուն ներսի կողմը քսելու համար, որպէսզի չկուրնան»:


«Անվախ դեկավարը» խորագիրով կ'ամփոփէ. «Մինչ Էլիոթ իր երկրին՝ Ամերիկայի մէջ կ'ին ըլլալուն պատճառով քուէարկելու իրաւունք չունէր, Կովկասի մէջ ան 14 հիւանդանոց կը կառավարէր, աշխարհի ամենամեծ առողջապահական դրուլթիւնը»:

Ստորեւ՝ «Կրկին Արարատէն սկսելով» Էլիոթի գիրքէն սկսուածներուն մասին գրած հատուածները թարգմանաբար կը ներկայացնենք՝ [գիրքը կարելի է ամբողջութեամբ կարդալ, ներբեռնելով այս տեղէն<sup>12</sup>]:

- Էջ 172-173. «...Աշխարհի վրայ այսպիսի երեւոյթ չկայ՝ Երբ գանգը հնչէ՝ հողը կը կենդանանայ սպիտակ կերպարանքներով, մրջիլներու նման: Հազարաւոր երեխաներ չէնքերէն դուրս կ'ելլեն երկար շարքերով, հազարաւոր եւ հազարաւոր երեխաներու խօսակցութիւնը, պոռչտուքը, երգը, լացը հեռուէն կը ստեղծեն հաճելի «աղաղակ» մը, որուն կ'աւելնայ իրենց հարիւրաւոր [սկաուտ] խմբապետներուն սուլոցը, որոնք անդադար կը սուլեն: Անդին, կը լսենք նաեւ սկաուտական նուագախումբերու տողանցքին երաժշտութիւնը:

«Աւելի քան 25 հազար որբեր կային Ալեքսանդրապոլի երեք փոստերուն մէջ: Իւրաքանչիւրը իր [ան]մարդկային պատմութեամբ՝ սարսափի եւ փախուստի, ոճիրի եւ մահաւան, մահ ուժասպառութենէ, գաղթականի հետիոտն երթերէն, պաղէն, ծարաւէն, անօթութենէն եւ հիւանդութիւններէն: Իւրաքանչիւրը կը յիշէր իր բոկոտն փախուստը, ուղեւորութիւնը՝ զիրենք հալածող թուրքերէն, թաթարներէն եւ





Սկաուտներ կը լողան ոռոգումի ջրանցքի մը մէջ, Կազաչի Փոստ, Ալեքսանդրապոլ:

վրացիներէն: Ոմանք Սեւ Ծովէն մինչեւ հարաւ՝ Միջագետք, եւ անհաւատալի այլ ուղեւորութիւններէ ետք ետ դէպի հիւսիս՝ ուժասպառ հասած են Ալեքսանդրապոլ:

- Էջ 177. «Սկիզբը, բժշկական մեր գործը պատերազմի դաշտի մը համագոր էր: Իւրաքանչիւր որբանոց հիւանդանոց էր, եւ իւրաքանչիւր երեխայ՝ հիւանդ»<sup>6</sup>:

- Էջ 183-184. «Պիւտճէի նեղութեան պատճառով երբեմն սկաուտներուն նուագախումբերը [նուագարաններուն ծախսը] աւելորդ պերճանք կը նկատուէին, սակայն՝ անհրաժեշտ»<sup>6</sup>:

- Էջ 213-222. Սկաուտական բանակում<sup>6</sup>. «...Զիակառքով 3 ժամ հեռու է մեր սկաուտ տղոց բանակավայրը՝ Քաֆթըրլուն [Kafterloo, կարելի չեղաւ գետակի մը մօտ, Ալեքսանդրապոլէն շուրջ 30-40 քմ. հարաւ, դէպի Արագած, այսպիսի անունով կամ նմանող, եկեղեցիով գիւղ մը, վայր մը գտնել]: «Մեր կառքը Ալեքսանդրապոլի տափաստաններէն դէպի հարաւ կը յառաջանար, սպիտակ դագաթով Արագած լեռը մեր դիմացը, Հայաստանի գեղեցիկ ու ջինջ երկինքին տակ: Վայրէջքէ մը ետք, անակնկալօրէն, յանկարծ կանաչ ծառերով Քաֆթըրլուն երեւցաւ մեր առջեւ, ինչ որ եզակի է Ալեքսանդրապոլի լեռնադաշտին մէջ իր ծառերով եւ շուքով, որուն պատճառով բանակավայրը այստեղ ընտրած էին:

«Այս բանակումներուն մասին ներքին բանավէճ տեղի ունեցած էր, այն առարկութեամբ, որ ամերիկացի ժողովուրդին նուիրատուութեան հաշուոյն պէտք էր արձակուրդի զրկել որբերը, այն ալ միայն քանի մը հարիւր պատանիներ եւ ոչ բոլորը՝ հազարները: Սակայն, փորձառու եւ մարզուած ըսկաուտ խմբապետ Ռէյ Օկտըն յաջողեցաւ պաշտպանել իր գաղափարը, թէ՛ անհրաժեշտ էր սկաուտ այս տղոց փոփոխութիւնը որբանոցի միօրինակ առօրեայէն: «Հոգեկան խանդը կարելի չէ նիւթականով չափել», ըսաւ ան: Անհատական յարաբերութիւնը, չափահասութեան եւ ծառայատիրութեան կ'առաջնորդէ, որոնցմով անոնք պիտի վարակեն որբանոցի միւս ընկերները: «Ես պիտի փորձեմ դաստիարակել նոր Հայաստանի ապագայ ղեկավարները», աւելցուց Օկտըն:

«Երբ բանակավայր հասանք [իր հետ էր Սիւզան անունով հայ թարգմանը], տղաքը ձգեցին իրենց մարզանքն ու խաղերը եւ վազեցին եկան սպիտակ տարազով, արեւէն թխացած դէմքերով եւ թեւերով դիմաւորելու մեզ եւ իրենց գլխարկնե-

րը հանելով «բարի լոյս» ըսին միաբերան: Ոմանք ձիերը բռնեցին, ուրիշներ մեզի կառքէն իջնելու օգնեցին: Քանի մը վայրկեանէն ձիերը իրենց լուծէն արձակեցին ու արածելու տարին: Մեզի առաջնորդեցին ծառերու շուքին, ծածկոց փռուած վայր մը եւ ահէն կուժերով ջուր բերին: Պարոն Օկտընին հրահանգով բոլորը վերադարձան իրենց խաղերուն եւ մարզանքներուն, երկաթէ սիւներուն եւ բանակավայրը կենդանացաւ իրենց ձայներով: Միայն դժբախտութիւն տեսած այս տղոց անհրաժեշտ է խաղերու եւ մարզանքներու միջոցով իրենց բնական տղայական շրջանը անցընել, քանի որ հայ ժողովուրդէն շատեր առանց խաղ ու պատանեկութիւն տեսնելու չափահաս կը դառնան:

«Այս տղաքը յաջողաբար հարիւր հոգինոց խումբերով բանակումի կը բերենք, երկու շաբթուան համար, անոնք բոլոր օրը մարզական խաղեր կը խաղան եւ երեկոյեան դասախօսութիւն կ'ունկնդրեն»:

- Էջ 219-222. Սկաուտ Յակոբ Գոյունեանի ողբականը<sup>6</sup>. Շատ կարեւոր վկայութիւն մըն է Էյլիթի ստորեւ պատմածն ու մանաւանդ եզրակացութիւնը այդ տասնեակ հազարներով որբերէն մէկուն մասին: Հայաստանի մէջ գտնուող 50 հազար որբերէն իւրաքանչիւրը այսպիսի պատմութիւն մը ունի. «...Այս ընթացքին, նաեւ ճաշի ժամանակ, նկատեցի, որ տղոցմէ մէկը շատ չէր խօսեր եւ խաղերուն ալ չէր մասնակցեր: Օկ-



**Չախիճ՝ Ալեքսանդրապոլի Չեկայի՝ ոստիկանութեան նախկին շէնքը, ուր տարին Չերագը, ապա շուրջ 20 հազար որբեր եւ սկաուտներ բողոքի ցոյցով ազատեցին զայն: Աջին՝ Չերագի սկաուտներէն Տօնիկ Յովհաննիսեանին Գնման շեփոր նուագող սկաուտ մը, Ալեքսանդրապոլ, 1922:**

տըն ըսաւ, որ ընտիր պատանի մըն էր ան, անունը Յակոբ Գոյունեան, սակայն իր թերութիւնը հայերէն խօսիլ չկարենալն էր, թէեւ շատ արագ կը սորվի: «Ան շատ լաւ, տիպար սկաուտ մըն է», աւելցուց ան:

«Ճաշէն ետք Յակոբին հետ գրուցեցինք: Ան մեզի ներկայացաւ, եռանդուն սկաուտական բարեւ տուաւ եւ պատրաստ կեցաւ ու մեր հարցումներուն պատասխանելով իր կեանքը պատմեց:

- Վանի մէջ ծնած էր:
- 1915-ին, երբ թուրքերը հայերը ջարդելու սկսան, 5 տարեկան էր:
- Ո՛չ, իրենք թուրքերուն դէմ չէին կռուել:
- Այո՛, թուրքերը իր ընտանիքը սպաննեցին:
- Թուրքերը մեր տունը խուժեցին եւ ընտանիքս սպաննեցին:
- Թուրքերը զինք եւ 500 այլ տղաք եւ աղջիկներ [Վանէն] հաւաքեցին եւ հետիոտն մինչեւ [Սեւ] Ծով տարին [Տրապիզոն]:
- Ճամբան թուրքերը իրենց հետ լաւ վարւած, ուտելիք եւ ջուր տուած էին:
- Նաւով զիրենք կը տանին Կոստանդնուպոլիս՝ թրքական որբանոց մը, ուր 5 տարի կը մնայ:
- Որբանոցին մէջ թուրք պատասխանատուները կը ծեծէին զինք, երբ ըսէր որ հայ է: Անոնք կ'ըսէին, որ ինք թուրք է եւ թուրքիոյ մէջ միայն թուրքեր կ'ապրին:
- Անոնք [ապարդիւն կերպով] փորձեցին, իրեն ըսել տալ, որ ինք թուրք է: Ժամանակ մը ետք այլեւս չհարցուցին:
- Վերջը թուրքերը լաւ վարուեցան:
- Այնքան ատեն, որ ես հայ եմ չըսես: Մեզի ճաշ եւ հագուստ տուին:
- Խոճա [խլամ կրօնաւոր] մը մեզի քուրա-

նէն արաբերէն համարներ կրկնել կու տար, միայն ա՛յդ էր մեր դպրոցը [այսպէս կը պատրաստէին Օսմանեան ենիչերի վայրագ զինուորները՝ ոչ թուրք որբերէն]:

- Տասը տարեկանին զինք եւ ընկերներէն ոմանց Սեւ Ծովու քաղաք, Տրապիզոնի մէջ թրքական որբանոց մը կը փոխադրեն: Իմանալէն ետք, որ Վանէն շատ հեռու չէ, առիթի մը կը սպասէ եւ կը փախչի:
- Ինչո՞ւ փախուստ տուիր:
- Քանի որ ես հայ եմ եւ չեմ ուզեր թուրք ըլլալ:
- Միւս տղա՞քն ալ քեզի պէս կը մտածեն:
- Ոմանք ա՛յո, ուրիշներ՝ աւելի փոքրերուն հոգը չէ: Եթէ «դուն թուրք ես» ըսես, հոգը չէ եւ հետդ չի կռուիր:
- Ինչո՞ւ չես ուզեր, որ քեզի թուրք են ըսեն:
- Խիստ նայուածքով եւ ոճով մեզի պատասխանեց. «Ես



**Սկաուտներու շուրջ 1000 հոգինոց բանակում մը, ետին՝ գետակը եւ մարզանքի երկաթէ սիւները:**



**Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին առիթով, 2018-ին, Հ.Մ.Ը.Մ. Վահան Չերազին արձանը տեղադրեց Կիւմրիի (նախկին Ալեքսանդրապոլի) Վարդանանց հրապարակին մէկ անկիւնը:**

Հա՛յ եմ: Հինգ տարեկան էի երբ զիս տարին, բնա՛ւ չեմ մոռնար»:

- Ինչպէ՞ս կարողացար փախչիլ եւ ողջ մնալ:
- Տրապիզոնէն Կարս քաղաքի, հետեւելով ուղտի կարաւաններուն:

- Ո՞վ քեզի ուտելիք տուաւ հարցումին կարմրեցաւ եւ չպատասխանեց: Հասկցանք, որ ուտելիքը գողցած է եւ անմիջապէս հարցուցինք, թէ Կարսէն ինչպէ՞ս հոս Ալեքսանդրապոլ հասաւ:

- Կարսի պազարին [չուկայ] մէջ իրեն նման տղոցմէ կ'իմանայ, որ հիմա Կարսը թրքական է եւ այնտեղ Հայաստանի հիւպատոսարան մը կայ, եւ դէպի արեւելք ալ՝ Հայաստան երկիրը: Ուստի կը դիմէ հայկական հիւպատոսին, որ իրեն անցազիր եւ տոպրակ մը ուտելիք կու տայ: Քանի մը ամիս դէպի հիւսիս արեւելք քալելէ ետք [չուրջ 80 քլմ.] կը հասնի Ալեքսանդրապոլ, ուր կը լսէ, որ վանեցի ընտանիք մը կ'ապրի այնտեղ: Ընտանիքը թէեւ չէր ճանչնար զինք, սակայն երբ կ'ըսէ, որ վանեցի է զինք կ'ընդունին եւ մէկ տարի անոնց քով կը մնայ, սակայն անոնք ալ բաւարար ուտելիք չունէին:

- Կը փորձէ ամերիկացիներուն քով աշխատիլ, իբրեւ ճամբաներու շինարարութեան բանուոր, սակայն կ'ըսեն, թէ շատ փոքր է, եւ այդ ամերիկացիներէն մէկը զինք Փոլիկոնի որբանոցը կը տանի»:

Բժիշկ էլիոթ կ'եզրակացնէ. «Պարզ պատմութիւն մըն է, որ ունէր եւ ունի շատ մը կարեւոր իմաստներ.

«ա. Այլ դիտանկիւնէ մը ցոյց կու տայ Թուրքիոյ այնչոյս քաղաքականութիւնը՝ ողջ չձգել ոեւէ խոստովանեալ քրիստոնեայ [հայ] մը իր սահմաններուն մէջ:

«բ. Կրկին ցոյց կու տայ Թուրքիոյ մարմաջը հայկական արիւնով [ծիներով] ներարկելու իրենց գալիք սերունդները:

«գ. Յոյց կու տայ հայուն յամառութիւնը եւ ձուլուելու դէմ դիմադրութիւնը:

«դ. Տեսնելով այս 12 տարեկան տղան, որուն խնամեցին եւ կերակրեցին Թուրքերը, սակայն հինգ տարեկանէն ի վեր

անոնց դէմ ատելութիւն սնուցած էր ան: Փոքրիկ մը, որ իր մայրենի լեզուն մոռցած էր, սակայն ո՛չ ազգութիւնը: Յատակ է, որ Թուրքիոյ մէջ այս հարցին լուծումը [միատեղ գոյակցութեան] անկարելի է:

«ե. Բարբարոս իշխանութիւնները՝ սուլթանները եւ Երիտասարդ Թուրքերը թուրքերուն եւ հայերուն միջեւ փորած էին շատ խոր խրամատ մը, որ այժմ կարելի չէ կամրջել:

«զ. Եթէ քեմալականները մերձեցումի մը ճիգը պիտի չփորձեն, քանի որ գիտեն, որ պիտի չյաջողին [աւելի ճիշդը՝ քանի որ չեն ուզեր, ինչպէս իր յաջորդ եզրակացութիւնը կը հաստատէ]:

«է. Ուրեմն, քեմալականներուն «Թուրքիան միայն թուրքերուն» քաղաքականութիւնը կը նշանակէ Չարդել, ոչնչացրել կամ տեղահանել [հայերը] քրիստոնեաները»:

- Էջ 234 Ճեյլալ Օղլի [Մտեփանաւան] այցելութիւն<sup>6</sup>. Այս անգամ էլիոթի խմբակը ինքնաշարժով կ'այցելէ Ճեյլալ Օղլի. «...Մառերուն տակ, ամերիկեան հսկայական սպիտակ շէնքերուն եւ կարուածին մէջ կ'ապրին ու կ'աշխատին 4000 երեխաներ, արդիական արհեստից վարժարաններու մէջ, հիւսուածեղէնի մեքենաներով, ճնշուած օդով եւ պողպատէ գործիքներով: Հողագործութեան դասարանը 4000 հեկտար ագարակին մէջն է, թրաքթորներով եւ տիպար ախոռներով: Աղջիկները՝ հիւանդապահութեան վարժարանին մէջ, ուր անգլերէն եւ արդի բժշկութիւն կը սորվին: Սկսուածները իրենց մարզանքները կ'ընեն մարզադաշտին մէջ:

«Ճեյլալ Օղլիի մեր որբանոց-հիմնարկը կը ղեկավարեն Նիու-մըն (Newman) ամուրը, օգնական ունենալով օրդ- Սթոքթընը (Stockton), պրն. Նելսոնը (Nelson), պրն. Փարքըրը (Parker) եւ պրն. Ռէնքինը (Rankin): Իսկ պրն. Պաուըրը (Bowers) Մեծ Դեւ [Big Demon river, այժմ՝ Չորագետ] գետի վիհին մէջ գաղթական բանուորներով Ճեյլալ Օղլիի համար ելեկտրակայան մը կը կառուցէ [հաւանաբար ջրէլեկտրակայան]»:

- Էջ 310. «...Ամերիկացիները Երեւանի փողոցները եւ անոնց գոցուած ջրուղիները, որոնք համաճարակ կը տարա-



Ձախին՝ «Փրկեցէք մահուան հետ ժամադրուած փոքրերը» նուիրահաւաքին թռուցիկը, որ Մ. Նահանգներու մէջ տարածուած էր: Նկարին վերի մասը ՆԻՌ-ի Ալեքսանդրապոլի որբանոց մըն է, եւ Տիգրանը՝ Յ.Ս.Ը.Ս.ի տարագոյ սկաուտը: Հարց կը տրուի, որ փրկուած Տիգրանը, որ կը բարեւ ձեզի, արդեօք տարի մը եւս պիտի կարենա՞յ ապրիլ (եթէ ՆԻՌ-ի օժանդակութիւնը դադրի): Աջին՝ Սկաուտներու եւ արենոյշներու արշաւ ամերիկեան դրօշակոյ: Նկարին ետեւի շարքը, ձախէն երկրորդը, բազմաթիւ նկարներու մէջ երեւցող նշանաւոր սկաուտը:

ծէին՝ մաքրեցին: Անոնք ստեղծեցին ինը հիւանդանոցներ, ուր փողոցը լքուած հազարաւոր հիւանդներ, մեծ ու պզտիկ, մաքրուեցան եւ բժշկուեցան: Փողոցներէն հաւաքուած եւ փոքրիկ կենդանիներու վերածուած 4500 ախտաւոր երեխաները վերստին մարդկային կերպարի վերադարձուցին՝ մաքուր, եռանդուն եւ խնդումներս: Արհեստանոցներ շինեցին, որպէսզի անոնք արհեստներ սորվին եւ արժանապատիւ ու ինքնաբաւ ապրին: Կառուցեցին սկաուտներու տուն [ակո՞ւմբ], ուր անոնք կը սորվին արի եւ վեհանձն ըլլալ: Յառաջացուցին աղջիկ սկաուտներու [արենոյշներու] կազմակերպութիւն, որ ապագայ մայրեր կը դաստիարակէ: Այս բոլորը կատարեցին Երեւանի ամերիկացիները, որոնք իրականութեան մէջ 20 միլիոն ամերիկացի ժողովուրդին ձեռքերն էին»:

- էջ 340-341. Էլիոթ գիրքին վերջին պարբերութեան մէջ կ'ըսէ. «Հայաստանը պիտի ապրի՝ հողին մէջ իր խոր արմատներով, մերժելով մահը, կրկին զարգացնելով իր հիանալի մշակոյթը: Այժմ 40 հազար մանուկներ, ժողովուրդին 4 տոկոսը, կը մեծնան նոր աւելչով, ամերիկեան հոգատարութեամբ՝ վերստին սկսելով Արարատէն: Անոնք իրենց կեանքը Ամերիկային կը պարտին՝ ուսումը, արհեստները, խաղերն ու եռանդը: Ո՞վ կը կասկածի, որ ապագային անոնք պիտի ըլլան երկրին ղեկավարները»:

- ՆԻՌ 4 Փետրուար 1922. Երեւանի շրջանի տնօրէնի օգնական Տատլի Լէուիսի (Dudley P. Lewis) 18 Դեկտեմբեր 1921-ի նամակէն հատուած մը.<sup>13</sup> «Ամիս մը առաջ 3000 որբեր կը խնամէինք 13 որբանոցներու եւ 8 հիւանդանոցներու մէջ»:

«Հարիւրաւոր որբ երեխաներ, անօգնական, հիւանդ ու սոված կը թափառին փողոցներուն մէջ, գազաններու նման: Իրականութեան մէջ անոնք վայրենացած էին: Սարսափով հանդիպեցանք անոնցմէ խումբի մը, որ ահուելի պողոտայի մէջ»:

րով կը բզկտէին եւ կը լափէին սատկած ձիւլ մը դիակը, անգղներու նման: Մէկ շաբաթէն երեք փոքրեր մեռած գտնուեցան փողոցներու մէջ, յոգնած ու սովահար:

«Պէտք էր փրկէինք այս մանուկները: Ամէն գիշեր մեր պաշտօնեաները մինչեւ կէս գիշերէն ետք փողոցները եւ շուկաները կը խուզարկէին հաւաքելու զանոնք: Աղտոտ քուրջի փաթեթոց մը՝ հիւծած, մսած ու սոված որբ մը կ'ըլլար: Հազարէ աւելի այսպիսի որբեր ազատեցինք փողոցներէն, մաքրեցինք, բժշկեցինք եւ դէպի բնական կեանք վերադարձուցինք զանոնք»:

(Այստեղ կը վերադառնամ 1920 թ., նոր գտած աղբիւրի մը):

- 15 Մայիս 1920. «Ռազմիկ» զօրական [բանակին] շաբաթաթերթը իր առաջին թիւին մէջ «Սկաուտիզմի նշանակութիւնը» խորագրով կը գրէ.<sup>14</sup> [արեւմտահայերէնի վերածուած]. «Որպէսզի կարենանք մշակութային խաղաղ աշխատանք վարել եւ մեր ապագան բարելաւել, մենք պէտք է հոգ տանինք նոր սերունդի դաստիարակութեան, պատրաստելու համար գիտակից եւ անվախ ռազմիկ ոյժ, պատանիներուն մէջ զարգացնելով քաղաքացիական պարտաճանաչութիւն եւ հայրենիքի պաշտպանութեան մասին առողջ գիտակցութիւն»:

«Ահա այդ նպատակին հասնելու համար պէտք է ամէն կերպով օգնել, լայն ծաւալ տալու Հայաստանի սկաուտական շարժումին»:

«Սկաուտական շարժումը քանի մը ամիս է, որ սկսած է եւ պէտք է ըսել, որ հետզհետէ անոր շարքերը կը ստուարանան սկաուտներով եւ արենոյշներով»:

«Յաւ ի սիրտ մենք սկաուտներուն համար յատուկ դպրոցներ չունինք, որպէսզի Ֆիզիքական մարզանքներուն կողքին դասաւանդենք բարոյագիտութիւն եւ սկաուտական այլ նիւթեր»:



**Փողիկոն որբանոցին հսկայ զանգակատունը:**

«Մեր կառավարութիւնը մեր երկիրը Սպարտա [հին յունական պատերազմիկ երկիր եւ ժողովուրդ] եւ սկաուտները սպարտացիներ դարձնելով, կարելի է վստահեցնել, որ ապագային ոչ մէկ վտանգ չի կրնար թուլցնել հայ գինուորին մարտական ոգին, որ իր հայրենիքը պաշտպանելու համար չի խնայեր իր ֆիզիքական ուժը եւ ոչ ալ՝ մտաւոր աշխատանքը:

«Մեր բոլոր քաղաքներն ու գիւղերը պէտք է օժտել սկաուտներու ցանցերով, որոնք մեր հայրենիքին ապագայ ծաղիկները պիտի ըլլան:

«Տղայ սկաուտը գիտակցաբար կը կռուի իր հայրենիքի շահերուն համար, իսկ աղջիկ սկաուտը կ'օգնէ իր սկաուտ եղբորը պատերազմի դաշտին մէջ, անոր ուտելիք եւ փամփուշտ հասցնելով, կամ վիրաւորին վէրքերը կապելով եւ մխիթարելով:

«Երբ մենք ունենանք ազգային ոգիով դաստիարակուած սկաուտներ, մենք չենք ունենար ապիկար ու թուլամորթ դասալիքներ, որոնք կ'անպատուեն թէ՛ բանակին եւ թէ՛ ալ ազգին պատիւը»:

- 5 Մարտ 1921. Փետրուարեան ապրտամբուլթենէն ետք, այդ թոհուբոհին մէջ Վահան Չերազ իր նամակներէն մէկուն մէջ կը գրէ<sup>15</sup>. «Այսօր [Երեւանի մէջ] բացուեցաւ սկաուտական գրասենեակ, որուն վրայ պարգեցինք Հ.Մ.Լ.Մ-ի դրօշը, Եռագոյնին կողքին»:

- 1923-ին, օր մը, մարդ մը կը ներկայանայ Կազաչի Փոստի որբանոցի մուտքը, ուր Չերագի պահակազունդէն 12 տարեկան երկու սկաուտներ համազգես-

տով պահակութիւն կ'ընէին՝ այցելուներուն ինքնութիւնը գրասենեակ տեղեկացնելու, ապա զանոնք ներս առաջնորդելու պաշտօնով: Այցելուն կը մերժէ սպասել, սկաուտները կը փորձեն իրենց գաւազաններով փակել մուտքը, սակայն այցելուն ապտակելով զանոնք կը փորձէ ներս մտնել: Չերագ լսելով տղոց լացն ու ճիչը՝ կը փութայ դէպի մուտք՝ տղոց քով եւ առանց հարցուփորձի, միշտ իր ձեռքին գտնուող նշանաւոր գաւազանով կը հարուածէ այցելուն եւ կը վռնէ զայն: Քիչ ետք, յայտնի կ'ըլլայ, որ այցելուն Լենինականի (Ալեքսանդրապոլի նոր անունը) Չեկայի նոր կոմիսարն էր...:

- Չերագի ձեռքակալութիւնը եւ սկաուտներուն կողմէ ազատ արձակումը: Քիչ ետք, վռնտուած այցելուն կը վերադառնայ գինուորներով եւ ձեռքակալելով Չերագը Չեկայի կեդրոն կը տանի զայն: Թէ ի՞նչ կը պատահի այնուհետեւ, կը պատմեն Չերագի սկաուտներէն չորսը, Դերենիկ Մալխասեանի 8 Յունիս 2020-ի «Փոլիթիքա.ամ» կայքէջի յօդուածին մէջ<sup>16</sup>, որմէ կը մէջբերեմ.

«...Չերագը մեծ ներդրում ունեցած է Հայաստանի մարզական կեանքին մէջ, մասնաւորապէս Ֆութպոլի մարզածեկ զարգացումին: Առանց չափազանցութեան, կարելի է համարել, որ Վահան Չերագը հայկական Ֆութպոլի հիմնադիրներէն մէկն է, ինչպէս նաեւ սկաուտական շարժումին հիմնադիրներէն: ...Ալեքսանդրապոլի մէջ, Չերագը ո՛չ միայն կը զարգացնէ մարզական կեանքը, այլեւ՝ որբախնամի մեծ գործունէութիւն կը ծաւալէ:

«Ալեքսանդրապոլի որբանոցներու սաներուն մէջ Վահան Չերագ ձեռք կը բերէ բացարձակ հեղինակութիւն, ինչ որ աչքառու կերպով կը դրսեւորուի 1923-ին, երբ խորհրդային իշխանութիւնները անհիմն մեղադրանքով Չերագը կը ձերբակալեն: Սակայն, որբանոցի սաներուն հրապարակային բողոքի ցոյցերէն ետք, խորհրդային իշխանութիւնները կը ստիպուին Չերագը ազատ արձակել: Այս մասին Կիւմրիի «Կումայրի» թերթի 25 Յունուար 1992-ի համարին մէջ<sup>17</sup> եղելութիւնը կը պատմեն Չերագի նախկին սկաուտներէն Տօնիկ Յովհաննիսեան, Պաղտասար Մովսիսեան, Անդրանիկ Ամիրեան եւ



**Հիւանդապահուիկներ մանրախտի դարմանումի պահուն: Հաւանական է, որ դրան մէջ, ետին երեւոցողը, Վահան Չերագն է:**

Նազար Գալստեան: Ստորեւ յօդուածին այդ հատուածը՝ արեւմտահայերէն-

«1923-ին Չերազը կը ձերբակալեն եւ կը բանտարկեն ոստիկանատան մէջ, Չեկայի կեդրոն [այժմ «Կիւմրի» ճաշարան], անհիմն եւ անյայտ պատճառներով: Այս մասին իմանալով՝ Փոլիկոնի, Կազաչի Փոստի, Սեւերաքի եւ քաղաքի տարբեր որբանոցներու սկառուտներն ու սաները հոծ շարքերով կ'ուղղուին դէպի Չեկայի շէնքը, գոր կը շրջապատեն եւ կը պահանջեն ազատ արձակել Չերազը: Շուրջ 20 հազար որբեր տողանցելով այժմու թիւ 16 փողոցի Սպիտակ հիւանդանոցի շրջանէն մինչեւ Կիրովի փողոցի հատուածը՝ անընդհատ վանկարկելով անոր անուկը: «Վախնալով զանգուածային բողոքի մը հետեւանքներէն՝ Չեկան ազատ կ'արձակէ Չերազը, որ սկառուտական նուագախումբին առաջնորդութեամբ եւ երբեմն ուսամբարձ մինչեւ Կազաչի Փոստ կը տարուի: «Այդ սկառուտական նուագախումբին անդամներէն մէկն ալ ես էի», կ'աւելցընէ նախկին փողահար Տօնիկ Յովհաննիսեան»:


Շատ հետաքրքրական պիտի ըլլար կարդալ «Կոմայրի» թերթին 25 Յունուար 1992-ի համարին ամբողջ յօդուածը, սակայն կարելի չեղաւ համացանցով ապահովել զայն: Վստահաբար ասոր նման բազմաթիւ այլ յուշեր ալ կան, որոնք յաւելեալ մանրամասնութիւններով պիտի հարստացնեն Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի սկզբնական շրջանի պատմութիւնը:

Որբերուն 20 հազար հաշուող ցոյց բողոքը արգելք չըլլար, որ Չերազի դէմ հարածանքը շարունակուի, նոյնինքն Ալեքսանդրապոլի մէջ իր վայելած բարձր հեղինակութեան եւ ժողովրդականութեան պատճառով: Անիրաւ կերպով, Անգլիոյ եւ Ամերիկայի հաշուոյն լրտեսութեան ամբաստանութեամբ, Չերազը 11 Նոյեմբեր 1924-ին կ'աքսորեն Սիպերիա, ապա ընդհանուր ներման շնորհիւ ան ազատ կ'արձակուի Մարտ 1925-ին:

Վերադառնալէն ետք, Չերազ Երեւանի մէջ գործ չի գտներ ու կ'երթայ Ալեքսանդրապոլ: Հոն եւս վեց ամիս գործ չգտնելով կը վերադառնայ որբանոցի նախկին պաշտօնին, սակայն դժբախտաբար որբերուն մէջ արդէն իսկ սկսած էր պոլչեւիկեան ապագային քարոզչութեան տարածումը: Երկու ամիս աշխատելէ ետք, 1925-ի վերջաւորութեան կը կը ստիպուի հրաժարիլ, քանի որ պէտք չէր աշխատիլ ամերիկացիներուն քով, որոնց պատճառով ան Սիպերիա քսորուած էր անգամ մը:

- 12 Յունուար 1926. Վահան Չերազ էջմիածինի Մայր տաճարին մէջ կը պսակուի Վարդանուշ Անդրէասեանին հետ:
- Այստեղ Չերազի թոռնիկին՝ Վահան Իշխանեանի կայքէջէն<sup>18</sup> Չերազի վերջին օրերուն մասին հատուածներ կը մէջբերենք արեւմտահայերէն-

Չերազ իր ձերբակալութեան առթիւ հարցաքննութեան՝ վկայութեան մէջ կ'ըսէ. «Երեւան գալիս 2-3 շաբաթ ետք, կրկին սկսաւ թուրքերուն հետ պատերազմը եւ ես ճակատ գացի ու միացայ զօրավար Սեպուհի Ղոկատին [հաւանաբար Սեպտեմբեր 1920-ի վերջերը]: Կռիւներ մղելէ ետք, նահանջելով հասանք Դիլիջան, ուր նաեւ հասած էր կարմիր բանակը, որ մեզի զինաթափ ըրաւ: Եկանք Երեւան [Դեկտեմբեր 1920], ուր



Սկառուտներու ատաղձագործութեան դպրոց աշխատանոց մը որբանոցին մէջ:

արդէն Սովետական իշխանութիւնն էր: Երկու ամիս ետք Փետրուարեան ապստամբութիւնը սկսաւ եւ ես մասնակիցներուն մէջն էի:

«Ապստամբութիւնը չաւարտած՝ 27 ընկերներով եկայ Ալեքսանդրապոլ, որպէսզի այնտեղէն Կոստանդնուպոլիս երթանք: Սակայն այս մէկը դժուար ըլլալով, աշխատանքի սկըսայ Ամերիկեան Օգնութեան Կոմիտէին քով, իբրեւ որբանամ կայանի ղեկավար: Այնտեղ ծառայեցի մինչեւ 1922-ի վերջը, երբ զիս Սարդարապատ դրկեցին, կազմակերպելու համար [սկառուտական եւ մարզական շարժում սկսելու նպատակով] գաղթական երեխաները, ուր մնացի մինչեւ Օգոստոս 1923, ապա վերադարձայ Ալեքսանդրապոլ եւ նշանակուեցայ կայաններու ղեկավարի օգնական, ուր մնացի մինչեւ ձերբակալուիլ՝ 24 Նոյեմբեր 1924»:

Նորութիւն է Չերազի Սարդարապատի մէջ սկառուտական եւ մարզական շարժում հիմնելը: Այսպիսով, ուրեմն, Հ.Մ.Ը.Մ. սկառուտական եւ մարզական շարժում կը հիմնէ առնուազն Երեւանի, էջմիածինի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Ճելալ Օղլիի [Ստեփանաւան], Նոր Պայազիտի [Գաւառ], Դիլիջանի եւ Սարդարապատի մէջ:

- 25 Յունուար 1927. Կազաչի Փոստի ամերիկեան հիւանդանոցին մէջ կը ծնի Չերազի դուստրը՝ Բիւրակնը: Չերազ իր օրագիրին մէջ կը գրէ. «Ամբողջ շաբաթ մը, սաստիկ ցուրտին, ամէն իրիկուն փոլիկոնէն Կազաչի Փոստ կ'երթամ [Բիւրակնի] այցելութեան», ինչ որ կը նշանակէ, թէ Յունուար-Փետրուար 1927-ին ինք փոլիկոնի մէջ կը բնակէր, ուրեմն հոն կը պաշտօնավարէ՞ր, թէեւ վերը կ'ըսէ, որ պէտք չէր ամերիկացիներուն հետ աշխատեր: 1926 եւ 1927 տարիներուն Ալեքսանդրապոլի մէջ հաւանաբար միայն մարզական սկառուտական գործով կը զբաղի, առանց վճարովի որեւէ պաշտօնի: Չերազ իր նորածինին համար պահած էր յատուկ օրագիր, որուն վերջին արձանագրութիւնը 16 Յունիս 1927-ին է:

- 23 Յունիս 1927. Ալեքսանդրապոլի մէջ համայնավար ոս-



**Աղջկանց կարի դպրոց-աշխատանոց. կեդրոնի շարքը կարի մեքենաներ ունին:**

տիկաններ Չերագին տունը կը խուզարկեն եւ կը ձերբակալեն զայն ու Վրաստան կը դրկեն, Թիֆլիսի Մեռեխի բանտը:

- Չերագի վախճանը բանտին մէջ. «Հայրենիք» ամսաթերթի 1963-ի տասներորդ համարին մէջ<sup>9</sup>, «Սովետական դպրոցների, բանտերի եւ աքսորավայրերի մէջ» խորագիրով յուշերու Թ. մասին մէջ, ոմն X.X. Չերագի մասին կը գրէ, որ միասին Մեռեխի բանտին մէջ էին.-

«Առտու մեզ մօտ եկան բանտին մէջ գտնուող միւս հայ բանտարկեալները: Անոնք Ալեքսանդրապոլի ամերիկեան որբանոցներու պաշտօնեաներն էին, որոնց մէջ առանձնապէս աչքառու էր Վահան Չերագը, աննման հոգատար մը, սրտցաւ, պատուական ընկեր մը: Հակառակ եղած արգելքներուն, ան ամէն օր քանի մը անգամ մեր քով կու գար եւ ժամերով կը խօսէր: Չենք գիտեր, ուրկէ՞ ան միշտ բան մը կը ճարէր եւ կը բերէր մեր կարիքաւոր ընկերներուն: Չերագի կինը Թիֆլիս եկած էր եւ շաբաթը երկու անգամ կերակուր կը բերէր: Այդ աննման մարդը փոքր մաս մը միայն իրեն համար կ'առնէր, մնացածը կու տար մեր չքաւոր ընկերներուն [տիպար սկաւառ մը]:

«Յունուարի երկրորդ կէսին էր [9 Յունուար], երբ ժամը 4-5-ին կանչեցին Վահան Չերագը եւ բակին մէջ երեցաւ սեւ դահիճը: Բոլորս մնացինք սառած: Իսկոյն դուրս ելանք պատշգամ: Վահանը, այդ ազնիւ ու ընկերասէր երիտասարդը, իսկոյն հասկցաւ, թէ ինչ պիտի պատահէր ու բոլոր ունեցածը նուիրեց իր ընկերներուն եւ ձեւականութեան համար առաւ դատարկ պայուսակ մը: Ապա դառնալով բանտարկեալներու ըսաւ. «Մնաք բարի ընկերներ: Գիտեմ ինչու կը տանին զիս: Ոչինչ, թող իմ գլուխս ալ ուտեն: Բայց վստահ եղէք, որ յաղթանակը մերն է: Չյուսահատիք, միշտ արի եւ քաջ մնացէք: Կեցցէ՛ ազատ Հայաստանը, կեցցէ՛ հայ ժողովուրդը: Չմոռնա՛ք զիս»:

«Յետոյ դառնալով Սարգիս Յարուլթիւնեանին, որ միւսներուն հետ բակին մէջ կանգնած էր, իբր թէ տխուր, ըսաւ.

«է՛յ, Յուրա՛, քեզի ալ չի մնար: Գիտցիր, որ երբ ալ ըլլայ, դուռն քու արժանի պատիժդ պիտի ստանաս: Ամօթ քեզի Վասակ...»: Դահիճը, որ իր կողքին կանգնած էր, սկիզբը չէր հասկնար, թէ ի՞նչ տեղի կ'ունենար: Բայց երբ մէկը ականջին փսփսաց, ան իսկոյն բռնեց Վահանի թեւէն եւ ուզեց քաշել զայն դէպի գրասենեակ: Սակայն Վահանը երկու ձեռքով այնպէս մը հրեց անոր, որ ան ետ-ետ գնաց եւ վար պիտի իյնար, եթէ զինուորներէն մէկը չբռնէր զայն: Անմիջապէս չորս զինուորներ հրացաններով առջեւ եկան եւ Վահանը շրջապատելով տարին գրասենեակ: Մինչեւ գրասենեակ մտնելը ան ալ ու ձախ օդային համբոյրներ կու տար մեզի, ժպտող դէմքին»:

Եւ այսպէս, հպարտ ու քաջ Վահան Չերագ 9 Յունուար 1928-ին Թիֆլիսի մէջ կը գնդակահարուի՝ միանալով մեր անմահ նահատակներու փաղանգին:

Այսպիսով, 23 Յունիս 1927-ին՝ Չերագի ձերբակալութեամբ եւ ապա նահատակութեամբ վերջ կը գտնէ Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութիւնը Հայաստանի Հանրապետութեան մէջ:

(Շար. 7 եւ վերջ)

**ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

1. «Near East Relief», vol. 3, No. 45, November 12, 1921, էջ 1-2:
2. «Near East Relief», vol. 3, No. 48, December 3, 1921, էջ 2:
3. «Near East Relief», vol. 4, No. 1, January 7, 1922, էջ 2:
4. «Near East Relief», vol. 4, No. 3, January 21, 1922, էջ 3:
5. «Near East Relief», vol. 4, No. 3, January 21, 1922, էջ 4:
6. «Beginning Again At Ararat», Mabel Evelyn Elliott, M.D., Medical Director of Near East Relief, 1924, Fleming H. Revell Company, 339 pp, latest edition (third or fourth?) 2013.
7. «Near East Relief», vol. 4, No. 3, January 21, 1922, էջ 3-4:
8. «Near East Relief», vol. 4, No. 4, January 28, 1922, էջ 3:
9. «Near East Relief», vol. 4, No. 4, January 28, 1922, էջ 2:
10. «Near East Relief», vol. 4, No. 28, July 15, 1922, էջ 3:
11. <https://neareastmuseum.com/2015/11/16/the-orphan-doctor-mabel-elliott-part-ii/>
12. [https://www.archive.org/stream/beginningagainat001962mbp/beginningagainat001962mbp\\_djvu.txt](https://www.archive.org/stream/beginningagainat001962mbp/beginningagainat001962mbp_djvu.txt)
13. «Near East Relief», vol. 4, No. 5, February 4, 1922, էջ 2:
14. «Ռ-ագմիկ», Ա. տարի, քիւ 1, 15 Մայիս 1920, էջ 15:
15. <https://inknagir.org/?p=8102>
16. <https://www.politica.am/?p=31830>
17. «Կուսակցի» քերթ, 25 Յունուար 1992, Կիւմրի:
18. <https://vahanishkhanian.wordpress.com/2014/06/10/cheraz/>
19. «Հայրենիք ամսաթերթ», 41ր-դ տարի, քիւ 10, Հոկտեմբեր 1963, էջ 60-62:  
<https://www.facebook.com/Yerkirmedia/videos/10156544901824197/>



# Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի SCOUT FEST-Ը «ԴԱՐՁԻՐ ՍԿԱՈՒՏ» ՆՀԱՆԱԲԱՆՈՎ

Լան գլխաւոր առանցքը հանդիսացան գայլիկ-արծուիկներու եւ արի-արենոյշներու խոստման արարողութիւններն ու գայլիկ-արծուիկներու արի-արենոյշ խումբեր փոխանցումը: Հետաքրքրական էին զբօսայգիին մէջ տեղադրուած սկաուտական վրանները, ձեռա-

## Սարո Քշիշեան ԵՐԵՎԱՆ

Ամէն տարի «Սկաուտի օր»ը Հայաստանի մէջ կը նշուի 18 Ապրիլին (18 Ապրիլ 1920-ին Երեւանի մէջ կատարուած սկաուտական առաջին տողանցքին հետեւողութեամբ- «Մ.»):

Այս տարի, 18 Ապրիլը Մեռելոցի օրուան զուգահիւսելով, «Սկաուտի օր»ը նշուեցաւ Ճրագալոյցի օրը՝ Շաբաթ, 16 Ապրիլին, «Հանրապետութեան» հրապարակին կից, Գարեգին Նժդեհի եւ Արամ Մանուկեանի արձաններուն միջեւ գտնուող զբօսայգիին մէջ, ինչ որ իր վայրով եւ օրուան խորհուրդով աւելի արժեւորուեցաւ:

Այս առիթով կազմակերպուեցաւ Scout Fest անունով չորս ժամոց բացօթեայ ձեռնարկ մը, որ կրեց «Դարձիւր սկաուտ» նշանաբանը: Հոն էին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի մասնաճիւղերու ներկայացուցչական խումբերը:

Օրուան հանդիսութիւնը սկիզբ առաւ սկաուտական գեղեցիկ տողանցքով, առաջնորդութեամբ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի շեփորախումբին:

Յաջորդեց դրօշակի տպաւորիչ արարողութիւնը: Զբօսայգիին մէջ տիրապետող էր դրօշակի կայմը, իսկ օր-







յին աշխատանքներն ու սեղանիկները, ուր տեղադրուած էին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի գործունէութիւնը բացատրող գրքոյկներ, պէճեր, նշաններ եւ սկաուտական հետաքրքրական իրեր: Ուրախ էր մթնոլորտը: Զայն աւելի ծաղկեցուց սկաուտական պարախուժ-

բը՝ իր հրամցուցած ազգային պարերով: Այս նախաձեռնութեամբ, ազգանըպաստ իր գործունէութեամբ, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. անգամ մը եւս փաստեց իր տիրական ներկայութիւնը հայրենի մէջ:

Բարի երթ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ին:









# ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՐԿՈՒ ՓՈՒԼԻ ԴԱՍԸՆԹԱՑՔ

## Թղթակից ԵՐԵՒԱՆ

**1** 3 Մարտ 2022-ին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Երեւանի կենտրոնական գրասենեակում մեկնարկեց Առաջնորդների վերապատրաստման դասընթացների առաջին փուլը:

Շուրջ 45 սկաուտներ, կազմելով 6 խմբակներ, աշխոյժ կերպով ներգրավւեցին սկաուտական առօրեայի ու կրթական աշխատանքների մէջ: Առաջին փուլին մէջ ընդգրկուեցին հետեւեալ 3 թեմաները:-

- Սկաուտական արժէքներ
- Սկաուտական զարգացման ուղղութիւններ
- Խմբակային դրուժին

Ծրագիրը լաւ հնարաւորութիւն ընձեռեց կազմակերպութեան շարժիչ ուժին՝ առաջնորդներին իրենց գիտելիք-

ները ամրապնդելու ու փորձ ձեռք բերելու համար:

Շաբաթ մը անց, 20 Մարտին, նոյն գրասենեակում շարունակուեց Առաջնորդների վերապատրաստման դասընթացների երկրորդ փուլը:

Նպատակ ունենալով ամրապնդել սկաուտական շարքերը, վերապատրաստումների այս հատուածում Առաջնորդները գիտելիքներ ստացան ու թիմային աշխատանքներ կատարեցին հետեւեալ թեմաների շուրջ:-





- Team-building հմտութիւններ  
 - Միջ-անձնային յարաբերութիւններ  
 - Գործունէութեան ծրագրաւորում  
 եւ օժանդակ նիւթերի տրամադրում  
 Շուրջ 40 սկաուտներ մասնակցելով  
 երկու փուլից կազմուած դասընթաց-

քին, ստացան գործնական գիտելիքներ,  
 աշխատանքային թարմացուած փորձ ու  
 մեթոդաբանութիւն, որը կը կիրառեն  
 իրենց խմբերում:  
 Խմբապետական Խորհրդի կողմից  
 կազմակերպուած վերապատրաստման

դասընթացը աւարտուեց յաջողու-  
 թեամբ, ու կրելու է շարունակական  
 բնոյթ:





## Հ.Մ.Ը.Մ.Ի ԹԻՖԼԻՍԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ՇԱՐՔԵՐԸ ՀԱՄԱԼՐՈՒԵՑԻՆ 35 ՆՈՐ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՎ

28

Մայիսին, Վրաստանի համար պատմական եւ խորհրդանշական մի վայ-

րում՝ Դիզգորիում, որտեղ Դաւիթ Դ. Շինարարի բանակը, որի կազմում արիաբար կուռում էին շատ հայեր, ջախջախիչ

պարտութեան մատնեց իրեն թուրք հինգ անգամ գերազանցող թուրք-սելճուքների բանակը, տեղի ունեցաւ մի միջոցառում, որին Հ.Մ.Ը.Մ.ի Թիֆլիսի սկաուտները սպասում եւ փափաքում էին մօտ մէկ տարի:



35 սկաուտ, իրենց եղբայր-քոյրերի, ծնողների եւ ընկերների ներկայութեամբ խոստացան լինել հաւատարիմ Աստծուն, ծառայել հայրենիքին եւ ազգին, ինչպէս նաեւ հաւատարիմ մնալով հայ սկաուտի դաւանանքին, միշտ օգնել ուրիշին եւ գործել իբրեւ պարտականութեանը գիտակից, արի եւ վեհանձն մարդ:

Այսպիսով, Հ.Մ.Ը.Մ.ի Թիֆլիսի շարքերը համալրուեցին եւս 35 հայ սկաուտով, ապագայ եւ յոյս ստեղծելով գալիք հայ սկաուտների սերունդների համար:



Այս առիթով կիրարկուեց նաև զեղարուեստական պատշաճ յայտագիր-սկաուտներ հանդէս եկան ազգային-հայրենասիրական երգերով ու պարերով:



**ԱՐՑԱԽԻ  
ՄԵԿՈՒՍԻ ՇՐՋԱՆԻ  
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
ՀԱՆԴԻՊՈՒՄԸ**



23 Մարտ 2022-ին, Հ.Մ.Մ.ի Արցախի մեկուսի շրջանի վարչութիւնը հանդիպում մը ունեցաւ Հ.Յ.Գ. Արցախի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Արթուր Մոսիեանի հետ:

Վարչութեան արենապետ եղբ. Դաիթ Գրիգորեան ներկայացուց վարչութեան ներկայ գործունէութիւնը, սկստուրական եւ մարզական աշխատանքները:

Քննարկուեցան վարչութեան յառաջիկայ ծրագիրները:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԼՄԵԼՈՅԻ ՄԵԿՈՒՍԻ ՇՐՋԱՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԿԵԴՐՈՆԻՆ ԲԱՑՄԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Թղթակից  
ԱԼՄԵԼՈ

Եւ վերջապէ՛ս, շինարարական աշխատանքներու մեծամասնութիւնը աւարտած է եւ հասած ենք վերջակէտին:

Ալմելոյի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոն մը ունենալու ծրագիրը լոյս աշխարհ եկած է շուրջ 10 տարիներ առաջ: Ծրագիրին իրականացման աշխատանքները դժբախտաբար հեզասահ չընթացան. համաճարակի տագնապ, Արցախի 44-օրեայ պատերազմ, Հայաստանի ծանօթ իրադարձութիւններ, Ուքրանիոյ պատերազմ եւ անոր կապուած համաշխարհային տնտեսական լուրջ տագնապ: Բայց այս բոլորով հանդերձ, Հ.Մ.Ը.Մ. իր մեծ ընտանիքով կարողացաւ նոր կեդրոնի բացումով իր պատմութեան յաղթանակական մէկ նոր էջը արձանագրել:



7 Մայիս 2022-ը պատմական օր մը եղաւ Հոլանտայի հայաշատ Ալմելո քաղաքին համար: Միութեան սկառուտական շարքերը, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի եւ Սոտերթելիոյ (Շուէտի) սկառուներուն հետ սկառուտական կանչերով, ընդունեցին բացման պաշտօնական հանդիսութեան ներկայ հարիւրաւոր հայրենակիցներն ու հիւրերը:

Բացման պաշտօնական հանդիսութիւնը սկսաւ Ալմելոյի քաղաքապետ Արիւն Խերթսընի, Ռումանիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Տաթև Արք. Մուրատեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեանի եւ Հ.Մ.Ը.Մ. Ալմելոյի մեկուսի շրջանի ատենապետ եղբ. Մինաս Արսէնեանի կողմէ նորակառոյց կեդրոնի բացման ժապաւէնին հատումով:

## ՆԵՐԿԱՆԵՐԸ

Հանդիսութեան ներկայ գտնուեցան Ալմելոյի քաղաքապետը, քաղաքապետութեան ավագանիի ներկայացուցիչներ եւ բարձրաստիճան պաշտօնեաներ, Ռումանիոյ Հայոց Թեմի Առաջնորդը, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ֆէտի Խաթակ Գազանճեան, Հոլանտայի հայ եկեղեցւոյ հոգևոր հայրեր եւ ներկայացուցիչներ, Հ.Յ.Դ. Արեւմտեան Եւրոպայի Կեդրոնական







Կոմիտէի ներկայացուցիչ եղբւ. Հրաչ Վարժապետեան, Հ.Յ.Դ. «Արամ Մանուկեան» կոմիտէի ղեկավարներ, «Գարեգին Նժդէհ» երիտասարդական միութեան ներկայացուցիչներ, ՀՕՄ-ի, Հ.Բ.Լ.Մ-ի, Արմեյօ-Երեւանի հաստատութեան, Տոտրէխոյթ «Անի» միութեան, Հ.Մ.Լ.Մ-ի Ալքամարի եւ Առնհեմի մեկուսի շրջաններու վարչութիւններու ներկայացուցիչներ:

Օրուան յայտագիրը կազմուած էր երկու տարբերակով, առաջինը հոլանտերէն եւ անգլերէն, իսկ երկրորդը՝ հայերէն:

**ԲԱՅՈՒՄԸ ԵՒ ՏՈՂԱՆՑՔԸ**

Ըստ աւանդութեան, հանդիսութեան բացումը կատարուեցաւ Ռումանիոյ Հայոց Թեմի Առաջնորդի, Արմեյոյի հոգեւոր հովիւներու՝ Մաշտոց Քհնյ. Պաղտասարեանի եւ Խաչատուր Քհնյ. Ֆրանքեանի «Տէրունական արօթք»ով եւ օրհնութեամբ:

Այնուհետեւ, պաշտօնական յայտագիրը սկիզբ առաւ սկստական խումբերու տողանցքով՝ դահլիճ մուտքով: Տողանցքը առաջնորդեցին Հ.Մ.Լ.Մ-ի եւ քոյր մասնաճիւղերու Շուէտի եւ Ֆրանսայի դրօշները: Տողանցքի աւարտին տեղի ունեցաւ դրօշներու բարձրացման արարողութիւն, ուր սկստները երգեցին Հոլանտայի թագաւորութեան եւ Հայաստանի Հանրապետութեան քայլերգները:

**ԱՌԱՋԻՆ ՄԱՍ (ՀՈՒՆՏԵՐԷՆ ԵՒ ԱՆՂԵՐԷՆ)**

Հանդիսութեան բացման խօսքը արտասանեց մեկուսի շրջանի ատենապետ եղբւ. Մինաս Արսէնեան: Ան բարի գալուստ մաղթելէ ետք ներկաներուն, փոխանցեց վարչութեան խօսքը, նախապէս պատրաստուած տեսանիւթով ներկայացնելով Հ.Մ.Լ.Մ-ի Արմեյոյի մասնաճիւղին դերը՝ Ալքամար քաղաքի եւ Օվերայցըլ մարզի կեանքէն ներս:

**ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ**

Ապա, խօսք առաւ քաղաքապետ Արիլըն Խերթսըն: Ան ներկաները ողջունեց եւ ըսաւ. «Հրաշալի պահ է այսօր մեր քաղաքի ամէնէն յայտնի կազմակերպութիւններէն մէկը՝ Հ.Մ.Լ.Մ. Ալ-

մեյրօն ո՛չ միայն հայկական սկստական ազգային ցանցաւորուած կազմակերպութիւն է, այլեւ՝ մեր քաղաքի սկստական կազմակերպութիւններու ցանցերուն մաս կազմած է: Միութիւնը իր հայկական արմատներով, հայկական ինքնութեամբ, անդադար պիտի ապրի, առանց կանգ առնելու հոլանտական հասարակութեան համախմբման ճամբուն»:

Քաղաքապետը իր անձնական տպաւորիչ վկայութիւնները փոխանցեց Հ.Մ.Լ.Մ-ի Արմեյոյի շրջանին մասին եւ ըսաւ. «Վերջին հինգ տարիներուն լաւ յարաբերութիւններ ունեցած եմ հայ համայնքին եւ Հ.Մ.Լ.Մ-ին հետ: Իրերեւ Արմեյոյի, այս հրաշալի հայկական համայնքի քաղաքապետ, հպարտ եմ որ այսքան ջանքեր ի գործ դնելով՝ դուք այսօր միասնաբար հասած էք այս արդիւնքին»:





Շարունակելով, քաղաքապետը հաստատեց. «Հրաշալի սրահ է այս, ուր կը գտնուինք այսօր: Ան յարմար պիտի ըլլայ ժողովներու, ուսումնասիրութեան եւ դասախօսութիւններու համար, իր հրաշալի բացօթեայ դահլիճով: Նորակառոյց կեդրոնը այսօր կը գտնուի քաղաքին ծայրամասը, եկեղեցւոյ մօտ, որուն հետ սերտ յարաբերութիւններ ունի: Հ.Մ.Ը.Մ. Արմելոն այստեղ տուն գտած է, իմ կարծիքովս: Հ.Մ.Ը.Մ. Արմելոն ընտանիք է եւ ընտանիքը տան կարիքը ունի եւ այդ տունը այսօր գտած է»:

**ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԱՆԳԼԵՐԷՆ ԽՕՍԲԸ**  
Յաջորդ խօսքը անգլերէնով արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան: Ան ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի ծնունդը, Յեղասպանութեան հետեւանքով իր ուսերուն կրած ազգային հայա-

պահպանման պարտականութիւնները, համաշխարհային կառոյցը եւ մասնաւորապէս Հ.Մ.Ը.Մ.ի Արմելոյի մասնաճիւղը իր սկստական եւ մարզական առաքելութեամբ:

Իր խօսքին աւարտին, եղբ. Նաճարեան Հ.Մ.Ը.Մ.ի Արմելոյի մեկուսի շրջանի ատենապետ եղբ. Մինաս Արսէնեանի հետ միութեան «Մառաշտութեան» շքանշանով պարգեւատրեց եղբ. Փայլակ Ալետիսեանը, որ առաւելագոյնը տուած է կեդրոնին իրականացման համար:

**ՕՆՆԻԿ ԳԵԼԻԶԻԻ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄԸ «ԱՐՏԱԿԱՐԳ» ՊԱՏՈՒԱՆՇԱՆՈՎ**  
Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ֆէտի Խաժակ Գազանճեանի ընկերակցութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» պատուանշանով պարգեւատրեց Օննիկ Գելիչին՝ «Նորա-

կառոյց կեդրոնի հեռանկարով ապրող, անոր իրականացման համար ջանք չխրնայող, եկեղեցի-կեդրոն մօտիկ ըլլալու ազգապահպանման հրամայականը նկատի ունեցող անձնաւորութիւն մը, որ Արմելոյի համար իր երկարատեւ ծառայութիւններով յատուկ եւ յարգուած դիրք ունի գաղութին մէջ»:

Պարգեւատրեալ Գելիչի շնորհակալական խօսքեր փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ ներկայներուն, ներկայացնելով նորակառոյց շէնքին անհրաժեշտութիւնը թէ՛ Հ.Մ.Ը.Մ.ին եւ թէ՛ Արմելո հայաշատ քաղաքին համար: Ան յայտնեց, որ աշխարհը ներկայիս յառաջընթաց զարգացման մէջ է: Համաճարակներու եւ հիւանդութիւններու պատճառով հասարակութեան մէջ ստեղծուած է առողջապահական վատ վիճակ, ուր իւրաքանչիւր անհատ կորսնցուցած է իր ընկերային կեանքը, քանի բոլոր հանդիպումները կը կատարուին համացանցային տարբերակներով: Ուստի, նման կեդրոն մը ունենալը կը վերականգնէ հասարակութեան ընկերային հաւասարակշռութիւնը:

**ՀՈՒԱՆՏԱՅԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻԶՈՒՆ ԽՕՍԲԸ**  
Խօսք առաւ հոլանտական սկստական Ֆետերասիոնի ներկայացուցիչ Մենօ Վան Տէր Բուսսթ: Ան իր խօսքին մէջ նշեց. «Եղբայրութիւնը սահմաններ չի ճանչնար: Եղբայրութիւնը կը հասնի ամբողջ աշխարհին եւ նման սկստականութիւն կարելի է գտնել ամբողջ աշխարհի մէջ: Լորտ Պէյտրն Փաուրլի եւ Շաւարշ Քրիսեանի նախադրեալները տակաւին





կենդանի են: Սկսած 2016-ից սկսած պիտի շարունակվի համայնքներին ներս գործել, իբրև պատասխանատու մասնագիտական կամաւոր կազմակերպութիւն-անշուշտ, մի՛ մոռնաք կամաւոր բաւը:

«Սկսած 2016-ից Հոլանտայի մէջ տարածաշրջանային աջակցութիւն պիտի ստանայ եւ հոլանտական սկսածական ահադեմիան պիտի կերտէ երիտասարդներ, որոնք իբրև սկսածներ պիտի գործեն պատասխանատուութեան եւ համագործակցութեան չափանիշներով, եւ ճիշդ այս համագործակցութիւնն է, որ մենք այնքան կարեւոր կը նկատենք այսօր: Աշխարհը օրէ օր կը փոխուի: Սկսած 2016-ից եւս կը փոխուի: Ուստի, Հ.Մ.Ը.Մ. Ալմելօն ողջունելի յաւելում մըն է մեր համայնքին մէջ»:

Ապա, նորակառոյց կեդրոնին կարեւորութեան մասին խօսելով, հոլանտական սկսածական Ֆետերասիօնի ներկայացուցիչը ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ-ի սկսածական այս գեղեցիկ շէնքը պիտի նպաստէ շրջանին մէջ երիտասարդութեան եւ սկսածութեան զարգացման: Ո՛չ միայն հայ երիտասարդութեան, այլեւ՝ կեդրոնին մէջ հիւրընկալուող ամբողջ երիտասարդութեան եւ Ալմելօյի սկսածական այլ կազմակերպութիւններուն»:

Խօսքին վերջաւորութեան, հոլանտացի ներկայացուցիչը Հ.Մ.Ը.Մ. Ալմելօն շնորհաւորեց նոր կեդրոնին բացման համար եւ ըսաւ՝ եկէ՛ք համագործակցութեամբ զարգացնենք սկսածութիւնը այս տարածաշրջանին մէջ: Աւարտին, Վան Տէր Քուասթ յուշանուէրներ

փոխանցեց միութեան սկսածական շարքերու խմբագրութեան եւ ատենապետին:

Յայտնենք, որ պաշտօնական յայտագիրը ունեցաւ քանի մը ընդմիջումներ, որոնց ընթացքին սկսածները ներկայացուցին կարգապահական եւ օրինապահութեան վարժութիւններ: Կատարեցին նաեւ շքերթ:

**ՅՈՒԹՊՈՒԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻՆ ԽՕՄԲԸ**

Շքերթէն ետք բեմ հրաւիրուեցաւ KNVB-ի՝ Հոլանտայի ֆութպօլի ֆետերասիօնին ներկայացուցիչը՝ Աթթըր Պրունըլէյֆ: Իր խօսքին մէջ ան ըսաւ. «Հիանալի է, այսօր մենք կը մասնակցենք Հ.Մ.Ը.Մ-ի Ալմելօյի գեղեցիկ կեդրոնի բացման հանդիսութեան»:

Շարունակելով, ան հաստատեց. «Տարիներ շարունակ դուք ձեր ներդրումը բերած էք Հ.Մ.Ը.Մ-ի Ալմելօյի սկսածութեան եւ մարզական ձեռ-

նարկներու ընդլայնման եւ զարգացման: Դուք միշտ տարբեր եւ նորանոր ճանապարհներու հնարաւորութիւններ ստեղծած էք»:

Հոլանտացի ներկայացուցիչը շեշտեց, որ միութեան կեանքը կարեւոր ազդեցութիւն ունի երիտասարդութեան վրայ, ընկերութեան մէջ շաղկապուելու եւ գործելու համար»: Ապա, ան աւելցուց. «Կը շնորհաւորեմ Հ.Մ.Ը.Մ-ը այս գեղեցիկ շէնքին կառուցման համար, յառաջընթաց յաջողութիւններ մաղթելով ապագայի բոլոր ծրագրերներուն»: Իր ելոյթին աւարտին, ներկայացուցիչը միութեան ատենապետին փոխանցեց KNVB-ի դրօշակը:

**ՅՈՒՇԱՆՈՒՒՆԵՐՈՒ ՓՈԽԱՆՑՈՒՄ**

Հանդիսութեան առաջին մասի աւարտին, մեկուսի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Մինաս Արսէնեան միութեան անունով յուշանուէր-





ներ փոխանցեց քաղակապետ Արիրն Խերթաընին, Ֆուլթալդի ֆետերասիոնի ներկայացուցիչ Աթթը Պրունըբլէյֆին, Հոլանտայի սկաուտութեան ներկայացուցիչներուն եւ շէնքի ճարտարպետներուն՝ Ֆոնս Նայլընտին եւ Հանս Վան Պրուին:

**ԵՐԿՐՈՐԳ ՄԱՍ  
(ՀԱՅԵՐԷՆ)**

Օրուան հանդիսութեան երկրորդ մասը՝ հայերէնի բաժինը սկսելէ առաջ տեղի ունեցաւ միութեան նորակառոյց շէնքի սրահի անուանակոչման արարողութիւն՝ մասնակցութեամբ Ռուման-





**ՃԱՆՉՆԱՆՔ**

**«ԱՐՏԱԿԱՐԳ»  
ՊԱՏՈՒԱՆՇԱՆԻ  
ԱՐԺԱՆԱՅԱԾ  
ՕՆՆԻԿ ԳԵԼԻՉԻ**



Օննիկ Գելիչի ծնած է 1 Փետրուար 1966-ին, պարմական Հայաստանի Տիգրանակերտ ևսահանգի Շիրակի քաղաքը: 1971-ին ան փոխադրուած է Հոլանդիա եւ ուսումը աւարտել է երբ դարձած է գործարար:

2000 թուականէն մինչեւ օրս Օննիկ Գելիչի Ալմելոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ վարչութեան արեւնապետն է: Ան աշխոյժ կերպով գործակցած է Հայ Դարի րեզոյն յանձնախումբին հետ եւ մեծ դերակատարութիւն ունեցած է Ալմելոյի մէջ Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշարակին խաչքարերու համալիրի կառուցման մէջ:

Օննիկ Գելիչի սերտ յարաբերութիւններ ունեցած է Հ.Մ.Ը.Մ.ի մեկուսի մասնաճիւղի յաջորդական վարչութիւններուն հետ եւ մեծ ներդրում ունեցած է նորակառոյց կեդրոնի հողաշերտի ապահովման, կառուցման եւ անհրաժեշտ վարկերու ապահովման աշխատանքին մէջ: Ալմելոյի քաղաքապետին եւ աւագանիի պաշտօնատարներուն հետ իր մնայուն կապերով ան օրը-օրին յաղթահարած է կեդրոնին կառուցման օրինակական եւ նիւթական բոլոր դժուարութիւնները: Առանց իր օժանդակութեան, դժուար թէ կարելի ըլլար անան կեդրոնի մը իրականացումը շրջանին մէջ:

Առ այդ, Հ.Մ.Ը.Մ.ի Ալմելոյի մեկուսի մասնաճիւղի վարչութեան առաջարկով եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան որոշումով, 7 Մայիս 2022-ին, նորակառոյց կեդրոնին բացման օրը, Օննիկ Գելիչի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան արեւնապետին շնորհաբար արժանացաւ միութեան «Արտակարգ» պատուանշանին:

Իոյ Թեմի Առաջնորդ Տաթևե Եպս. Մուրատեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեանի, մասնաճիւղի ատենապետ եղբ. Մինաս Արսէնեանի եւ հանգուցեալ եղբ. Վրէժ Չաթալեանի ընտանիքի: Եղբ. Արսէնեան ներկաներուն ներկայացուց Չաթալեան ընտանիքին նիւթաբարոյական լայն աջակցութիւնը կեդրոնին: Ապա, Չաթալեան ընտանիքին անդամները բարձրացուցին «Վրէժ Չաթալեան սրահ»-ի որմնանկարին ծածկը:

**ԱԼՄԵԼՈՅԻ ՄԱՍՆԱԾԻՉԻ**  
**ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԲԸ**

Սրահի անուանակոչութենէն ետք, հանդիսութեան երկրորդ բաժինը սկըսաւ Հայաստանի եւ Արցախի քայլերդներով:

Հուսկ, Հ.Մ.Ը.Մ.ի Ալմելոյի մասնաճիւղի վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Մինաս Արսէնեան: Ան ի միջի ալրոց ըսաւ. «27 տարիներ առաջ, Միջին Արեւելքէն եւ աւելի ճիշդ Իրաքէն հոս հաստատուած հայրենակիցներ, իրարու մօտ համախմբուած, սփիւռքահայրութեան ճակատագիրով մտահոգ եւ ազգային գաղափարով զինուած՝ որոշեցին եւ հիմնեցին Հ.Յ.Դ.ի մարմին մը, որ մինչեւ այսօր ճանցուած է իբրեւ «Արամ Մանուկեան» կոմիտէ: Այս մարմինը տարի մը ետք, 23 Յունիս 1996-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Միսեռեանին ներկայութեամբ որոշեց եւ հիմնեց Հ.Մ.Ը.Մ.ի Ալմելոյի մեկուսի մասնաճիւղը:

Կազմուեցաւ հիմնադիր առաջին վարչութիւնը, որուն անդամներէն մաս մը ներկայ են այսօր մեզի հետ»:

Ապա, եղբ. Արսէնեան նշեց, որ անցնող 26 տարիներուն մասնաճիւղը թափառեցաւ զանազան վայրեր եւ սրահներ՝ հանդիպելով բազմաթիւ դժուարութիւններու: Անհրաժեշտ էր ունենալ սեփական սրահ մը կամ վայր մը՝ մասնաճիւղին աշխատանքները անկաշկանդ ծաւալելու համար: 10 տարիներ առաջ ծրագիր մը մշակուեցաւ, հողատարածք գնուեցաւ, դրամահաւաք կազմակերպուեցաւ եւ վարկ առնելով ազդանշանը տրուեցաւ շէնքի շինարարական աշխատանքներու մեկնարկին: Աշխատանքները սկսան Ապրիլ 2020-ին, հիմնաբարը գետեղուեցաւ Յուլիս 2020-ին, իսկ շինարարութիւնը աւարտեցաւ Մայիս 2021-ին: Տակաւին ունինք բաւական աշխատանքներ՝ ամբողջացնելու համար ծրագիրը եւ կարիքը կայ նիւթական մեծ աջակցութեան»:

Եղբ. Արսէնեան նկատել տուաւ, որ 7 Մայիսը տօնելու օր է, ան մեզ կը կանգնեցնէ մեծ պարտականութիւններու եւ պատասխանատուութիւններու դիմաց: «Մենք ամէնօրեայ աշխատանք պէտք է տանինք այս օճախը պահելու համար, շարունակելով պատրաստել եւ դաստիարակել հայ պատանին եւ երիտասարդը, հայասէր եւ ազգասէր հայորդիներ



կերտելու նպատակով, մի՛շտ պատրաստ ծառայելու իրենց հայրենիքին՝ Հայաստանին եւ Արցախին: Կոչս է բուրբուն կանգնել Հ.Մ.Ը.Մ.ի կողքին, որովհետեւ հզոր Հ.Մ.Ը.Մ.ը ձեռն է եւ ան հզոր ազգի ծառան է: Այս շնչքը կառուցելով մենք ամբողջ հայութեան կը փաստենք, որ Սփիւռքը տակաւին կայ եւ հզոր է: Հզոր է իր աւանդական կազմակերպութիւններով, ի մասնաւորի՝ Հ.Մ.Ը.Մ.ով: Այս է մեր պատասխանը այն բոլոր ձայներուն, որոնք կ'ըսեն կամ կ'ոգնեն ապացուցել, որ աւանդական Սփիւռքին դերը աւարտած է»:

Խօսքին աւարտին, եղբ. Արսէնեան շնորհակալութիւն յայտնեց կեդրոնին կառուցման նպաստած գաղութի բոլոր մարմիններուն եւ անհատ բարերարներուն:

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՏՆԱՊԹԵՏԻՆ ԽՕՍՔԸ**

Այնուհետեւ խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան: Ան ըսաւ, որ «Իւրապատուկ եւ պատմական առիթով այսօր հաւաքուած ենք պաշտօնապէս վկայելու Հ.Մ.Ը.Մ.ի Արմելոյի մեկուսի շրջանի նորակառոյց կեդրոնին ծնունդը եւ ընդունելու զայն մեր սիրելի միութեան՝ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան մեծ ընտանիքէն ներս:

«26 տարիներ առաջ հիմնուած Հ.Մ.Ը.Մ.ի Արմելոյի մեկուսի շրջանը, շարունակեց եղբ. Նաճարեան, հակառակ համեմատաբար իր երիտասարդ

տարիքին եւ անդամներու փոքր թիւին, այս նախաձեռնութեամբ այսօր իր արժանաւոր դիրքը կը գրաւէ Հ.Մ.Ը.Մ.ի աւելի մեծ շրջաններու կողքին: Նախաձեռնութիւն մը, որուն մասին միայն հպարտութեամբ կրնանք անդրադառնալ:

«Այս կեդրոնին մէջ սերունդներ պիտի դաստիարակուին հայկական շունչով, ազգային միութենական զգացումներով՝ մի՛շտ պատրաստ հայ ժողովուրդի ծառայութեան առաջին դիրքերուն վրայ, յարգելու Եռագոյն դրօշը եւ անոր առջեւ երդում կատարելով՝ խոստանալ ծառայել Հայաստանին եւ Արցախին:

«Ինչպէս Արմելոյի մէջ, նաեւ այլ շրջաններ, միշտ պիտի ըլլան հայեր, որոնք իբրեւ նուիրեալ հաւատաւոր գաւակները այս ժողովուրդին, անկարելին կարելի դարձնելով պիտի շարունակեն նոր ամբողջներ եւ հաւատքի նոր խորաններ շինել՝ վառ պահելու համար հայոց ջա-

հը, հայ ազգի աւանդը, որպէսզի անտէր չմնան անոնք»:

Իր կարգին, եղբ. Նաճարեան շնորհակարան մասնաճիւղը պատմական այս իրադրոժովին համար եւ խօսքը եզրափակեց ըսելով. «Մենք լաւատես ենք ապագայով ու ապագայի մեր յաղթանակներով: Մեր լաւատեսութիւնը սակայն բարի ցանկութիւններէ չի բխիր միայն, այլ՝ մեր աշխատանքէն, կամքէն եւ համոզումէն, միշտ երիտասարդութեան ի սպաս գործելու մեր տրամադրութենէն, հայութեան եւ Հայաստանին անմնացորդ ծառայելու մեր երդումէն: Մեր պատգամը մէկ է եւ կը շարունակէ մնալ: Ամէնո՛ւն շունչով, բոլորին համար: Հ.Մ.Ը.Մ.ին համար: Հայութեան եւ Հայաստանին համար (Եղբոր խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 48):

**Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉԻՆ ԽՕՍՔԸ Հանդիսութեան իր խօսքը փոխան-**





ցեց նաեւ Հ.Յ.Դ. Արեւմտեան Եւրոպայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Հրաչ Վարժապետեան: Ան ներկաները ողջունելէ ետք ըսաւ. «Տարօրինակ, բայց մտահոգիչ զուգադիպութեամբ մը, այսօր Հայաստանէն բաւական հեռու, այս փերըուն կը կատարենք ակումբի մը բացումը: Այն պահուն երբ մեր հայրենիքը ճգնաժամ կ'ապրի, երբ հայրենիքը՝ Արցախն ու Հայաստանը դժոգակ պահեր կ'ապրին, մենք այստեղ հաւաքուած՝ նոր ակումբի մը բացումը կը կատարենք: Հ.Մ.Ը.Մ.ը եւ Հ.Յ.Դ.ն նոյն մետալին երկու տարբեր երեսներն են: Հ.Մ.Ը.Մ.ի ակումբը նաեւ Հ.Յ.Դ.ի ակումբն է, ճիշդ է նաեւ հակառակը: Հ.Մ.Ը.Մ.ը առաջին հերթին հայակերտման եւ հայապահպանման միութիւն է: Հ.Մ.Ը.Մ.ը հայ մարդուն հարազատ սերունդն է: Հ.Մ.Ը.Մ.ականը հայն է, հայերէն մտածող, հայերէն խօսող, Հայաստանի համար մտածող, Հայաստանի համար աշխատող, աշխարհի ո՛ր անկիւնն ալ որ գտնուի ան»:

Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի դերակատարութեան մասին արտայայտուելով, Հրաչ Վարժապետեան շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ.ականը կ'ապրի ու կը շնչէ Հայաստանով, կ'ապրի հայրենիքով, վերադառնալու համար հայրենիք: Այս ակումբը Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հ.Յ.Դ.ի ակումբն է, բայց ամէնէն առաջ ան հայութեան ակումբն է, բոլորին տունն է: Այս ակումբին մէջ հայ մանուկը հայերէն պիտի սորվի Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով: Այս ակումբին մէջ հայ երիտասարդը հայօրէն պիտի դաստիարակուի Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով: Նոյն երիտասարդը գա-

ղափարական իր ծնունդը պիտի ստանայ Հայ Դատի ճամբով: Հոս է, որ նոր սերունդը պիտի սորվի հայերէն, հայ մշակոյթ, հայ գրականութիւն, հայոց լեզու, հայոց պատմութիւն, Հայ Դատի պատմութիւն, պիտի ստանայ գաղափարական սնունդ, պիտի ստանայ Հ.Մ.Ը.Մ.ական գիտելիքներ եւ այս ակումբին մէջ պիտի սորվի, որ թուրքը եւ թրքական պետութիւնը են ու կը մնան հայ ժողովուրդի թշնամին, այնքան ատեն որ չեն վերադարձուցած մեր իրաւունքները: Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ.ի համար Հայաստանի ազատագրութեան դատը սրբազան է եւ այս իմաստով Հ.Մ.Ը.Մ.ը եւ մեր ամբողջ ընտանիքը ունի եւ կը շարունակէ ունենալ մէկ տեսլական, ամբողջական Հայաստանի տեսլական»:

Շարունակելով, Հրաչ Վարժապետեան հաստատեց, որ «Նորակառոյց կեդրոնը այս փերըուն հասած առաջին սերունդին երազն էր, տեսլականն էր, որ

իրականացաւ: Կեդրոնը սակայն միայն Ալմելոյի հայութեան համար պիտի չըլլայ, ո՛չ ալ՝ Հոլանտայի հայութեան համար, այս կեդրոնը վստահ ենք որ պիտի դառնայ համաեւրոպական կեդրոն, Հ.Մ.Ը.Մ.ի համաեւրոպական բանակումներու եւ ճամբարներու կեդրոն, երիտասարդական կեդրոն, որովհետեւ այս կառոյցը ո՛չ միայն պատիւ կը բերէ բոլորիս, այլեւ՝ իբրեւ կեդրոն կը հանդիսանայ ազգային կառոյց: Ու պէտք է ըսել, որ Հ.Մ.Ը.Մ. ինչ որ կ'առնէ ազգէն իրեն չի պահեր զայն, այլ ազգին կը վերադարձնէ աւելիով, տասնապատիկով»:

Նշենք, որ հանդիսութեան երկրորդ մասը՝ հայերէն բաժինը բազմիցս ընդմիջուեցաւ սկառուներու կողմէ ներկայացուած Հ.Մ.Ը.Մ.ական եւ ազգային արտասանութիւններով:

**ԵԶՐԱՓԱԿԻՉ ՊԱՏԳԱՄԸ**

Հանդիսութեան եզրափակիչ պատ-





գամը արտասանեց Ռուսմանիոյ Թեմի Առաջնորդ Տաթև Եպս. Մուրատեան: Ներկաները ողջունելէ ետք ան ըսաւ. «Երբ Հ.Մ.Ը.Մ. կ'ըսենք պահ մը պէտք է լուռ կանգնինք, որովհետեւ ասոնք միայն չորս տառեր չեն. Ասոնք Հայաստանակերտման եւ հայակերտման գրաւականներ են: Երբ Հ.Մ.Ը.Մ. կ'ըսենք պէտք չէ յիշել միայն անցեալը: Հին չէ Հ.Մ.Ը.Մ.ը, այն կառոյցն է ան, որ ամէն տարի կը նորոգուի եւ աւելի նորոգուած յառաջ կ'երթայ: Հ.Մ.Ը.Մ.ը միայն կազմակերպութեան մը կեդրոնը չէ, Հ.Մ.Ը.Մ.ը ամէն հայր տունն է, եւ ես հպարտ եմ, որ ժամանակին Մուսուլի մէջ եղած եմ Հ.Մ.Ը.Մ.ական փոքրիկ գայլիկ, թէեւ շատ երկար չեմ եղած,

բայց գիտցած եմ, որ Սփիւռքի մէջ, հոն ուր Հ.Մ.Ը.Մ. եղած է, հոն ուր հայկական մեր կուսակցութիւնները եղած են, այդ համայնքը ունեցած է զօրաւոր հիմեր»:

Մուրատեան Եպս. այս առիթով իր խրատական պատգամը փոխանցեց ոգեշունչ խօսքով մը, երբ ըսաւ, որ «Հայաստանը յաւերժօրէն պիտի ապրի, Արցախը պիտի զօրանայ եւ մի' մոռնաք, որ տակաւին մենք ճամբայ ունինք կրտրելիք, պիտի հասնինք Սասուն: Չըսէք, որ Սրբազանը խելագար է, այո՛, եթէ ազգին համար պէտք է, ես խելագար կը դառնամ: Մի՛ վախնաք որեւէ բանէ, որեւէ ուժէ: Աստուած մեզի հետ է: Եթէ ես չտեսնեմ, մեր զաւակները չտեսնեն,

մեր զաւակներուն զաւակները «Քոչարին» անպայման պիտի պարեն Արարատին շուրջ»:

Աւարտին, Մուրատեան Եպս. յայտնեց «Զկարծենք որ ակումբը շինեցինք վերջացաւ: Ո՛չ, չէնք շինելը շատ դիւրին է, չէնքին մէջ մարդ պահելը շատ դժուար է: Անոր համար կը յուսամ այս կեդրոնին 10-ամեակին, 20-ամեակին եւ 30-ամեակին եւս հոս կ'ըլլանք միասնաբար»:

**ՅՈՒՇԱՆՈՒՒՆԵՐՈՒ ԲԱՇԽՈՒՄԸ**

Օրուան հանդիսութիւնը աւարտին հասաւ յուշանուէրներու բաշխումով: Այմելոյի մեկուսի մասնաճիւղի ատենապետ եղբ. Մինաս Արսէնեան յուշանուէրներ յանձնեց հետեւեալներուն.-

- Մասնաճիւղի հիմնադիր վարչութեան հանդիսութեան ներկայ անդամներուն՝ քոյրեր Յասմիկ Օհանեան, Նուարդ Պօղոսեան, Սիրան Պօղոսեան, եղբայրներ Վարդան Պօղոսեան, Յարութ Պօղոսեան, Նուպար Մարտիրոսեան եւ Հ.Յ.Դ. «Արամ Մանուկեան» կոմիտէութեան հիմնադիր անդամ Ազատ Պօղոսեան:

- Ամսթերտամի Ս. Հոգի եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տարօն Քհնյ. Տաթևուսեան:





- Առնհեմի առաքելական եկեղեցւոյ խորհուրդի ներկայացուցիչ եղբ. Շանթ Սիմոնեան:

- Ալմելոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ներկայացուցիչ Օննիկ Գեյլիշի:

- Հ.Բ.Լ.Մ.ի Հոլանտայի ներկայացուցիչ:

- Հ.Յ.Դ. «Գարեգին Նժդեհ» երիտասարդական միութեան ներկայացուցիչ:

- ՀՕՄ-ի «Շուշի» մասնաճիւղի ներկայացուցիչ:

- Հ.Յ.Դ. «Արամ Մանուկեան» կոմիտէութեան ներկայացուցիչ:

- Հ.Յ.Դ. Արեւմտեան Եւրոպայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ:

- Հ.Մ.Լ.Մ.ի Առնհեմի մեկուսի շրջանի ներկայացուցիչ:

- Ռուսմանիոյ Թեմի Առաջնորդ Տաթև Եպս. Մուրատեան:

Հանդիսութիւնը վերջ գտաւ Հ.Մ.Լ.Մ.ի «Յառաջ նահատակ» քայլերգով:

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՐԱԽՃԱՆՔԸ**

Հանդիսութենէն ետք, ըստ մասնաճիւղին աւանդական սովորութեան, օրը աւարտեցաւ ընտանեկան խրախճանքով, որ տեղի ունեցաւ Ալմելոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ «Գալուստ Կիւլպէնկեան» սրահին մէջ:

Հ.Մ.Լ.Մ.ական խանդավառութեան եւ ազգային բարձր ոգեւորութեան մըթնոլորտի մէջ, ատենապետ եղբ. Մինաս Արսէնեան յատուկ յուշանուէրներ յանձնեց Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեանին, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ֆէտի Խաթակ Գազանճեանին, Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանսի ներկայացուցիչ եղբ. Պօղոս Մահպուկեանին, Հ.Մ.Լ.Մ.ի Միւնիխի ներկայացուցիչ եղբ. Վիգէն Վարդանեանին եւ Հ.Մ.Լ.Մ.ի Սոսերթելոյ ներկայացուցիչ եղբ. Բաֆֆի Աւագեանին: Յուշանուէրներու բաշխումէն ետք, բոլորը միասնաբար, իբրեւ մէկ ընտանիքի անդամներ, հատեցին այս առիթով պատրաստուած կարկանդակը եւ խրախճանքը շարունակուեցաւ մինչեւ երեկոյեան ուշ ժամեր:





# ՀԱՅՆ ՈՒ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՊԵՏՔ Է ՊԱՀԵԼ Ի ԳԻՆ ԱՄԷՆ ՉՈՀՈՂՈՒԹԵԱՆ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՎԱԶԷՆԱՃԱՐԵԱՆԻ ԽՕՍՔԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԼՄԵԼՈՅԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԿԵԴՐՈՆԻ ԲԱՑՄԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

**Ի**ւրայատուկ եւ պատմական առիթով այսօր հաւաքուած ենք պաշտօնապէս վկայելու Հ.Մ.Ը.Մ.Ի Ալմելոյի մեկուսի շրջանի նորակառոյց կեդրոնին ծնունդը եւ ընդունելու գայն մեր սիրելի միութեան՝ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան մեծ ընտանիքէն ներս: Այսօր իր աւարտին կը հասնի այս յատուկ ծրագիրը, որ ծնունդ առաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Ալմելոյի շրջանի հիմնադրութեամբ՝ 23 Յունիս 1996-ին:



համախմբուեցան՝ ներշնչուելով հայապահպանման գաղափարախօսութեան, միութեան նշանաբանէն՝ «Բարձրացիր-բարձրացո՛ւր»էն, իրենց հետ բերելով նուիրում, հաւատք եւ պատրաստակամութիւն՝ կերտելու համար այս ամբողջ, պահպան կանգնելու համար հայ մշակոյթին, լեզուին եւ արժէքներուն ընդդէմ հայ ազգի, Հայաստանի եւ Արցախի սպառնացող վտանգներուն:

Շրագիր մը, որ երկու տարի տակաւին չանցած իր գործնական հիմնարկէքէն, ահա կու գայ փառաւոր ձեւով իր աւարտին հասնելու եւ իր դերը վերցնելու Հ.Մ.Ը.Մ.Ի ընտանիքին մէջ, անոր երկրորդ հարիւրամեակին եւ անկէ անդին, յաղթական ապագայ կերտելու, բայց նաեւ ստեղծելու հոգեկան հայրենիք, առիթը ընծայելով մեր հայրենակիցներուն ապրելու իբրեւ հայ, հայրենիքէն հեռու, բայց միշտ հայրենիքը պահելով իրենց սրտին մէջ:

Այս կեդրոնին մէջ սերունդներ պիտի դաստիարակուին հայկական շունչով, ազգային միութենական զգացումներով՝ միշտ պատրաստ հայ ժողովուրդի ծառայութեան առաջին դիրքերուն վրայ, յարգելու Եռագոյն դրօշը եւ անոր առջեւ երդում կատարելով՝ խոստանալ ծառայել Հայաստանին եւ Արցախին:

26 տարիներ առաջ հիմնուած Հ.Մ.Ը.Մ.Ի Ալմելոյի մեկուսի շրջանը, հակառակ համեմատաբար իր երիտասարդ տարիքին եւ անդամներու փոքր թիւին, այս նախաձեռնութեամբ այսօր իր արժանաւոր դերքը կը գրաւէ Հ.Մ.Ը.Մ.Ի աւելի մեծ շրջաններու կողքին: Նախաձեռնութիւն մը, որուն մասին միայն հպարտութեամբ կրնանք անդրադառնալ:

Այս կեդրոնին ծնունդը կը զուգարկի անցեալ շաբաթ՝ Հայոց Յեղասպանութեան յիշատակման օրը Տէր Զօրի մէջ թրքական ձեռքերով քանդուած եկեղեցւոյ մէջ Պատարագի վերսկսման, իբրեւ վերածնունդի ազդանշան:

Հայու տարագիր ճանապարհը ուր որ ալ առաջնորդած է գայն աշխարհի չորս կողմը, իր հոգեւոր պարտականութիւնը նկատած է միշտ առաջին հերթին հիմնել եկեղեցի, հաւատքի իր խորանը, ապա դպրոց, կրթութեան հնոցը եւ ակումբ՝ երիտասարդութիւնը կրթելու համար իբրեւ տիպար հայ եւ տիպար քաղաքացի: Որովհետեւ ուր որ ալ հայը գտնուած է եղած է միայն տիպար քաղաքացի, հաւատացեալ անհատ եւ մշակոյթի ջատագով:

Ինչպէս Ալմելոյի մէջ, նաեւ այլ շրջաններ, միշտ պիտի ըլլան հայեր, որոնք իբրեւ նուիրեալ հաւատաւոր գաւակները այս ժողովուրդին, անկարելի կարելի դարձնելով պիտի շարունակեն նոր ամբողջներ եւ հաւատքի նոր խորաններ շինել՝ վառ պահելու համար հայոց ջահը, հայ ազգի աւանդը, որպէսզի անտէր չմնան անոնք:

Ալմելոյի գաղութը տարբեր եղած չէ: Ալմելոյի հայերը փաստեցին, որ հայն ու հայութիւնը մեր կեանքներուն համար անհրաժեշտ իրականութիւններ են, զորս պէտք է պահել ի դին ամէն զոհողութեան:

Հ.Մ.Ը.Մ.ը, յարգելի՛ ներկաներ, առոյգ, առողջ ու կորովի հայութիւն պատրաստող միութիւն է:

Շնորհիւ հայ համայնքը ներկայացնող նուիրեալ խմբակի մը, թիւով փոքր՝ բայց հաւատքով մեծ, Հ.Մ.Ը.Մ.ական ըլլան անոնք կամ հայ համայնքի հաւատարիմ գաւակներ, անոնք

Հ.Մ.Ը.Մ.ը մեր ուժին աղբիւրն է: Մեր յաջողութեան գրաւականներէն մէկն է, որուն պէտք է գուրգուրալ ազգովին:

Մենք լաւատես ենք ապագայով ու ապագայի մեր յաղթանակներով: Մեր լաւատեսութիւնը սակայն բարի ցանկութիւններէ չի բխիր միայն, այլ՝ մեր աշխատանքէն, կամքէն եւ համոզումէն, միշտ երիտասարդութեան ի սպաս գործելու մեր տրամադրութեանէն, հայութեան եւ Հայաստանին անմընացորդ ծառայելու մեր երդումէն: Մեր պատգամը մէկ է եւ կը շարունակէ մնալ: Ամէնո՛ւն շունչով, բոլորին համար: Հ.Մ.Ը.Մ.ին համար: Հայութեան եւ Հայաստանին համար:



## **Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԱԻԱԼԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ՄԿԱՈՒՏԱԿԱՆ ԵՐԿՕՐԵԱՅ ԲԱՆԱԿՈՒՄԸ**

### **Թղթակից ԼՍԻԱԼ**

**Հ**ՄԸՄ-ի Լաւալի մասնաճիւղին խմբապետական եւ աստիճանաւորական կազմը, գլխավորութեամբ մասնաճիւղի ընդհանուր խմբապետուհի քոյր Զապէլ Թորոսեանի, Մարտին, «Քինքորա» բանակավայրին մէջ կատարեց սկստական եր-

կօրեայ բանակում:

Բանակումը ընդգրկեց զանազան դասախօսութիւններ (սկստական, ազգային, ընդհանուր զարգացման, հոգեբանական եւ մանկավարժական), գրոյց, ձեռային աշխատանք եւ զարգացման մրցում: Դասախօսութիւններու շարքին եղան «Հ.Մ.Ը.Մ-ի կանոնադիրը» եւ «Գանատայի քաղաքականութիւնը» նիւթերը, զորս ներկայացուցին

մասնաճիւղի ատենապետ եղբ. Ասատուր Երեմեան եւ քոյր Սոնա Լախոյեան:

Բանակողները բարձր տրամադրութեամբ ու ազահով վերադարձան իրենց տունները: Անոնք «Ցտեսութիւն» երգով իրենց բուռն փափաքը յայտնեցին շուտով կրկին հանդիպելու օգտաշատ նման բանակումներով:

## **Հ.Մ.Ը.Մ.-«ԿԱՄՔ»Ի ՄՈՆԹՐԷԱԼԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԹԷՅԱՍԵՂԱՆ-ՀԱԻԱՔՈՅԹԸ**

### **Զարեհ Տոյմաճեան ՄՈՆԹՐԵԱԼ**

Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի Մոնթրէալի մաս-

նաճիւղի վարչութեան նախաձեռնութեամբ, Երկուշաբթի, 28 Մարտ 2022-ի երեկոյեան, Հայ Կեդրոնի ճաշասրահին մէջ տեղի ունեցաւ թէյասեղան-հաւա-

քոյթ մը, որուն հրաւիրուեցան մասնաճիւղին հիմնադրութենէն մինչեւ այսօր վարչական պաշտօնով ծառայած բոլոր քոյրերն ու եղբայրները:





Մասնաճիւղին պատմութեան ընթացքին ծառայած 157 անդամներէն (32-ը առյաւէտ բաժնուած, 13-ը քաղաքէն կամ երկրէն դուրս բնակութիւն հաստատած) ներկայ էին 58 քոյրեր եւ եղբայրներ: Յուզիչ եւ տպաւորիչ էր մանաւանդ 64 տարիներ առաջ մասնաճիւղի անդրանիկ վարչական կազմի անդամ եղբ. Պետրոս Գաբրիէլեանի ներկայութիւնը:

Մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Լէոն Արապեան իր բացման խօսքին մէջ երախտագիտութեամբ շնորհակալութիւն յայտնեց բոլորին, իրենց անցեալի ծառայութիւններուն համար, ապա յատուկ պատասառի վրայ ան մանրամասնօրէն ներկայացուց մասնաճիւղին ներկայ իրավիճակը, աշխատանքները, յառաջիկայի ձեռնարկներն ու ծրագրերը, ինչպէս նաեւ՝ դիմագրաւած զանազան դժուարութիւնները:

Ներկաները հետաքրքրութեամբ ունկնդրելէ ետք գեկոյցը, մեծ ոգեւորութեամբ սկսան գրուցել իրարու հետ, իւրաքանչիւրը յիշելով հին օրերու գործունէութիւնը, յաջողութիւնները, նուաճումները ինչպէս նաեւ դժուարութիւնները, այս բոլորը համեմելով հետաքրքրաշարժ մանրամասնութիւնով:

Ընդունելութեան աւարտին, մասնաճիւղին վարչութիւնը յիշատակի նուէրներ (Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի Մոնթրէալի մասնաճիւղին նշանակով զարդարուած թեթեւ վերարկու մը եւ ընթացիկ տարուան օրացոյցը) բաժնեց բոլոր ներկաներուն, որոնք իրարու հրաժեշտ տուին գոհունակութեամբ եւ վերստին տեսնուելու յոյսով ու փափաքով:

## ՄԱՅԻՍԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ Հ.Մ.Ը.Մ.Ի ՏՈՂԱՆՑՔ՝ ՄՈՆԹՐԷԱԼԻ Մէջ

### Շողիկ Ազարիկեան ՍՈՆԹՐԵԱԼ

Երկար դադարէ ետք, Կիրակի, 29 Մայիս 2022-ի կէսօրուան ժամը 11.45-ին, Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերն ու եղբայրները աշխուժօրէն փութացին L'Acadie պողոտայ, որ մեկնակէտը պիտի ըլլար 28 Մայիսի փառահեղ յաղթանակին 104-րդ տարեդարձը նշելու:

Այս տարուան աւանդական տողանցքը կազմակերպեց Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղին վարչութիւնը: Տողանցքին մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան անդամները, Շրջանային Սկաուտ-Խորհուրդի անդամները, Շրջանային Վարչութեան մարզական յանձնախումբի անդամները, Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղի սկաուտական եւ մարզական խումբերը, Հ.Մ.Ը.Մ.ի Լաւալի մասնաճիւղի սկաուտական խումբերը, Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղի շեփորախումբը, ինչպէս նաեւ յոյն սկաուտներէն փաղանգ մը:

Այս տարուան տողանցքը կը տարբերէր նախորդ տարիներու տողանցքերէն, որովհետեւ վարչութիւնը գեղեցիկ գաղափար մը յղանալով՝ հրաւիրած էր մասնաճիւղին տարիներու վարչութեան անդամները, որպէսզի միանան շարքերուն եւ միասնաբար քայլեն:



Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղին շեփորախումբին նուագակցութեամբ տողանցքը թափ առաւ L'Acadie պողոտայէն եւ անցնելով Charles Gill, Joseph-Casavant եւ Dudemaine փողոցները, հասաւ Ս. Յակոբ Մայր եկեղեցոյ շրջափակը, ուր դիմաւորուեցաւ Գանատայի Թեմի Առաջնորդ Բաբգէն Արք. Չարեանի, Մոնթրէալի Ս. Յակոբ Մայր եկեղեցոյ հոգեւոր հովիւ Սուրէն Արք. Գաթարոյեանի, Գառնիկ Ա. Քհնյ. Գոյունեանի եւ գաղութի համակիրներուն կողմէ:

Շեփորախումբը հնչեցուց Հայաստանի քայլերգը եւ տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն:





Դրօշակի արարողութենէն ետք խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբւոն Արապեան: Իր խօսքին մէջ եղբայրը շնորհակարար եղաւ, ապա յիշեցուց, որ մեր հայրենիքը անգամ մը եւս կ'ենթարկուի փորձութեան եւ հարկ է այս խառնաշփոթ օրերուն ըլլալ աւելի միակամ ու վճռական՝ անսասան պահելու համար զայն, որպէսզի անոր երկնակամարին վրայ շարունակէ Եռագոյնը ծածանիլ՝ շնորհիւ իր զաւակներուն, որոնք մէկ բռունցք դարձած կրնան դէմ դնել թշնամիին:

Ապա, եղբւր Արապեան հրաւիրեց Գանատայի Թեմի Առաջնորդ Բարգէն

Արք. Չարեանը, որպէսզի տայ իր հայրական օրհնութիւնը: Սրբազան հայրը անդրադարձաւ 1918-ի հերոսական ճակատամարտներուն եւ կարեւորեց անոնց յաղթանակը, որովհետեւ առանց այդ հերոսամարտերուն հայ ժողովուրդը պիտի չունենար այսօրուան Հայաստանը:

Առաջնորդը «Պահպանիչ»ով փակեց իր խօսքը:

Այնուհետեւ տեղի ունեցաւ մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին եւ կամաւորներու կողմէ պատրաստուած կրկնեփնջերու վաճառք:





## «ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻ ՕՐ»Ը ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ



### Թղթակից ԼՈՆՏՈՆ

**Ե**րկար շաբաթներու փորձերէ եւ պատրաստութիւններէ ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի մեկուսի մասնաճիւղը 2 Ապրիլին հանդիսաւոր ձեռնարկով մը նշեց «Հայ սկաուտի օրը»: Զեռնարկը բաղկացաւ երկու մասէ՝ պաշտօնական բաժին եւ սկաուտական յայտագիր:

Պաշտօնական մասը սկսաւ դրօշակակիրներու մուտքով եւ սկաուտական տողանցքով: Ապա, 16 նորագիրներ կատարեցին սկաուտական իրենց առաջին երգումը: Յաջորդեցին Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հայաստանի քայլերգներուն կատարումները:

Տեղի ունեցաւ գնահատագիրներու եւ մրցանակներու բաշխում՝ տարուան ընթացքին յաջողութիւններ արձանագրած սկաուտներու: Այս առիթով նշուեցաւ մեկուսի մասնաճիւղին հիմնադրութեան 43-ամեակը եւ հատուեցաւ մասնաւոր կարկանդակ:

Յայտագրի պաշտօնական մասի աւարտէն ետք, ներկաները վայելեցին սկաուտներու ծնողներուն կողմէ պատրաստուած հիւրասիրութիւնը, մինչ սկաուտներ պատրաստուեցան իրենց



յայտագիրի գործադրութեան: Յայտագիրին թեման էր Հ.Մ.Լ.Մ.ական սկաուտին կեանքը:

Ներկաները հաճոյքով դիտեցին, թէ ինչպէս հինգ տարեկան փոքրիկ մը առաջին անգամ գայլիկ-մըջնիկ կը դառնայ, սկաուտական կեանքի մէջ ազգին ու մշակոյթին կը ծանօթանայ, չարքաշ կեանք կ'ապրի եւ տիպար քաղաքացի ըլլալ կը սորվի:

Յայտագիրին շարունակութեան մէջ ներկաները տեսան, թէ ինչպէս Հ.Մ.Լ.Մ.ական առողջ միջավայրի մէջ գայլիկն ու մըջնիկը կը մեծնան, զանազան փորձառութիւններ ձեռք կը ձգեն, բանակումի կը մասնակցին, ազգային երգեր կ'երգեն եւ սկաուտական դաշնանքին կը ծանօթանան:

Ապա, գայլիկն ու արծուիկը կ'անցնին արի-արենուշական շարքեր, կը հետեւին կարգերու (Բ. կարգ, Ա. կարգ...), Հայաստանի մէջ կը մասնակցին



ցին համա-Հ.Մ.Լ.Մ.ական բանակումի, ուր ձեռք կը բերեն բազմաթիւ ծանօթութիւններ, բարեկամութիւններ, որոնք անմոռանալի յիշատակներ կը պարգեւեն իրենց:

Յայտագիրին վերջին մասով ներկաները տեսան, թէ ինչպէս անցեալի գայլիկն

ու արին, մըջնիկն ու արենուշք մեծցած եւ ղեկավար դարձած են եւ իրենց կարգին կրտսեր սկաուտներու դաստիարակներ եղած՝ «Բարձրացիր-բարձրացուր» սկզբունքէն մեկնած:

Յայտագիրը աւարտին հասաւ «Միութեան երգ»ով:





ՄՈՏԵՐԹԵԼԻՈՅ  
ՄԱՐԶԱԿԱՆ  
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ  
ԿԸ ՓՈՐՁԱՐԿԷ  
ՓԱՏԷԼ ԽԱՂԻՆ  
ԿԻՐԱՐԿՈՒՄԸ

**Թղթակից  
ՄՈՏԵՐԹԵԼԻՍ**

Վերջին տարիներուն զարգացած եւ լայն հռչակ ստացած Փատէլ խաղը հեռու չէր կրնար մնալ Հ.Մ.Ը.Մ-ի Շուէտի Սոսերթելիոյ մարզական յանձնախումբին ծրագիրներէն:


Քորոնայի համաճարակը հազիւ

սահմանափակուած՝ յանձնախումբը ծրագրեց եւ դաշտեր ապահովեց, որպէսզի այս խաղով հետաքրքրուողները կարենան փորձեր կատարել:

Այսպէս, 11 Մարտ 2022-ի երեկոյեան ժամը 7-9, 15 քոյրեր եւ եղբայրներ ներկայացան Սոսերթելիոյ Փատէլ Հոլի սրահը, փորձելու անուանի այս խաղը: Երկու ժամ ետք, ժպիտը բոլորին դէմքե-

րուն վրայ էր, քրտինքը սպասուածէն արագ կը հոսէր: Առաջին փորձը կատարեցաւ մեծ յաջողութեամբ:

Խանդավառուած առաջին փորձին յաջողութենէն, շաբաթական դրուլութեամբ փորձերը կը շարունակուին մինչեւ օրս: Մասնաճիւղը այժմ կը մտադրէ Փատէլ խաղը նկատի ունենալ իր կիրարկած մարզախաղերու շարքին:



**ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ  
ՍԹՈՔՀՈԼՄԻ ՄԷՋ**

Հ.Մ.Ը.Մ.ի Սքոփհոլմի մեկուսի վարչութեան կազմակերպութեամբ, Կիրակի, 20 Մարտ 2022-ին տեղի ունեցաւ երդման արարողութիւն եւ խմբապետի, փոխ խմբապետի, ինչպէս նաեւ առաջնորդի եւ փոխ առաջնորդի աստիճաններու փոխութիւն:







Photo by Markar

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 107-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ԵՒ ՊԻՔՑԱՅԱՅԻ Մէջ

### Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

Տարիներու սովորութեան համաձայն, Հայոց Ցեղասպանութեան յիշատակի օրուան նախօրեակին, 23 Ապրիլին, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի սկաուտները հայրենասիրական մէկուկէս միլիոն նահատակներուն յիշատակը ոգեկոչեցին Պիքֆայայի՝ նահատակաց յուշարձանին շուրջ կազմակեր-

պուած ձեռնարկով մը, որուն ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբայր Հայկ Թապազեան, դիւանի անդամներ՝ քոյրեր Սիլվա Սաղըրեան եւ Սոնա Պօղոսեան, Շրջանային Սկաուտական Խորհուրդն ու խմբապետական կազմը, մասնաճիւղերու վարչութիւններու եւ Սկաուտական Խորհուրդներու ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային սկաուտական շե-

փորախումբը եւ մասնաճիւղերու խմբապետական կազմերը: Նոյն պահուն, երեկոյեան ժամը 6-ին, յուշարձան կ'այցելէին նաեւ Հ.Յ.Դ. Լիբանանի Պատանեկան Միութիւններու անդամներ:

Բոլորը նախ լուռ ու կարգապահ շարքերով ուղղուեցան դէպի յուշարձան եւ ծաղկեպսակներ զետեղեցին Ցեղասպանութեան նահատակաց յուշարձանին առջեւ: Ապա, դպրեվանքի տեսուչ Պարոյր Վրդ. Շէրնեգեան փոխանցեց իր պատգամը: Ան իր պատգամին մէջ յատկապէս շեշտեց. «Ազգի մը ամենէն մեծ թշնամին անտարբերութիւնն է: Եթէ անտարբերութեամբ մօտենանք մեր նահատակներուն մէնք պիտի ըլլանք մեր ազգին թշնամիները եւ ոչ թուրքը»:

Այնուհետեւ, Հ.Յ.Դ. Լիբանանի Պատանեկան Միութիւններու խօսքը ներկայացուց Արեւիկ Գազանճեան, իսկ Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Սկաուտական Խորհուրդին եւ խմբապետութեան անունով խօսք առաւ Շրջանային խմբապետուհի քոյր Լուի Պիլալեան:

Յաջորդեցին «Յառաջ նահատակ» քայլերգի եւ «Կիլիկիա» օրհներգի երգեցողութիւնները, որոնցմէ ետք ներկա-





ները մոմեր վառեցին եւ իրենց ուխտը վերանորոգեցին հայութեան պայքարի ջահը միշտ վառ պահելու:

**ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆ  
ՊԱՀԱՆՋԱՏԻՐԱԿԱՆ  
ԵՐԹԻ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳԻ**

Օր մը ետք, 24 Ապրիլին, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը, Շրջանային Սկաուտական Խորհուրդն ու շեփորախումբը, Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերու սկաուտները, Սկաուտական Խորհուրդի եւ վարչութիւններու ներկայացուցիչներ, մասնակցեցան Պուրճ Համուտէն Անթիլիասի Մայրավանք կատարուած պահանջատիրական երթին, ներկայ գտնուեցան Հայոց Յեղասպանութեան մէկուկէս միլիոն սրբադասուած նահատակներու յիշատակի ոգեկոյճման սուրբ եւ անմահ Պատարագին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ:



Յաւարտ Պատարագի եւ Արամ Ա. Կաթողիկոսի պատգամին փոխանցման, տեղի ունեցաւ ծաղկեպսակներու զետեղում: Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անունով եւս ծաղկեպսակ մը զետեղուեցաւ Հայոց Յեղասպանութեան յուշարձան-մատրան առջեւ՝ առ

ի յարգանք 107 տարի առաջ թուրքին եաթաղանին զոհ դացած մէկուկէս միլիոն անմեղ հայորդիներու յիշատակին:

**ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՊՐԻԼԵԱՆ  
ՈԳԵԿՈՉԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒ**

Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը, Շրջանային Սկաուտական Խորհուրդի ներկայացուցիչները եւ սկաուտական շեփորախումբը ներկայ գտնուեցան նաեւ Լիբանանի հայաշատ շրջաններուն մէջ Հ.Յ.Դ. կոմիտէութիւններու կազմակերպած ոգեկոյճական ձեռնակներուն: Շեփորախումբը ազգային քայլերգներով եւ ազգային-յեղափոխական երգերու եղանակներով ամէնուրեք խանդավառեց պահանջատէր հայորդիները: Այսպէս,

- Կիրակի, 24 Ապրիլ 2022-ի առաւօտեան ժամը 9-ին, Հ.Մ.Ը.Մ. ներկայ գրտնրեցաւ էշրէֆիէի «Ազատամարտ» սկումբի «Բրիտտափոր» կոմիտէու-



Թեան կազմակերպած քայլարշաւին, որ տեղի ունեցաւ «Ազատամարտ» ակումբէն դէպի Հայ Կաթողիկէ Պատրիարքարան:

- Նոյն օրը, երեկոյեան ժամը 6-ին, Հ.Մ.Ը.Մ. ներկայութիւնն էր Նոր Մարաշի «Սարգարապատ» կոմիտէութեան կազմակերպած Ապրիլեան նահատակաց յիշատակի ոգեկոչման արարողութեան, որ տեղի ունեցաւ «Աբօ Աշճեան» պողոտային վրայ տեղադրուած՝ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի խաչքարին շուրջ:

- Երկուշաբթի, 25 Ապրիլ 2022-ին, երեկոյեան ժամը 8-ին, Հ.Մ.Ը.Մ. իր մասնակցութիւնը բերաւ «Է. Ակնունի» կոմիտէութեան կազմակերպած՝ Հայոց Յեղասպանութեան 107-ամեակի յիշատակի եւ ուխտի վերանորոգման հաւաքին:



## ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԵՐՏԻԶՆԵՐՈՒՆ

Հայաստանի անկախութեան տօնին առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը ներկայացնող պատուիրակութիւնն մը Շաբաթ, 28 Մայիս 2022-ի կէսօրէ ետք ժամը 4-ին այցելեց Պուրճ Համուտի եւ Փըրն Շրպպէի Ազգային գերեզմանատուներ, ուր իրենց վերջին հանգիստը գտած են Հայաստանի Ա. Հանրապետութեան հիմադիրներէն եւ նախարարներէն ոմանք: Վարչութեան անդամները ծաղկեպսակներ գետեղեցին Հ.Յ.Դ. պանթէոնին, Նիկոլ Աղբալեանի, Լեւոն Շանթի, Արշակ Յովհաննէսեանի, Արամ Սահակեանի, Հրաչ Փափազեանի, Վարդան Շահպազի եւ Խմբապետ Մուշեղի շիրիմներուն:

Աւանդութեան վերածուած այս նախաձեռնութեան նպատակն է Մայիսեան յաղթանակները տօնելով յատկապէս յիշել եւ յարգանքի տուրք մատուցել այն բոլոր նուիրեալներուն,



որոնք Յեղասպանութեան տաժանելի տարիներէն ետք կարողացան հայ ժողովուրդը համախմբել, կազմակերպել յաղթական ճակատամարտներ եւ հողային նուազագոյն կորուստով զծել այսօրուան Հայաստանի սահմանները: Արդարեւ, ազգային իւրայատուկ արժէք ու խորհուրդ ներկայացնող անմահներու փաղանգի ներկայացուցիչներէն ոմանց աճիւնները կը հանգչին Լիբանանի մէջ, եւ անոնց անմահացած վաստակը ոգեւորութեան աղբիւր է իրերայաջորդ սերունդներու համար:





## Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՐԱՆԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ՏՈՂԱՆՑՔՈՎ ՆՇԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 104-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

### Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

Հովանավորությամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, նախագահութեամբ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Արք. Փանոսեանի եւ կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, Կիրակի, 29 Մայիս 2022-ի կէսօրէ ետք ժամը 5-էն սկսեալ, Պուրճ Համուտի քաղաքապետարանի

դաշտին վրայ տեղի ունեցաւ Հայաստանի անկախութեան 104-րդ տարեդարձին նուիրուած տողանցքը, որ եկաւ խանդավառութիւն, դրական ներուժ եւ յոյս ներարկելու լիբանանեան վերջին երկու տարիներու ծանր առօրեայով ապրող եւ քորոնայի սահմանափակումներուն պատճառով համախմբումներէ զրկուած, սակայն իրարու կարօտցած լիբանանահայութեան:

Արդարեւ, մերօրեայ բարդ պայմաններուն մէջ, երբ լուսաւոր լիցքերու բա-

ցակայութիւնը զգալի է, կարելի չէր չյուզուիլ եւ միեւնոյն ատեն չքաջաբերել՝ ի տես խորիստ կեցուածքով, վճռական քայլերով, բարձր ճակատներով տողանցող տարագաւորներուն, որոնք՝ մոկլիէն մինչեւ երիցագոյն անդամ, մէկական «դեսպան»ներն են հայութեան ջահը միշտ բարձր ու վառ պահած Հ.Մ.Ը.Մ.ին, կրողն ու գործադրողն են անոր «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր» նշանաբանին. մէկական հաւատաւորներ, որոնք եկան անգամ մը եւս հաստատելու, որ լուսաշող ապագան են իրենք, իրենց գետինը թնդացնող քայլերով պիտի շարունակեն երթը միութեան հիմնադիրներուն, անոր գոյատեւման եւ բարգաւաճման համար իրենց կեանքը նուիրած Հ.Մ.Ը.Մ.ականներուն՝ մեզի հետ ըլլան անոնք թէ անդենականին մէջ: Յոյս եւ դրական ներուժ կը շողար նաեւ տողանցքին մասնակից ԼԵՄ-ականներէն եւ մարզիկներէն՝ նոր սերունդի արժանաւոր ներկայացուցիչներէն, որոնց բարձրացուցած Եռագոյնը ինքնին պատգամ է ու խորհուրդ:

Դաշտը գտնուող պատուոյ հիւրերն ու ժողովուրդը մեծապէս խրախուսուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան եւ Այնճարի շեփորա-





խումբերուն հնչեցուցած ազգային երգերու խրոխտ եղանակներով, փառատօնին շունչ ու եռանդ հաղորդող, յայտագիրը վարող Հրակ Աւետանեանի ազգայնաշունչ պատգամներով՝ հաւատարմով, որ աւելի լաւ ապագայ մը ունենալու պայքարը երբեք կանգ չէ առած ու պիտի չառնէ:

**ԲԱՅՈՒՄԸ**

Մայիսեան տղանցքը ընթացք առաւ Լիբանանի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի դրօշակներուն ծածանումով՝ Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբին կողմէ հնչած Լիբանանի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգներուն կշռոյթով: Ապա, խորհրդաւոր կերպով կատարուեցաւ ջահավառութիւնը՝ երէց եւ նոր սերունդներու ներկայացուցիչներուն ձեռամբ:

Այնուհետեւ Հ.Մ.Ը.Մ-ի զոյգ շեփորախումբերուն հնչեցուցած երաժշտութեան կշռոյթներով խրոխտ, հպարտ եւ հաստատ քայլերով, պահանջատէր ու ինքնավստահ հայու դոփիւնով տղանցեցին Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերը, Շըրշանային խմբապետութիւնը, վեթերան խմբապետները եւ Հ.Յ.Դ. ԼԵՄ-ը, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցչա-

կան եւ մասնաճիւղերու մարզական խումբերը:

**ԲԱՅՄԱՆ ԽՕՄՔԸ**

Տողանցքին բացման խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շըջանային Վարչութեան քարտուղար եւ սկաուտականի ներկայացուցիչ քոյր Սոնա Պօղոսեան: Քոյրը բարի գալուստ մաղթեց բոլորին նշելով, թէ կամքէ անկախ պատճառներով քանի մը տարուան դադարէ ետք որոշած են դարձեալ տողանցքով տօնակատարել Մայիսեան անկախութեան պանծալի տօնը, որպէսզի կրկին փառաւորուի Մայիսեան յաղթանակ կերտածներուն եւ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադիրներուն, անոր ծառայած վաստակաւոր ծանօթ ու անծանօթ բազմաթիւ հերոսներուն յիշատակը:

**ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՄՔԸ**

Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շըջանային Վարչութեան խօսքը ուղղեց ատենա-

պետ եղբ. Հայկ Թապագեան: Եղբայր նախ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի մեծ ընտանիքին անունով շնորհակտրեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան յաղթանակը Լիբանանի երեսփոխանական ընտրութիւններուն, լիբանանահայութեան հարազատ ձայները ստացած երեսփոխաններուն մաղթելով յաջողութիւն:

Եղբ. Թապագեան դիտել տուաւ, որ 104 տարիներ առաջ, երբ Հ.Մ.Ը.Մ-ը հիմնուեցաւ, կազմեց սկաուտական եւ մարզական հզօր բանակ, որ նուիրեալ կերպով եւ մեծ զոհողութեամբ ծառայեց ազգին ու տէ՛ր կանգնեցաւ անոր դրօշին՝ միշտ ոգեւորիչ ուժ հանդիսանալով հայութեան համար, ծառայելով ամէնուր՝ Հայաստանի թէ՛ Սփիւռքի տարածքին: Ան նշեց, որ իր գաղափարներուն կառչած եւ ազգանուէր նպատակներուն հետամուտ, միութիւնը տարուէ տարի աւելի աշխուժացաւ ու յաւելեալ գիտակցութեամբ կատարեց ազգասիրական պարտաւորութիւննե-



ըը՝ միշտ ձգտելով յաւելեալ ու աւելի լաւ բան մը տալ իր ժողովուրդին:

«Հայ ժողովուրդի ժամանակակից պատմութեան մէջ Հ.Մ.Ը.Մ.ը իր իւրաքանչեւ տեղը ունի, ինչպէս նաեւ իր կարեւոր նպատակը՝ ազգային պահանջատիրութեան, հայապահպանման մէջ՝ դաստիարակելով սերունդներ, անոնց մէջ դրոշմելով հայու ինքնութիւնը վառ պահելու յանձնառութիւնը: Հ.Մ.Ը.Մ.ը 104 տարիներ շարունակ եղաւ հայ պատանիին ու պարմանուհիին հոգեկան ու ֆիզիքական կրթութեան ամենէն վառ օճախը, եւ դարձաւ անոնց երկրորդ ծնողը՝ ծառայութեան մարդակերտումի եւ հայակերտումի դարբնոցը», ըսաւ եղբ. Թապազեան: Ան շեշտեց, որ այս միութիւնը այն երիցագոյն եւ հզօրագոյն միաւորն է, որ՝ հետեւելով «Քարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին, միշտ բարձր պահեց սկստական ու մարզական ջահը եւ իրերայաջորդ սե-

րունդներ դաստիարակեց մարզական ոգիով, տիպար քաղաքացիի եւ անձնուէր հայու վեհ սկզբունքներով:

Շեշտը դնելով Լիբանանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի դերակատարութեան վրայ, Շըրջանային Վարչութեան ատենապետը

յայտնեց, որ 1924 թուականէն ի վեր Լիբանանի մէջ սկստներու, մարզիկներու եւ միութենականներու դաստիարակութեան լծուած, բարձր արժանիքներու տէր եւ տիպար քաղաքացիներ պատրաստութեան ձգտող այս միութիւնը եղաւ լիբանանահայութեան ազգային հպարտութեան հիմնական արտայայտիչներէն մէկը՝ համալիբանանեան մակարդակի թէ՛ գաղութի պատմութեան մէջ, որովհետեւ զանազան յաղթանակներ կերտեց եւ աչքառու նուաճումներ արձանագրեց: Եռագոյնին առաջնորդութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ը հայութեան ենթագիտակցութեան մէջ վառ պահեց հզօր հայրենիքի տեսլականը, ապա հասաւ Հայաստան, ուր եւս խիտ շարքերով դիմաւորեց Եռագոյնը, իր միութենականներուն ճամբով ծառայեց նաեւ Արցախի մէջ, որուն համար իր շարքերէն նոյնիսկ նահատակներ տուաւ:

Եղբ. Թապազեան ընդգծեց, որ աշխարհը հարուածած քրոնա ժահրին հարուածները չինայեցին նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքին, որ կորսնցուց իր լաւագոյն եղբայրներէն ու քոյրերէն, կորսնցուց իրենց յատուկ դրոշմը՝ ձգած եղբայրներ, որոնց կորուստը ծանր ազդեց միութենականներուն վրայ: Ան յայտնեց, որ Պէյրութի նաւահանգիստին պայթումը եւ հայկական թաղամասերու քանդումը միութիւնը դրին նոր մարտահրաւէրի դէմ յանդիման, եւ Հ.Մ.Ը.Մ. հասաւ շրջանի բնակչութեան օժանդակութեան՝ իր կարելիութեան սահմաններուն մէջ





փորձելով թեթեցնել ազգայիններուն ցաւերը: Իր խօսքը եզրափակելով, եղբ-թապազեան նշեց, որ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը կը գործէ «Առողջ միտք, առողջ մարմինի մէջ» սկզբունքով, միշտ մեկնակէտ ունենալով «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր» նշանաբանը՝ մեր ազգային ժառանգութիւնները նորահաս սերունդներուն փոխանցելու պարտականութեամբ եւ հայ պատանին ու երիտասարդը օտար ազդեցութիւններէն զերծ պահելու նախաձիւնըրութեամբ:

**Հ.Մ.Ը.Մ-ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ**

Ապա խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ-Վաչէ Նաճարեան: Ան դիտել տուաւ, որ Մայիսեան տողանցքը նուիրուած է 1918-ի Սարգարապատեան մեծ յաղթանակին, որ պայծառ փարոսը հանդիսա-

ցաւ մեր պատմութեան յաջորդող յաղթանակներուն եւ բարոյական կողմնացոյցը ապագայի մեր երթին:

Եղբ. Նաճարեան յայտնեց, որ 28 Մայիսը եղաւ ու կը մնայ մեր ազգին վերածնունդի օրը եւ ուժի ազբիրը: «Պատմական գուգադիպութեամբ է, որ հայ ազգի ծոցէն ծնած, հայ ազգի ծառայութեան նուիրուած այս միութիւնը եւս իր երթին սկսաւ 1918-ին եւ իր անփոխարինելի տեղը ունեցաւ մեր ժողովուրդի կեանքին մէջ: Հ.Մ.Ը.Մ-ը այսպիսով դարձաւ 28 Մայիսի արժէքներուն դրօշակակիրը եւ Եռագոյնին պաշտպանը», յայտնեց ան, դիտել տալով, որ ամէն տարի տօնելով 28 Մայիսի փառաւոր անցեալը, միութիւնը կը տօնէ այդ փառաւոր անցեալին արժէքները, որպէսզի մենք կարենանք արժեւորել մեր ներկան, առաջնորդուելու համար դէպի հայ ազգի աւելի լաւ ապագայ:

Եղբ. Նաճարեան նշեց, թէ կար ժամանակ, երբ Մայիս 28 տօնելը շատերու համար անհասկնալի էր: Հ.Մ.Ը.Մ-ն էր Մայիս 28-ին եւ Եռագոյն դրօշակին պահապանը: Այս միութիւնն էր, որ տեւաբար յիշեցուց մեր նախորդներուն կտակը, պատգամը եւ յարատեւ պայքարելու կամքը, մինչեւ որ վրայ հասաւ Հայաստանի վերանկախութիւնը:

«1991-ի վերանկախութենէն ետք, կարծէք Մայիս 28-ը կորսնցուց իր երբեմնի իմաստն ու փայլքը շատ մը շրջանակներու մէջ: Ան նկատուեցաւ սովորական ազգային տօն, անարժան՝ փառաշուք տողանցքներով նշուելու: Հ.Մ.Ը.Մ-ը սակայն շարունակեց ջանք բարձր պահել, հաւատարմով իր պատգամին, ճիգերը չհնայելով եւ առանց յանձնուելու այդ կացութեան, շարունակեց վառ պահել Մայիս 28-ի գաղափարը՝ արժանալիակը կերպով կատարելով անկախութեան տօնակատարութիւնը, Մայիս 28-ի գաղափարին ընդմէջէն իր ծնունդը նշելով յաջորդաբար երկու տարի, 1500-է աւելի թիւով տողանցողներով, Երեւանի Հանրապետութեան հրապարակին վրայ», դիտել տուաւ ան:

Լուսարձակի տակ առնելով այն, որ Մայիսեան այդ տողանցքը կը կատարուի Լիբանանի քաղաքական, ընկերային-տնտեսական բարդ պայմաններուն մէջ, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը հաստատեց, որ հսկայական ջանք եւ ճիգ ի գործ կը դնէ միութեան Լիբանանի շրջանը՝ մեր պատանի-երիտասարդներուն հետ ըլլալու, անոնց մարմնակրթական առողջ դաստիարա-





կուլթիւն տալու եւ իբրեւ տիպար քաղաքացիներ ու առաքինի հայեր դաստիարակելու համար: Ան յայտնեց, որ Մայիսեան այս տողանցքը վկայ է, թէ, հակառակ երկրի չափազանց ծանր պայմաններուն, որքան գործ կը կատարուի, որքան նուիրում եւ զոհողութիւն կայ Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերը կանգուն պահելու, մեր ժողովուրդին ազգային խանդավառութիւն եւ հպարտութիւն տալու համար, շեշտելով, որ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը այսօր աւելի քան երբեք Լիբանանի շրջանի կողքին է եւ ուրախութեամբ կը հետեւի անոր աշխատանքներուն՝ միշտ պատրաստ օժանդակութեան ձեռք երկարելու անոր, «որովհետեւ ինչպէս բոլորին, նաեւ Հ.Մ.Ը.Մ-ին համար Լիբանանը եղած է ու կը մնայ Սփիւռքի կեդրոնական գաղութը՝ իր պատմական դերակատարութեամբ, ներկայ եւ ապագայ յանձնառութիւններով»:

«Այսպէս, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի շրջանը կը շարունակէ ժողովուրդի ծառայութեան ջանք բարձր պահել՝ քաջ գիտնալով, որ Մայիս 28-ի գաղափարը ֆիզիքական հայրենիքէն անդին է եւ իրեն համար «Զարթի՛ր, լաօ» լոկ կարգախօս է, այլ Հայաստանի եւ հայութեան փրկութեան տեւական աշխատանք է, պայքար է ու կամք: Վկայ Արցախեան 44-օրեայ պատերազմը, երբ միութիւնը իր բոլոր կարողութիւնները ի սպաս դրաւ պատերազմին եւ անոր հետեւանքներուն դարմանումին: Յարգանքով պէտք է խոնարհիլ յիշատակին դիմաց այն 10 Հ.Մ.Ը.Մ-ականներուն,

որոնք նահատակուեցան 44-օրեայ պատերազմի ճակատներուն վրայ: Փա՛ռք իրենց յիշատակին», ըսաւ Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական Վարչութեան ատենապետը:

Իր պատգամը եզրափակելով, եղբ. Նաճարեան շեշտեց, որ այսօր Հ.Մ.Ը.Մ-ը կը շարունակէ կատարել իր առաքելութիւնը նոյն թափով, հաւատքով եւ վճռակամութեամբ՝ պահպանելով միութեան գաղափարախօսութիւնը, կրթելով եւ ստեղծելով հոգեկան հայրենիք, առիթը ընծայելով մեր հայրենակիցներուն ապրելու իբրեւ հայ, հայրենիքէն հեռու, բայց հայրենիքը միշտ պահելով իրենց սրտին մէջ՝ Մայիս 28-ի պատգամով առաջնորդուելով: Ան նշեց, որ առանց ազգային միացեալ դիտակցութեան եւ ամբողջական Հայաստանի տեսլականին, առանց միացեալ ու կարգապահ նուիրեալ շարքերուն, առանց ֆիզիքայէս ու հոգեպէս տո-

կուն երիտասարդութեան կարելի չէ հզօր ու բարգաւաճ ամբողջական Հայաստան ունենալ, կարելի չէ վերականգնող Արցախ ունենալ (Պատգամին ամբողջութիւնը տեսնել էջ 10-11):

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻՆ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՊԱՏԳԱՄԸ**

Փակման խօսքը արտասանեց եւ հայրական իր պատգամը ուղղեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Արք. Փանոսեան: Առաջնորդը յայտնեց, որ փառք կու տանք Աստուծոյ, որ դարձեալ մեզի առիթ ընծայեց Պուրճ Համուտի քաղաքապետարանի մարզալանին մէջ, Հ.Մ.Ը.Մ-ի արի-արեւոյցներու շքերթով, Հայաստանի անկախութեան 104-րդ տարեդարձը նշելու եւ Մայիս 28-ի փառապանծ ժառանգութեան դիմաց Եռագոյն դրօշը պարզելով՝ այդ հաւաքը վերածելով երանութեան հանդէսի: Այս առիթով, Առաջնորդը իր գնա-







հատանքը յայտնեց Հ.Մ.Ը.Մ-ին, մասնաւորաբար մեր մատղաշ սերունդի առողջ դաստիարակութեան գործին մէջ անոր ունեցած կարեւոր դերակատարութեան համար, նաեւ բարձր գնահատեց լիբանանահայութիւնը, որ հակառակ իր դիմագրաւած տեսակաւոր հարցերուն ու խնդիրներուն, վաղուան մեր կեանքին համար կը շարունակէ իր համայնական կեանքին մէջ պաշտպանել ու պահել իր ինքնութիւնը սնուցանող կենսական ու կարեւոր արժէքները:

Առաջնորդը շեշտեց, որ Մայիս 28-ն մեր ժողովուրդի հաւատքին ու դարաւոր յոյսին գեղեցիկ ծաղիկն է: «Անկասկած, անոր բուրմունքը մեր մէջ ապրեցրնելու գործը մեր գերագոյն պարտականութիւնն է: Այսօր Հայաստանի անկախութեան տարեդարձը կը նշենք ո՛չ միայն անցեալի անցողարձերուն մէջ դիտելու համար մեր հայրենիքը, այլեւ՝ դարերու մաքառումներով վեր բարձրացած եւ իր ազատութեան ու անկախութեան բարձրակէտին Հայաստանը տեսնելու, ինչպէս որ պէտք էր ըլլար այսօր:

«Յաւօք, այսօր ամպամած է մեր հայրենիքին երկնակամարը: Տակաւին երէկ, Արցախը դարձեալ վերածուեցաւ աւերուած բերդի: Նոր եւ դժուար բուժուելիք վէրքեր բացուեցան մեր հոգիներուն խորը եւ մեր թշնամին, եաթաղանը ձեռին, դարձեալ կանգնած է մեր դռներուն դիմաց ու կը սպառնայ նաեւ խլել պապե-

նական մեր ժառանգութենէն հրաշքով փրկուած ափ մը հողը: Մասնաւորաբար մեր օրերու քաղաքական անորոշ ու պղտոր դասաւորումներուն մէջ, անհրաժեշտ է անդրադառնալ, որ պատմութիւնը, անցեալի դէպքերու յիշատակաւոր ըլլալով հանդերձ, առաւելաբար պատկերն է այն ճիգին, զոր ժողովուրդները ի գործ կը դնեն, որպէսզի ապրին սեփական արժէքներով, ստեղծագործեն իրենց հոգիով եւ յաւերժանան համաձայն իրենց ոգեղէն իղձերուն», շեշտեց ան:

Շահէ Արք. Փանոսեան լուսարձակի տակ առաւ այն, որ 104 տարիներ առաջ ձեռք բերուած ազատութիւնը ինչ արժէք կը ներկայացնէ, եթէ այսօր Հայաստանի մէջ, հայ մարդը չ'ուզեր զայն պաշտպանելով, աւելի լուսաւոր արշալոյսներ քանդակել հայ ազգի կեանքին մէջ: Ի՞նչ կ'արժէ անկախութիւնը, եթէ այսօրուան մեր կեանքովն ու աշխա-

տանքովը, մենք չենք փորձեր նմանիլ անոնց, որոնք ազատութեան բազմաթիւ ընծայեցին իրենց կեանքը եւ չենք ձգտիր հասնիլ մեր ժողովուրդի անկատար իղձերուն ու տենչերուն:

«Պէտք է գիտակցինք, որ ինչպէս երէկ, նոյնպէս ալ այսօր, ազատութեան շքեղ կերպարանքին մէջ միայն կրնանք հայօրէն ապրիլ ու բարգաւաճիլ: Այդ իսկ պատճառով, մեր ձեռքերը պէտք է եղբայրական սիրով դարձեալ զիրար զօրացնեն, որպէսզի, Մայիս 28-ի փառքի տօնը շարունակենք ապրիլ՝ հայրենի հողին վրայ դարձեալ ծաղկելու եւ մեր երազներուն ու խոտջաներուն հասնելու անշեղ հաւատքով:

«Մեր հայրերը չնահատակուեցան մեռնելու սիրոյն, այլ մեր ազգը անմահութեան տանելու հաւատքով ու տենչով: Հետեւաբար, հաւատանք, որ այսօրուան տխուր տեսարանին դիմաց, ի վերջոյ պիտի ծագի նոր արշալոյս եւ հայ ժողովուրդը, իր քայլերը դէպի նոր բարձունքներ ուղղելով, պիտի հասնի իր երազներուն ու տենչերուն եւ այդպիսով պատուէ բոլոր այն անմահները, որոնք իրենց արեան կրակով լուսաւորեցին մեր ազգի կեանքը», եզրափակեց Առաջնորդ Շահէ Արք. Փանոսեան:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Յաւաջ նահատակ» քայլերգով:





STUDIO VENUS

## Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ՄԱՐԶԱԿԱՆ-ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՏՈՂԱՆՑՔ ԵՒ ԶՈՅԳ ԴԱՇՏԵՐՈՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄ


Ժիրայր Կարապետեան  
ՀԱԼԷՊ

նորըը, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Կիրոս Գային իշխանութեան ներկայացուցիչներ, Սուրբիոյ խորհրդարանի անդամ

Հ.Մ.Ը.Մ.ականներու երկար տարիներու իղձը իրականացաւ: Հայաստանի անկախութեան 104-րդ տարեդարձին առիթով, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մասիս Եպս. Զօպուեանի հովանաւորութեամբ, Կիրակի, 29 Մայիս 2022-ի կէսօրուան ժամը 12-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի վերանորոգուած մարզաւանին բացման հանդիսութիւնը տեղի ունեցաւ «Զարթնի՛ր, լսօ» պատգամին հնչեղ արձագանգով:

Բացման հանդիսութեան ներկայ գտնուեցան Բերիոյ Հայոց Թեմի Առաջ-





ժիրայր Ռէխեան, Հ.Մ.-Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօշկերեան, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամ Հրաչ Յակոբեան, Հ.Մ.-Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը եւ Շրջանային Սկաուտ. Խորհուրդը, գաղութին բարեսիրական, մարզական, եկեղեցական, կրթական

միութիւններու ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանակիրներ, սկաուտական, մարզական խումբեր եւ յանձնախումբեր, ինչպէս նաեւ բարերարներ եւ հիւրեր:

Հանդիսութիւնը սկսաւ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին կողմէ Սուրիոյ, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգներու կատարումով:

Հանդիսավար Նայիրի Զաքոյեան հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ.ի Հայլպի մասնաճիւղի վարչութեան ատենապետ տղթ. Արամ Աւետիսեանը՝ վարչութեան խօսքը արտասանելու: Եղբայրը բարի դալուստ մաղթեց ներկաներուն եւ յայտնեց, որ 1918-ին ծնունդ առած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը Եռագոյն դրօշին տակ համախմբեց հայ պատանիներն ու երիտասարդները եւ անոնց ազգային դաստիարակութիւն ջամբելով մասնակից դարձաւ Հայաստանի անկախութեան կերտումին, որ հայ ժողովուրդի պատմութեան մէջ անկիւնադարձային փուլ մը հանդիսացաւ:

Ապա, եղբ. Աւետիսեան անդրադարձաւ դաշտերու վերանորոգման աշխատանքին ու ըսաւ. «Նկատի ունենալով հայապահպանման մէջ Հ.Մ.Ը.Մ.ի կրեւոր դերը, յետ-պատերազմեան հանգրուանին, Հ.Մ.Ը.Մ.ի Հայլպի մասնաճիւղին առաջնահերթ ծրագիրներէն մէ-

կը հանդիսացաւ մարզական վերանորոգութիւնը, ուր մեր մարզիկներն ու սկաուտները իրենց գործունէութիւնները պիտի կատարէին ապահով եւ հայաբոյր յարկի մը տակ: Երկար աշխատանք է ետք, այսօր, օրինական չափանիշներով պատրաստուած պասքէթպոլի եւ ֆուլթպոլի գոյգ դաշտերը Հ.Մ.Ը.Մ.ականներու տրամադրութեան տակ կը գտնուին:

«Հսկայական աշխատանքի կը կարօտէր նորոգութեան այս ծրագիրը, որուն իրականացման համար իրենց անսակարկ ներդրումը բերին Հ.Մ.Ը.Մ.ի Հայլպի մասնաճիւղի նախկին ու ներկայ վարչութիւնները: Երկար է շնորհակալութեան ցանկը եւ անսահման են մեր երախտագիտական զգացումները, ի մասնաւորի այս աշխատանքին համար յառաջացած շինարարական յանձնախումբին եւ անոր ատենապետին, որոնք մինչեւ օրս բոլոր մանրամասնութիւնները սերտելով լաւագոյնս կազմակերպեցին վերանորոգութեան աշխատանքը եւ Սփիւռքի մէջ տարածուած հալէպահայ Հ.Մ.Ը.Մ.ականներուն հետ կապ հաստատելով՝ անոնց նիւթաբարոյական օժանդակութեամբ իր լրումին հասցուցին աշխատանքը»:

Շարունակելով, եղբ. Աւետիսեան աւելցուց. «Շնորհակալութեան մեր խօսքը կ'ուղղենք բարեսիրական այն կազմակերպութիւններուն, որոնք նիւթաբարոյական օժանդակութեամբ ընթացք տուին վերանորոգութեան այս աշխատանքին: Շնորհակալութիւն աշխարհասփիւռ Հ.Մ.Ը.Մ.ականներուն, որոնք թէեւ ֆիզիքապէս հեռու են մեզ-





մէ, բայց գործնապէս մեզի հետ են եւ իրենց լուծման ի սպաս դրին հայէպահայ մեր զաւակներուն առողջ կրթութեան: Այստեղ յատկապէս կը յիշենք այսօր հիւրաբար մեր մէջ գտնուող եղբ. Ճորճ Խոռոզեանը, որմէ վերանորոգութեան այս աշխատանքը սկսելու առաջին քաջալերանքը ստացանք: Ինչպէս նաեւ կը յիշենք Միացեալ Նահանգներէն եղբ. Էնտի Անտոնեանը, իր բերած ներդրումին համար:

«Շնորհակալութեան խօսք Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան եւ անոր Սուրբոյ ներկայացուցիչին՝ եղբ. Մանուկ Քէօշկերեանին եւ Հ.Մ.-Ը.Մ.-ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան, որոնք նեցուկ կանգնեցան մեր աշխատանքներուն: Յատուկ շնորհակալութիւն Հ.Յ.Գ. Կեդրոնական Կոմիտէին, որ զօրավիզ կանգնեցաւ մեզի՝ աշխատանքը յաջողութեամբ պսակելու համար: Ի վերջոյ, շնորհակալութիւն Առաջնորդ Սրբազան Հօր եւ Ազգային իշխանութեան, որոնք մեծ սիրով ընդունաւ մեր փափաքներուն»:

Հ.Մ.-Ը.Մ.-ի Հայլպի մասնաճիւղի ներկայացուցիչին խօսքէն ետք, մարզադաշտ մուտք գործեցին սկաուտները՝ բարձրացուցած Սուրբոյ, Հայաստանի Հանրապետութեան եւ Հ.Մ.-Ը.Մ.-ի դրօշները: Յաջորդեցին Հայլպի մասնաճիւղի երիցական, արիական, գայլիկական եւ սկաուտական խումբերը՝ իրենց հաստատուն քայլերով, ապա յաջորդաբար տողանցեցին Ֆուլթայրի, ճատրակի եւ պասքէթի մարզիկները, իրենց պատասխանատուներով:

Ապա, բոլորը մէկտեղուեցան դաշտին վրայ:

Հայրական իր պատգամը փոխանցեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մասիս Եպս. Զօպուեան: Առաջնորդը գնահատեց կատարուած աշխատանքը եւ ողջունեց հիւրերը: Իր խօսքին մէջ ան ըսաւ. «Այսօր օրն է յիշատակելու բոլոր անոնք, որոնք «Զարթնիւր, լաօ» երգեցին, որոնք Սփիւռքի տարածքին հայ մշակոյթը պահեցին եւ հայուն ներկայութիւնը երաշխաւորեցին: Այսօր օրն է անոնց, որոնք հեռուոր երկիրներէն յիշեցին Սուրբին: Շնորհիւ ձեր կամքին սուրիահայութիւնը դարձեալ կեանք կ'առնէ: Այս մարզադաշտերուն բացումը, մնացեալ կառույցներու կողքին, հիւրը կը կազմէ մեր ներկային եւ ապագային»:

«28 Մայիսը մեզի կը յուշէ կամքով, հաւատարմութեամբ եւ բռնուցքով տէր կանգնելու մեր հողերուն եւ իրաւունքներուն, մեր պետականութեան: Մենք Սուրիայէն կը միանանք հայրենիքի մեր զաւակներուն, որպէսզի տէր կանգնինք մեր հայրենիքին ու Արցախի բռնազրաւուած հողերուն: Այսօր Հայաստանը մեր իւրաքանչիւրին մէջն է: Վկայ շնորհ հայպահայութիւնը, մեր հաստատութիւնները եւ Հ.Մ.-Ը.Մ.ը»:

Իր պատգամին աւարտին, Առաջնորդը շեշտեց, որ մենք բոլորս յանձնառու ենք եւ պատասխանատու՝ անսալու արդարութեան եւ պահանջատիրութեան ձայնին:

Հանդիսութիւնը փակուեցաւ Առաջնորդ հօր «Պահպանիչ»ով:

### Թղթակից ՀԱԼԵՊ

Նոյեմբեր-Դեկտեմբեր 2021-ին, Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան մարզական յանձնախումբը կազմակերպեց առցանց Ա. մարզախաղեր, որոնց մասնակցութիւն բերին նաեւ Սուրբոյ շրջանի մարզիկները:

Մարզախաղերու պաշտօնական արդիւնքներու հրատարակումէն ետք, Կիրակի, 8 Մայիս 2022-ին, Հ.Մ.-Ը.Մ.-ի Հայլպի մասնաճիւղի Ֆուլթայրի դաշտին մէջ տեղի ունեցաւ համա-Հ.Մ.-Ը.Մ.-ական Ա. մարզախաղերու մասնակիցներուն հաստատագիրներու եւ վկայագիրներու բաշխում: Ներկայ էին Հ.Մ.-Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօշկերեան, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Աւետիս Տէրվիչեան, Շրջանային Վարչութեան անդամներ, Հայլպի մասնաճիւղի վարչութեան անդամներ եւ առցանց մարզախաղերու մասնակիցները: Հիւրաբար Հայլպի գտնուելով ներկայ գտնուեցաւ նաեւ Լիբանանի Շրջանային Սկաուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Յակոբ Զպլաբեան:

Բացումը կատարուեցաւ Հ.Մ.-Ը.Մ.-ի «Յառաջ նահատակ» քայլերգով:

Բացման խօսքը արտասանեց Հ.Մ.-Ը.Մ.-ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան անդամ եւ Սուրբոյ շրջանի մարզական յանձնախումբի ներկայացուցիչ





## ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ Ա. ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՀԱՍՏԱՏԱԳԻՐՆԵՐՈՒ ԵՒ ՎԿԱՅԱԳԻՐՆԵՐՈՒ ԲԱՇԽՈՒՄ

եղբ. Եղիա Քիլեճեան: Եղբայրը բարի գալուստ մաղթեց ներկաներուն, յայտնելով, որ առցանց Ա. մարզախաղերը անհատական ձիրքեր զարգացնելու լավագոյն առիթը հանդիսացան:

Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան կողմէ բոլոր մասնակիցներուն հաստատագիրներ բաշխուեցան, իսկ ախոյեան մարզիկները Կեդրոնական Վարչութեան կողմէ զնահատուեցան յատուկ վկայագիրներով:

Այնուհետեւ խօսք առաւ եղբ. Մանուկ Քէօշկերեան: Ան հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ-ը ամէնէն դժուար պայմաններուն մէջ, այս պարագային քորոնա ժահրի համաճարակի օրերուն, կազմակերպեց առցանց մարզախաղերը, ապահովելով միութեան աւանդութեան շարունակականութիւնը: Եղբ. Մանուկ յայտնեց, որ Երեւանի մէջ շուտով տեղի պիտի ունենան համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ մարզախաղերը եւ մաղթեց, որ Սուրբոյ շրջանը իր աշխոյժ մասնակցութիւնը կը բերէ եւ յաղթանակներ կ'արձանագրէ: «Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալը հպարտութիւն է եւ Հ.Մ.Ը.Մ-ի «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանը պէտք է իւրաքանչիւր մարզիկի եւ սկսնակի կեանքին ուղեցոյցը դառնայ», աւելցուց ան:

Եղբ. Քէօշկերեան զնահատեց Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի մասնաճիւղի սկսնակները, շեփորախումբն ու մարզիկները, որոնք Հայոց Յեղափոխութեան 107-ամեակի նուիրուած ոգեկոչումներուն իրենց վստահուած պարտականութիւնը կատարեցին լավագոյն կերպով:

Աւարտին, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան կողմէ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամը, Շրջանային Վարչութեան ատենապետը, Հալէպի մասնաճիւղի մարզական առցանց մարզախաղերու ներկայացուցիչ եղբ. Մայք Հալլաճեանը եւ ախոյեան մարզիկները կարկանդակ հատեցին եւ ջերմ միջոցառումով մէջ բաժնեկից դարձան մարզական առցանց առաջին մարզախաղերու ախոյեաններու ուրախութեան:





# ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆ ՏԷՐ ԶՕՐԻ ՄԷՋ ՊԱՀԱՆՋԱՏԻՐԱԿԱՆ ՈՒԽՏԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՒ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒ

Թղթակից  
ՀԱԼԷՊ

**21** Ապրիլին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեղ-րոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօզկերեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Աւետիս Տէրվիչեան ազգային պատուիրակութեամբ մը այցելեցին Տէր Զօրի Սրբոց Նահատակաց Յուշահամալիր, որ 2014-ին հիմնովին քանդուեցաւ Թուրքիոյ հովանաւորութիւնը վայելող անբեկչական խմբաւորումներու կողմէ:

Բերիոյ թեմի Առաջնորդ Մասիս Եպս. Զօպուեանի հովանաւորութեամբ

կատարուած այս այցելութիւնը նպատակադրեց Հայոց Յեղասպանութեան 107-ամեակին վերահաստատել հայութեան ուխտը եւ պահանջատիրութիւնը, ինչպէս նաեւ՝ արաբ ժողովուրդին հետ նպաստել Յուշահամալիրի վերականգնումի աշխատանքներուն:

## ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒ

Օր մը ետք, 22 Ապրիլ 2022-ի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեղրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօզկերեան, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամներ, Սուրիոյ Շըր-

ջանային Սկաուտ. Խորհուրդը, Հայլպի մասնաճիւղի վարչութիւնը, Սկաուտ. Խորհուրդը, շեփորախումբն ու սկաուտական շարքերը իրենց մասնակցութիւնը բերին Հայոց Յեղասպանութեան 107-ամեակի Հայլպի ժողովրդային ջահերթին, որ կազմակերպուած էր Հ.Յ.Դ.ՍԵՄ-ի Կեղրոնական Վարչութեան կողմէ:

Ջահերթը Սուրիոյ եւ Հայաստանի դրօշներով առաջնորդեց Հ.Մ.Ը.Մ-ի Հայլպի մասնաճիւղի շեփորախումբը, գեղարուեստական ղեկավարութեամբ՝ Մհեր Սուսանիի: Ջահերթին մասնակիցները օրուան կարգախօսը պարզող եւ Թուրքիան դատապարտող ցուցատախտակներ բռնած՝ տողանցեցին «Արամ Մանուկեան» ժողովրդային Տան առջեւն մինչեւ Ազգային գերեզմանատուն:

Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբն ու տարագաւոր սկաուտները խիտ շարքերով տողանցեցին, նահատակ ցեղին ճայնը բարձրացնելով եւ արդարութիւն պահանջելով:

Ազգային գերեզմանատան մէջ, Հայոց Յեղասպանութիւնը խորհրդանշող յուշաքարին առջեւ գետեղուեցան ծաղկեպսակներ: Հայ հոգեւոր պետերը իրենց ջահերով վառեցին Յեղասպանութեան նահատակներուն յիշատակը





խորհրդանշող ջահը, ապա տեղի ունեցավ գեղարուեստական պատշաճ յայտագիր:

Հայոց Յեղասպանութեան յիշատակի օրը՝ Կիրակի, 24 Ապրիլին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօզկերեան, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը, Շրջանային Սկսուտական Խորհուրդը եւ Հալէպի մասնաճիւղի վարչութիւնը, Սկսուտական Խորհուրդը, շեփորախումբն ու սկսուտական շարքերը իրենց մասնակցութիւնը բերին Հայոց Յեղասպանութեան 107-ամեակին նուիրած Սուրբ եւ Անմահ Պատարագին, որ տեղի ունեցավ Ազգային գերեզմանատան մէջ: Պատարագեց եւ օրուան պատգամը ժողովուրդին ուղղեց Բերիոյ Թեմի Առաջնորդ Մասիս Եպս. Զօպուեան:

Պատարագէն ետք, ՀԵՄ-ի կազմակերպած ծաղկեմատոյցին, Հայոց Յե-



ղասպանութեան 1.5 միլիոն սրբադասւած նահատակներուն հանդէպ իրենց յարգանքի տուրքը մատուցելով, սուրբահայ մարզական միութիւններու անունով Հայոց Յեղասպանութեան նահատակներու յուշակոթողին դիմաց ծաղկեպսակ գետեղեց Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ

Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Աւետիս Տէրվիչեան:

Հուսկ, Հ.Մ.Ը.Մ-ականներ մասնակցեցան Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահը տեղի ունեցած արեան տուչութեան եւ իրենց արիւնը նուիրաբերեցին Սուրիոյ ժողովուրդին եւ բանակին, առ ի երախտագիտութիւն Հայոց Յեղասպանութենէն ետք անոնց ցուցաբերած ջերմ վերաբերումին եւ հիւրընկալութեան:

Յայտնենք, որ Հայոց Յեղասպանութեան 107-ամեակին նուիրուած ոգեկոչական նախաձեռնութիւններուն Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի մասնաճիւղի շեփորախումբն ու տարազաւոր սկսուտները իրենց վստահուած պարտականութիւնը կատարեցին յանձնառութեամբ:

Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցիչները մասնակցեցան նաեւ միջ-յարանուանական յուշահանդէսին եւ ոգեկոչական կեդրոնական հանդիսութեան:





## Հ.Մ.Ը.Մ. ԻՐ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԲԵՐԱԻ ԴԵՊԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՈՒՆՏԱՏԵՂԻ՝ ՏԷՐ ԶՕՐ ՈՒՆՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ

**Հ**այոց Յեղասպանությունն ճշգրտապես եւ գաղթական դարձած ժողովուրդի ծոցէն ծնած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միությունը՝ Հ.Մ.Ը.Մ-ը, 104 տարիներ հայ ժողովուրդի պահանջատիրութեան ջանքը կրելով, կը շարունակէ մեր ժողովուրդին պայքարի երթը, մինչեւ անոր արդար իրաւունքներուն վերատիրացումը:

Չորեքշաբթի, 25 Մայիս 2022-ին, ազգային-պահանջատիրական դաստիարակութեամբ տոգորուած Հ.Մ.Ը.Մ-ականներ իրենց մասնակցութիւնը բերին դէպի Տէր Զօր կազմակերպուած ուխտագնացութեան եւ իրենց վստահուած պարտականութիւնը կատարեցին լաւագոյնս:

Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի մասնաճիւղի շեփորախումբն ու տարագաւոր սկաուտները Տէր Զօրի Սրբոց Նահատակաց քանդուած յուշահամալիրին առջեւ դիմաւորեցին Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը եւ իրեն ընկերակցող շքախումբը, որուն մաս կը կազմէին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մասիս Եպս. Զօպուեանի կողքին, Լիբանանի խորհրդարանի երեսփոխան եւ հայկական երեսփոխանական պլոքի

ներկայացուցիչ՝ Յակոբ Բագրատունի, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Կիրօ Մանուկեան, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան Փիրայր Ռէխսեան, Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամ Հրաչ Յակոբեան, ազգայիններ Վրէժ Եագուպեան, Սուրէն Վարդանեան եւ Թեմի Ազգային Վարչութեան ատենապետ Սունդուկ Սունդուկեան, ինչպէս նաեւ միացան հայրեր:

Ուխտագնացութեան իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօշկերեան, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ եղբայրներ Յարութ Գաբրիէլեան եւ Կարօ Գալաթեան, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի անդամներ, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ մասնաճիւղերու վարչականներ եւ Հ.Մ.Ը.Մ-ականներ:



Արամ Ա. Կաթողիկոս հայրապետական օրհնութեամբ եւ քրիստոնէական ջերմ սիրով ողջունեց հայ ժողովուրդի աշխարհացրիւ զաւակները եւ յայտարարեց Տէր Զօրի Սրբոց Նահատակաց քանդուած յուշահամալիրին վերանորոգութեան մեկնարկը, իր խօսքին մէջ լսելով. «Այսօր քարուքանդ վիճակի մէջ կը գտնուի մեր ժողովուրդին կողմէ շինուած այս ուխտատեղին, որովհետեւ նոյն յեղասպանն է անցած այս վայրէջն եւ դարձեալ Յեղասպանութեան ենթարկած մեր ժողովուրդի զաւակներուն հաւատքին ու կամքին արտայայտութիւնը եղող այս կառույցը: Սակայն, մենք չենք յուսահատած. մենք վճռած ենք վերաշինել Տէր Զօրի ուխտատեղին: Նայեցէ՛ք մեր ժողովուրդի պատմութեան. ուրիշներ քանդած են, մենք՝ վերաշինած. ուրիշներ յուսահատութիւն ցանած են մեր կեանքէն ներս, սակայն մենք յոյս ներշնչած ենք մեր ժողովուրդին. ուրիշներ մահով շրջապատած են մեզ, մենք կեանքին կառչած ենք:

«Հայ ժողովուրդի յարուստեան խորհրդանիշը հանդիսացող Տէր Զօրէն կը վերանորոգենք պահանջատիրական պայքարը շարունակելու մեր ուխտը»:





## Հ.Մ.Ը.Մ.Ի ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԿՈՐԻՉԻ ՍՏԵՂԾՈՒՄ՝ ՏԵՐԻՔԻ ՄԷՋ

**Թղթակից  
ԳԱՄԻՇԼԻ**

**Հ**.Մ.Ը.Մ.Ի Սուրբոյ Շրջանային Վարչութիւնը անցնող Փետրուարին նախաձեռնեց Տէրիքի մէջ սկստուական կորիզի մը յառաջացման: Այս նպատակով, Գամիշլիի մասնաճիւղին վարչութիւնը գործուղուեցաւ Տէրիք:

Գործուղումը կատարուեցաւ Կիրակի, 27 Փետրուար 2022-ին: Տեղւոյն վրայ ստեղծուեցաւ ենթայանձնախումբ մը, բաղկացած հետեւեալ քոյր-եղբայրներէն.- Թամար Յովհաննէսեան, Նըւէր Մովսէսեան, Արազ Խորոզեան, Դա-

լար Սարգիսեան, Արփի Սուսանեան եւ Շանթ Թովմասեան:

Հանդիպումին ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.Ի Գամիշլիի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Անդրանիկ Սարգիսեան ամփոփ ձեռով ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.Ի պատմութիւնն ու գործունէութիւնը եւ նշեց անոր մեծ դերը՝ նորահաս սերունդի հայեցի դաստիարակութեան մէջ:

### ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՒՂՈՒՄ

Առաջին գործուղումէն երկու շաբաթ ետք, Կիրակի, 13 Մարտ 2022-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան թելադրանքով, Գամիշլիի

մասնաճիւղին վարչութիւնը կրկին այցելեց Տէրիք եւ հանդիպում մը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Տէրիքի նորակազմ ենթայանձնախումբին եւ սկստու քոյր-եղբայրներուն հետ: Բացման խօսքով Հանդէս եկաւ Գամիշլիի մասնաճիւղի ատենապետ եղբ. Անդրանիկ Սարգիսեան: Ան պարզ ու ամփոփ տեղեկութիւններ փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.Ի կառուցին եւ նշանաբանին մասին: Ան ներկայացուց նաեւ Հ.Մ.Ը.Մ.Ի ստանձնած կարեւոր դերը՝ նոր սերունդի մարմնակրթութեան աշխատանքներուն մէջ:

Աւարտին, սկստուններուն եւ պատասխանատու կազմին բաժնուեցան փողկապներ:

Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.Ի Գամիշլիի շեփորախումբի պատասխանատու եղբ. Ատուր Աղամեան կարգ մը գիտելիքներ փոխանցեց եւ մարզումներու ձեւեր ներկայացուց Նորընծայ քոյր-եղբայրներուն, որոնք բացատրութիւններուն հետեւեցան մեծ ուշադրութեամբ: Գամիշլիէն ժամանած չորս նուագակցողներուն նուագը մեծապէս քաջալերեց ու խանդավառեց ներկաները:

Հանդիպումը փակուեցաւ «Ով հայ արի» քայլերգով:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

## Թղթակից ԴԱՄԱՍԿՈՍ

**Ո**ւրբաթ, 4 Մարտ 2022-ի երեկոյեան ժամը 8-ին, «Աւետիս Ահարոնեան» կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի մասնաճիւղին անդամական ընդհանուր ժողովը, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Պօղոս Խաճարեանի:

Ժողովին քննարկուեցաւ մասնաճիւղին ընթացաւարտ վարչութեան միամեայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը: Արծարծուեցան մասնաճիւղը յուզող հարցեր, կատարուեցան լուսաբանութիւններ եւ շինիչ առաջարկներ:

Ժողովին աւարտին ընտրուեցաւ նոր վարչութիւն, որ կը բաղկանայ հետեւեալ եղբայրներէն.- Միհրան Ղազար-

եան, Արա Խաճարեան, Վահան Գոզանեան, Վրէժ Կիւրիւնյեան եւ Հրայր Գարակէօզեան:

### ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՄԻՕՐԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Ուրբաթ, 18 Մարտ 2022-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի մասնաճիւղին ըսկառուները եւ գայլիկները տեղւոյն համալիրէն ներս ունեցան միօրեայ գործունէութիւն մը, մասնակցութեամբ 66 քոյր-եղբայրներու: Յայտագիրը ընդգրկեց նիւթեր, խաղեր, երգի ուսուցում եւ ձեռագլին աշխատանքներ:

Քոյրերը եւ եղբայրները վայելեցին այցելութիւնը Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մասիս Եպս. Զօպուեանի:



## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 107-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԼԱԹԱՔԻՈՅ ՄԷՁ

Շաբաթ, 23 Ապրիլ 2022-ի երեկոյեան ժամը 7-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Լաթաքիոյ մասնաճիւղին շեփոխախումբը իր մասնակցութիւնը բերաւ Հայոց Տեղապանութեան 107-ամեակին նուիրուած հսկումի հանդիսութեան:

### Հ.Մ.Ը.Մ.Ի ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՏՈՂԱՆՑՔԸ

**Ս**. Յարութեան տօնին առիթով եւ համաձայն ընկալեալ սովորութեան, Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի մասնաճիւղին սկառուները, մասնաճիւղին շեփոխախումբին առաջնորդութեամբ, տողանցեցին «Ահարոնեան» կեդրոնին շրջակայ թաղերուն մէջ, մեծ խանդավառութիւն ստեղծելով ծնողներու եւ համակիրներու մօտ:





## Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄՄԱՆԻ ՄԱՄՆԱՃԻԻՂԸ ՎԵՐԱՇԽՈՒԺԱՑԱԾ

**Ք**որոնայի պարտադրած երկու տարուան սահմանափակումներէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ական կեանքը վերադարձաւ Յորդանանի մայրաքաղաք Ամման:

Շաբաթ, 16 Ապրիլ 2022-ին, տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Ամմանի մեկուսի մասնաճիւղին անդամական Ընդհանուր ժողովը եւ վարչական կազմի ընտրութիւնը, ներկայութեամբ Յորդանանի երիտասարդական նախարարութեան մայրաքաղաքի գերագոյն խորհուրդի ներկայացուցիչներուն: Ստորեւ Նորակազմ վարչութեան անդամները իրենց պաշտօններով՝ Քոյր Ռաբէլ Ասատուրեան-ատենապետ

Եղբ. տղթ. Ազիզ Տինեան- փոխ ատենապետ



Քոյր Դալար Պալեան- ատենադպիր  
Եղբ. Նշան Մխճեան- գանձապահ  
Եղբ. Վաչէ Երկաթեան- հաշուապահ  
Եղբ. Սիմոն Պալեան- երիտասարդական յանձնախումբի պատասխանատու  
Եղբ. Յարութ Խանոյեան- սկաուտական կազմի պատասխանատու



### ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆ Ս. ԶԱՏԿՈՒԱՆ ՊԱՏԱՐԱԳԻՆ ԵՒ ԱՊՐԻԼ 24-Ի ՈԳԵԿՈՉՄԱՆ

Անդամական Ընդհանուր ժողովէն օր մը ետք, Կիրակի, 17 Ապրիլին, Ամմանի մեկուսի մասնաճիւղին սկաուտները մասնակցեցան Ս. Թադէոս եկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. Զատիկուան Պատարագին եւ կատարեցին քօքարթնեռութիւնը:

Շաբաթ մը ետք, սկաուտներ Հայոց Յեղասպանութեան 107-ամեակը նշեցին Ամմանի Ս. Թադէոս եկեղեցւոյ մէջ:



## Հ.Մ.Ը.Մ.Ի ՔՈՒՅԹԻ ՄԵԿՈՒՍԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ 22-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

### Թղթակից ՔՈՒՅԹ

**Ո**ւրբաթ, 18 Մարտ 2022-ի երեկոյան ժամը 6-ին, Քուէյթի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ ներքնասրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Քուէյթի մեկուսի մասնաճիւղի անդամական 22-րդ ընդհանուր ժողովը, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեանի:

Իր աշխատանքներու աւարտին, ժո-

ղովը մասնաճիւղի վարչութեան նոր կազմ ընտրեց հետեւեալ քոյրերն ու եղբայրները.- Ագիկ Խաչատուրեան, Գէորգ Յովակիմեան, Մարլէն Նաբբաշեան, Գարլո Մելիքսէթեան, Ծատուր Սիւմպուրեան, Կարօ Արապաթեան եւ Տարօն Իսա:

Այնուհետեւ, Կեդրոնական Վարչութեան ատենապետին ներկայութեան, նորընտիր վարչութիւնը գումարեց իր առաջին նիստը եւ մշակեց տարեկան իր ծրագիրը:

Յայտնենք, որ երկօրեայ այցելու-



Թեամբ մը շրջան այցելող Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան ժողովի նախօրեակին այցելեց Սրբոց Վարդանանց եկեղեցի եւ ներկայ գտնուեցաւ Ս. Պատարագի: Այնուհետեւ, ան այցելեց Ազգային Առաջնորդարան եւ հանդիպում մը ունեցաւ թեմի կաթողիկոսական փոխանորդ Պետրոս Ծ. Վրդ. Մանուէլեանի հետ:





# 107-ԱՄԵԱԿԻ ՀՍԿՈՒՄ, ՖԻԼՄԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ ԿԱՆԳՆԵՑՈՒԱԾ ԽԱԶՔԱՐԻ

Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի վարչութիւնը ԳԱՅԻՐԷ

**Կ**ազմակերպութեամբ Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի Սկսուտական Խորհուրդին եւ խմբապետական կազմին, Շաբաթ, 23 Ապրիլ 2022-ի երեկոյեան ժամը 7.30-ին, ինչպէս ամէն տարի, Հելիոպոլսոյ «Յուսաբեր» ակումբի սրահազաւիթին մէջ տեղի ունեցաւ հսկումի երեկոյ՝ ի յիշատակ մեր 1.5 միլիոն սրբադասուած նահատակներուն:

Առաջին հերթին տեղի ունեցաւ մոմավառութիւն՝ աւելի քան 130 հայորդիներու եւ սկսուտներու ձեռամբ, սրահին մուտքին կողիկ անկիւն մը գետեղած թաղարներուն մէջ, որոնց մօտ կը ծածանէին Եգիպտոսի, Հայաստանի, Արցախի եւ Հ.Մ.Ը.Մ.-ի դրօշները:

Նոյն տարածքին, պատշաճ անկիւն մը ցուցադրուած էին գայլիկ-արծուիկներու, ինչպէս նաեւ վերջերս արիական շարքեր փոխանցուած սկսուտներու կողմէ պատրաստուած զծագրութիւններ, նկարչական եւ ձեռագիր աշխատանքներ, Հայոց Յեղասպանութեան նութեան թեմայով:

Երեկոյին երկրորդ բաժինը «Սողոմոնի երգերը» Ֆիլմին ցուցադրութիւնն էր:

Ֆիլմին ցուցադրութենէն առաջ, Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի վարչութեան անունով եղբ. Արա Քէօհնեկեան ողջունեց ներկաները եւ ամփոփ կերպով անդրադարձաւ Արման Նշանեանի պատրաստած Ֆիլմին, որմէ ետք ան հրաւրեց Դերենիկ Աբղ. Սահակեանը՝ փոխանցելու իր պատգամը:

Դերենիկ Աբղղայ իր պատգամին մէջ շեշտեց հայկական միասնականութեան եւ հայապահպանման անհրաժեշտութիւնը եւ հայկական արժէքներու ու աւանդութիւններու տէր կանգնելու հրամայականը:

Յայտնենք, որ «Սողոմոնի երգերը» Ֆիլմը հրապարակուած է 2019-ին: Ֆիլմին առա-





գոր **Լուսաւորիչ եկեղեցւոյ Ս. Պատարագին** եւ բարեխօսական կարգին՝ ի յիշատակ Մեծ Եղեռնին նահատակուած զոհերուն:



ջին ներկայացուած կատարուած է **Հոկտեմբեր 2019-ին, Հոլիվուտ, Մ. Նահանգներ:** Յուլիս 2021-ին, Ֆիլմը ցուցադրուած է Ստեփանակերտի մէջ, իսկ Սեպտեմբեր 2021-ին՝ Երեւանի մէջ:

Հայոց Յեղասպանութեան 107-ամեակին առիթով, Ֆիլմը յատուկ ներկայացումներով կը շրջի Մ. Նահանգներու զանազան նահանգներուն մէջ:


«Սողոմոնի երգերը» նկարահանուած է Հայաստանի, Թիֆլիսի, ինչպէս նաեւ՝ Արցախի, յատկապէս Ամարասի Վանքի, Նիկոլ Դումանի տուն-թանգարանի եւ Շուշիի մէջ:

**ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԽԱԶՔԱՐԻՆ**

Յաջորդ օր, Կիրակի, 24 Ապրիլ 2022-ին, Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի սկաուտական կազմը ներկայ գտնուեցաւ Ս. Գրի-

Պատարագէն ետք, սկաուտները ուղղուեցան եկեղեցւոյ բակը գտնուող Եղեռնի զոհերու նուիրուած խաչքարին մօտ, գետեղելով սկաուտական կազմին կողմէ խաչածեւ ծաղկեփունջը եւ հաւատացեալ ժողովուրդին հետ միասին իրենց յարգանքի տուրքը մատուցեցին կարմիր վարդեր գետեղելով խաչքարին առջեւ: Պատարագին եւ արարողութեան ներկայ գտնուեցաւ Եփրատսի մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազօր Դեսպան Հրաչեայ Փօլատեան:

Ապրինք, յիշենք եւ պահանջենք:





## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

**Կ**ազմակերպությանը Գահիրեի Հ.Մ.Ը.Մ.-«Արարապ»ի Սիաուրական Խորհուրդին և խմբապետական կազմին, Ուրբաթ, 8 Ապրիլ 2022-ի երեկոյան ժամը 5.30-ին, Հ.Մ.Ը.Մ.-«Արարապ»ի մարզադաշտին վրայ փեղի ունեցան փոխանցման և խոսարման արարողություններ, ինչպես նաև աստիճանապուշտիսն:



Սիաուրական կազմի Կողմնակցներն էլ իր հինգ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգը, որն էլ իր մեկուսի շրջանի խմբապետ էր. Կարեն Եսևրյանն ողջունեց ներկաները և ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի և Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալու վեհ իմաստը, ինչպես նաև Հ.Մ.Ը.Մ.ի դրոշին խոսարում փայտու և փողկապ կրելու նուիրական յանձնառությունը:



Արարողություններն էլ իր հինգ սիաուրական քայլերգը «Ո՛վ հայ արի», որն էլ իր սիաուրական կազմը ցրունցա մարզադաշտին:

Աելի ուշ, փեղի ունեցան սիաուրական խաղեր՝ յարկապէս փափարող ծնողներու համար: Խաղերը պարտապարտաժ էին սիաուրներու կողմէ: Անոնց մասնակցեցան նաև սիաուրները՝ արեւ-ծելով խանդավառ մթնոլորտ:

Աարտին, բոլոր մայրերուն նուիրունցան վարդեր՝ մայրութեան և գեղեցկութեան փունին առիթով:

**ԳԱՀԻՐԷԻ Հ.Մ.Ը.Մ.-«ԱՐԱՐԱՍ»Ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**



# ՊԱՂԵՍՏԻՆԷՆ ՀՈՆԿ ՔՈՆԿ

Թորգոմ  
ՊՈՒՐԳ ՅԱՍՈՒՏ



- Ի՞նչ կը նայիք կոր, պոլշեկ՞ի մը տեսաք: Հիմա եթէ ձեր բոլորին գլուխները ածելեմ, բան մըն ալ չ'երեւիր, իմ գլուխս Հոնկ Քոնկի խարթա (քարտէս) է:

Պաղեստինցի ժիրայրն էր, որ Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի Շըրջանային Ժողովի մը առանց հրաւիրուելու գացած էր եւ դրան առջեւ կանգնած, Ժողովականներուն կ'ուղղէր իր խօսքը՝ հաւատարմով, որ մրցումներու ատեն իր գլխուն ստացած հարուածները զինք իրաւասու մասնակից կը դարձնեն այդ Ժողովին:

Խորքին մէջ ինք Ժողովի մարդ չէր, գետնի վրայ գործի նուիրեալն էր:

\*\*\*

Թրիփոլիի մէջ մրցումէ մը ետք տեղուոյն պարտուած խումբին համակիրներու կատղած խուժան մը սկսաւ արշաւել Հ.Մ.Լ.Մ.ի համակիրներուն վրայ, որոնք՝ ուրախ, հանրակառք կը բարձրանային: 20-25 մեթր մնացած էր եւ խուժանը պիտի հասնէր, երբ յանկարծ կանաչ «Մերսես» մը յայտնուելով՝ փակեց ճամբան: Ժիրայր երկու ատրճանակով ելաւ եւ սպառնաց կրակել մօտեցողներուն, իսկ մեր համակիրներուն պոռաց, որ շուտով հեռանան:

\*\*\*

Մրցումները դիտող, խումբը քաջալերող սովորական համակիր մը չէր ան, այլ՝ մարզիկներն ու համակիրները պաշտպանող մը, որ բազմաթիւ դէպքերու ընթացքին ստացած վէրքերու սպիներ կը կրէր մարմինին վրայ: Շամունի անուան նախկին մարզական ասանին մէջ Նըժմէի համակիրները զինք թրիպիւնէն վար, դաշտ նետած էին, երբ Հ.Մ.Լ.Մ.ին դէմ հայհոյելու պատճառով առանձինն անոնց վրայ յարձակած էր:

\*\*\*

Խաղի առաջին վայրկեաններուն եթէ խումբը կոլ նշանակած չըլլար, ժիրայր կը սկսէր տագնապիլ, ապա՝ խուճապի մատնուելի: Այդպիսի պահերու մահացու սխալ կը գործէր այն անձը, որ կը փորձէր հետը խօսիլ:

\*\*\*



Շըջան մը Լիբանանի Ֆուլթպոլի ֆետերասիոնը մեծագու՛մար տուգանքներու ենթարկեց Հ.Մ.Լ.Մ.ը՝ իրաւարարներու եւ ֆետերասիոնի հասցէին համակիրներուն բազմագոյն եւ բազմաձայն հայհոյանքներուն համար: Այդ բաւական ծանր ազդեց խումբին, որուն պատասխանատուները ժիրայրին եւ քանի մը այլ անձերու պարտականութիւն տուին զսպել համակիրները: Ժիրայր պաշտօն ստացած անձի գոհունակութեամբ, յաջորդ մրցումէն առաջ համակիրներուն պատուիրեց չհայհոյել: Մրցումը սկսաւ, իրաւարարին կողմնակալութեան ի տես՝ ոմանք հայհոյեցին, ժիրայրը դարձաւ եւ սաստեց, լռեցուց: Իրաւարարը շարունակեց իր ընթացքը, այս անգամ ժիրայրը ինք չզիմացաւ, բացաւ օրհնեալ բերանը եւ նոյնիսկ մրցումէն ետք դաշտ իջաւ եւ բռունցքի ուժովին հարուածով մը գետնի փոկեց իրաւարարը: Ֆետերասիոնը արգելեց ժիրայրին մոտաքը Ֆուլթպոլի դաշտեր, բայց ան ձեւերը գտաւ եւ չբացակայեցաւ մրցումներէն:

\*\*\*

Հ.Մ.Լ.Մ.ի Ֆուլթպոլի մրցումները «Վանայ Ձայն»էն ուղղակի կը սփռէինք՝ Լուիֆիլ Այվագեանը դաշտէն, ես՝ կայանէն, իրարու կապուելով այդ օրերու անթեղ հեռաձայնով, իսկ երբ Լուիֆիլը այլ պաշտօնի կոչուեցաւ, ես դաշտ կ'երթայի, իսկ ժիրայր սիրով կը տրամադրէր իր բջիջային հեռաձայնը, որ սկզբնական շրջանին բաւական սուղ միջոց մըն էր այդքան երկար հաղորդակցութեան համար:

- Ժիրայր խորքին մէջ կ'ուրախանար, որ «Վանայ Ձայն» իր բջիջային հեռաձայնը կը գործածէ, եւ դերասանական ձեւով մը մարդոց ներկայութեան կը հարցնէր.
- Ասոր ծախսերը ո՞վ պիտի վճարէ:
- Ժիրայր, քու ըրածներդ դրամով չեն գնահատուիր,- կ'ըսէի:
- Աս խօսքդ վրաս կապար կրակելու պէս բան մըն է,- կ'ըսէր՝ հագիւ նշմարելի ժպիտով մը շուրջիներուն նայելով:

\*\*\*

Հ.Մ.Լ.Մ.ի նոյնիսկ բարեկամական մրցումներուն ներկայ կ'ըլլար: Կիրակի մը պասքեթպոլի տողոց խումբը բարեկամական մրցում մը ունէր Ռիատիի դաշ-



տին վրայ: Մեր պզտիկները պտտցնելու համար այդ կողմերէն երբ կ'անցնէի, պահ մը դաշտ մտայ: Ժիրայր, որ այդ օրերուն նոր գնած էր բլիթային հեռաձայնը, նստած էր քանի մը պատասխանատուներու հետ: Զիս չտեսաւ: Ետեւի աթոռին վրայ նստայ եւ ըսի, որ «Վանայ ձայն»էն կը խօսիմ, ի՞նչ եղաւ խաղը: Ժիրայր բլիթային հեռաձայնը բռնեց եւ սկսաւ խօսիլ...

\*\*\*

Շատ անհամբեր էր եւ միշտ կ'ուզէր, որ կանուխ հասնինք դաշտ: Անձրեւոտ օր մը ֆուլթայոլի մրցումը տեղի պիտի ունենար հեռուոր Նապաթիէի դաշտին վրայ: Ըսի, որ մարզիչէն նախ ստուգենք, խաղը կրնայ յետաձգուիլ:

- Շո՛ւտ, շո՛ւտ, Վաչէին (Սարգիսեան) թիւը տո՛ւր, ես կը խօսիմ հետը:

Հեռաձայնեց.

- Ը՛ր... փարտոն, մատա՛մ, դաշտ (ներողութիւն, տիկին, սխալ է),- ըսաւ եւ ծուռ-ծուռ ինծի նայեցաւ՝ կարծելով, որ դիտմամբ սխալ թիւ տուած եմ:

Կրկին աճապարանքով հեռաձայնեց եւ իրարանցումին մէջ ըսաւ.

- Եղբայր Ժիրայր, եղբայր Վաչէն է... ը՛ Ժիրայրն է:

Հարցուց եւ ինծի դառնալով՝ ըսաւ.

- Մարդու վրայ խե՛ղք մը կը ձգես կոր:

- Աստուած քեզի խեղք տայ, ինծի ալ դրամ,- ըսի:

- Խեղք ի՞նչ պիտի ընեմ, դրամ թող տայ, խելացիի տեղ կ'անցնիմ,- ըսաւ:

Ուղղուեցանք Նապաթիէ, ուր դաշտը փակ էր: Մրցումը յետաձգուած էր. եղբայր Ժիրայրին... ներողութիւն, եղբայր Վաչէին ըսածը սխալ հասկցած էր:

\*\*\*

Այլ առիթով մը, Թրիփոլի մէջ տեղի ունենալիք մրցումին, Հ.Մ.Ը.Մ-ի հաւատաւոր համակիր Կարպիս Փայիսեանին ինքնաշարժով դաշտ դասցինք: Մեզի հետ էր ֆուլթայոլի յանձնախումբին ատենապետը: Ծամբան, մայրուղիին եզրին դադար մը առինք եւ երբ վերադարձանք, ինքնաշարժը չաշխատեցաւ: Ստիպուած՝ երեքս սկսանք հրել ինքնաշարժը: Զիշդ այդ պահուն մարզիկներուն եւ համակիրներուն հանրակառքերը անցան: Ժիրայր եղիւր եւ դիմացիր: Կարպիսին ըսաւ.

- Ծօ՛, էլ ալեմի՞ն առջեւ ռեզիլ ըրիր մեզի: Ասիկա ըլլալի՞ք է. ֆուլթայոլի ատենապետը, ձեմարանի ընդհանուր հսկիչը եւ պասերուն տէրը ճամբան օթօ կը հրեն...

Մրցումէն ետք վերադառնալու ատեն Կարպիս այնպէս ըրաւ, որ իբր թէ ինքնաշարժը կրկին չաշխատեցաւ: Ժիրայր, որ նստած էր Կարպիսին քով, գրպանէն դրամ հանեց, տուաւ անոր եւ ըսաւ.

- Սատեղէն պաթարիա մը գնէ՛, վերջանանք ալ:

\*\*\*

Այլ մրցումի մը, այս անգամ՝ Նըթմէի դէմ, ես մնացած էի «Վանայ Ձայն», ուրկէ Ժիրայրին հետ պարբերաբար հաղորդակցելով՝ ունկնդիրներուն տեղեկութիւններ կու տայի խաղին ընթացքին մասին: Որոշ ժամանակ ետք հեռաձայնեց եւ ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ. կողմնակալ է: Ուզեցի, որ ինք ուղղակի խօսի ունկնդիրներուն՝ խաղին հարազատ մթնոլորտը տալու համար: Ժիրայր քանի մը բառով բացատրեց եւ վերջաւորութեան ըսաւ.



- Հ.Մ.Ը.Մ-ի այս կողմնակալը մորալիզէ ըրաւ Նըթմէն (անշուշտ պէտք էր ըսէր տեմորալիզէ):

Յաջորդ երկու մրցումներուն Հ.Մ.Ը.Մ. պարտութիւններ կրեց: Առտու մը, ձեմարանի մուտքին, տնօրէն պրն. Հրաչ Տասնապետեան, որ «Վանայ Ձայն»ի միջոցով կը հետեւէր մրցումներուն, ըսաւ.

- Ժիրայր, մորալիզէ կ'ըլլանք կոր:

\*\*\*

Սուրի մէջ տեղի ունեցած մրցումի մը Փիթըրն ալ մեզի հետ եկաւ: Քիչ մը կանուխ հասանք: Նաւահանգիստի շրջանին մէջ տեղ մը բան մը կերանք (ինք պիտի ըսէր՝ «ձեռքիդ աւելցուք»): Ժիրայր, ըստ սովորութեան, միշտ աճապարելով՝ «Շուտ ըրէք, կ'ուշանանք կոր», ըսաւ եւ փողոց ելաւ: Երբ մենք հասանք ետեւէն, տեսանք, որ կնոջ մը դրամ կու տայ: Տարեց, չնորհքով կին մըն էր, մուրացկան չէր: Փիթըր հարցուց.

- Ի՞նչ ըրիր, ո՞վ էր կինը:

Ժիրայր, որ կանգնած էր երկայրկանի հին կառույցի մը առջեւ, ըսաւ.

- Ասիկա բանտ է, կինը եկեր է տղուն այցելութեան, պիտի վերադառնայ, դրամապանակը գողցեր են: Ես այս բանտը մնացած եմ, մայրս եկած էր ինծի դրամ բերելու, դրամապանակը կորսնցուցած էր...

\*\*\*

Բարեկամներու համար ինամքով պահած իր շքեղ «Քատիլաք»ը մեր ամուսնութեան օրը մեզի ալ յատկացուց: Մենք վերջին գոյգը եղանք այդ ինքնաշարժը վայելող: Ռեմակոնտոն մի օր մը Ժիրայր ինքնաշարժը կը տանի Փոլիկարպոսի այժմու կայարանին վայրը, ուր լքուած միայնակ շինութիւն մը կար եւ կարծելով, թէ ապահով է, հոն «կը պահէ»: Ռեմակոնտը կ'երթայ-կու գայ ծխնելոյզի համար բաց մնացած անցքէն կ'իյնայ ճիշդ ինքնաշարժին վրայ: Տարիներ ետք, երբ ծիծաղելու համար այս մասին կը պատմէինք պրն. Տասնապետեանին, Ժիրայր ըսաւ.

- Տեսա՞ր, ընկեր Հրաչ, այդքան մարդոց տուի, բան մը չեղաւ, ինքը նստաւ, քանի մը օր ետք ուումը ինկաւ օթոյիս վրայ: Ուղուրսուզ է:

Պարոն Տասնապետեան կատակեց.

- Հապա՞ եթէ իրենք մէջը ըլլային...

- Աստուած չընէ, խերը անիծեմ օթոյին,- ըսաւ Ժիրայր:  
\*\*\*

Ամէն օր, աշակերտները արձակուելու պահուն միասին կը սպասէինք ձեմարանի մուտքին: Տիկին Անի Օհանեան եկած էր իր ինքնաշարժով տուն տանելու երկու աղջիկները: Ան չէր ճանչնար Ժիրայրը: Ծանօթացուցի, քանի մը նախադասութեամբ ներկայացուցի անցեալի եւ ներկայի դէպքերու ատեն անոր գործունէութիւնը: Ժիրայր պերտերուն մէջ պահած գոհունակ ժպիտով մը մտիկ կ'ընէր: Երբ աւարտեցի, տիկին Օհանեան հարցուց.

- Պարո՛ն Ժիրայր, ամուսնացա՞ծ էք:
- Այո՛:
- Ձեր կինը, ով դիտէ, ինչե՛ր քաշած է ձեր ձեռքէն:

Ժիրայր ծուռ-ծուռ ինծի նայեցաւ:

Այս եւ բազմաթիւ այլ դրուագներ զանազան առիթներով բարեկամներու ներկայութեան յաճախ պատմել կու տար.

- Պատմէ՛, պատմէ՛, աս ալ պատմէ,- կ'ըսէր եւ շուրջիններուն կը նայէր՝ ջղայնանալ կեղծերով:

Ամէնէն շատ հաճոյք առածը «Ճակուարի եւ անխնորհ իջած» Ֆոլկլորակընի մանրապատումն էր, որ անտիպ պիտի մնայ:

\*\*\*

Յուզարկաւորութիւններէ երբ կը վերադառնայինք, իրեն կ'ըսէի.

- Ան ալ զրկեցիր: Դուն դեռ շատեր պիտի զրկես:

Աբօ Գասապեանին յուղարկաւորութեան ես ուշ հասայ, զիրար չտեսանք: Երեկոյեան «Վանայ Զայն» հեռաձայնեց եւ հարցուց.

- Ո՞ր էիր, նայեցայ, որ ըսես՝ «Աբօն ալ զրկեցիր»:
- Հիմա ըսեմ...
- Արդէն ըսելէն ըսելէն ինծի պիտի մեռցնես:
- Մի՛ մտահոգուիր, դուն չես մեռնիր: Եթէ նոյնիսկ մեռնիս, մահազոյգ ես կը կարդամ «Վանայ Զայն»էն:

Իսկապէս կը հաւատայի, որ չի մեռնիր:

Մահազոյգ երեկոյեան բերին կայան եւ այդ աշխատանքը կատարող պաշտօնեաները արդէն մեկնած էին: Ես կարդացի եւ ձայնագրեցի:

Անշուշտ քիչ չեն անոնք, որոնք բազմաթիւ պատմելիքներ ունին Ժիրայրին մասին, որ առիւծի սիրտ ունէր, աղաւնիի հոգի, մանուկի դիւրահաւատութիւն, շուտ բորբոքող եւ անմիջապէս մոռցող, անյիշաչար նկարագիր եւ բարեսրտութիւն: Մարդ մը, որ հարազատ հայ եւ հաւատաւոր Դաշնակցական ըլլալէ բացի՝ ուրիշ բան չէր կրնար ըլլալ: Վերջապէս մարդ մը, որ յանուն ազգին եւ իր պատկանած կազմակերպութեան ու միութեան ամբողջ կեանքին ընթացքին իր գըլխուն վրայ անտրտունջ եւ հպարտութեամբ կրեց «Հոնկ Քոնկի խարթան»:

**«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ**

●Լուսին Երուանդ Տէմիրճեանի մահուան քառասունքին առիթով, Սիսնի, կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները.-

- Տէր եւ տիկ. Վաչէ եւ Զուրի Տէմիրճեան 1000 Աւստ. տոլար
- Տէր եւ տիկ. Գրիգոր եւ Արշօ Պէրէճիքլեան 500 Աւստ. տոլար
- Տէր եւ տիկ. Տէյվիտ եւ Նորա Շահինեան 200 Աւստ. տոլար
- Տէր եւ տիկ. Նուպար եւ Գինա Մազլումեան 150 Աւստ. տոլար
- Տէր եւ տիկ. Ֆրետէրիք եւ Թամար Զամար 100 Աւստ. տոլար
- Տէր եւ տիկ. Փանոս եւ Զուրի Մանճեան 100 Աւստ. տոլար
- Տէր եւ տիկ. Ռուբէն եւ Սեդա Զարիկեան 100 Աւստ. տոլար
- Տէր եւ տիկ. Գործ եւ Անի Շահինեան 100 Աւստ. տոլար
- Տէր եւ տիկ. Վաչէ եւ Վերա Իվանեան 100 Աւստ. տոլար
- Տէր եւ տիկ. Տիրան եւ Վերժինիա Վահրատեան 100 Աւստ. տոլար

- Տէր եւ տիկ. Ալէքս եւ Թինա Վարեան 100 Աւստ. տոլար
- Տէր եւ տիկ. Ժիրայր եւ Երուկ Շնորհոքեան 100 Աւստ. տոլար
- Տիկ. Սիրվարդ Շիրինեան 100 Աւստ. տոլար
- Տիկ. Գեղանուշ Մարտոյեան 100 Աւստ. տոլար
- Տէր եւ տիկ. Յովսէփ եւ Մակի Շնորհոքեան 50 Աւստ. տոլար
- Տէր եւ տիկ. Մայքըլ եւ Մարի Զիաթ 50 Աւստ. տոլար
- Տէր եւ տիկ. Շանթ եւ Սօսի Թաթոսեան 50 Աւստ. տոլար
- Տէր եւ տիկ. Բաբիկ եւ Մելանի Զաքմաքեան 50 Աւստ. տոլար
- Տէր եւ տիկ. Սեւակ եւ Մարալ Վարժապետեան 50 Աւստ. տոլար
- Տիկ. Նուէր Կարապետեան 50 Աւստ. տոլար
- Տիկ. Լալա Կարապետեան 50 Աւստ. տոլար
- Պրն. Կարօ Զեմլէքեան 50 Աւստ. տոլար
- Պրն. Դրօ Մանճիկեան 50 Աւստ. տոլար

- Եղբ. Անդրանիկ Տէր Օհաննէսեան (Նիւ Գրըզի) 500 \$
- Յ.Ս.Ը.Ս.ական եղբայր մը (Պէյրուք) 250.000 լ.ո.

# ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՆԱԽՈՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԱԽՈՅԵԱՆՆԵՐԸ



## ՊԱՍՔԵԹՊՈՂ / ՏՂԱՔ

- 1981- Արեւմտեան Մ.Ն.
- 1990- Սուրբիա
- 1997- Արեւմտեան Մ.Ն.
- 2005- Արեւմտեան Մ.Ն.
- 2009- Արեւմտեան Մ.Ն.
- 2013- Արեւմտեան Մ.Ն.
- 2017- Արեւմտեան Մ.Ն.

## ՊԱՍՔԵԹՊՈՂ / ԿՐՏՍԵՐ ՏՂԱՔ

- 2017-Արեւմտեան Մ.Ն.

## ՊԱՍՔԵԹՊՈՂ / ԱՂՋԻԿՆԵՐ

- 1981- Լիբանան
- 1997- Արեւմտեան Մ.Ն.
- 2005- Արեւմտեան Մ.Ն.
- 2009- Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.
- 2013- Արեւմտեան Մ.Ն.
- 2017- Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.

## ՊԱՍՔԵԹՊՈՂ / ԿՐՏՍԵՐ ԱՂՋԻԿՆԵՐ

- 2013- Արեւմտեան Մ.Ն.
- 2017- Արեւմտեան Մ.Ն.

## ՖՈՒԹՊՈՂ

- 1985- Արեւմտեան Մ.Ն.
- 1993- Արեւմտեան Մ.Ն.
- 2001- Սուրբիա
- 2009- Արեւմտեան Մ.Ն.
- 2013- Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս
- 2017- Լիբանան

## ՖՈՒԹՊՈՂ / ԿՐՏՍԵՐ ՏՂԱՔ

- 2017- Արեւմտեան Մ.Ն.

## ՎՈՂԻՊՈՂ / ՏՂԱՔ

- 1997- Արեւմտեան Մ. Ն.
- 2005- Յոլանաստան
- 2013- Հայաստան

## ՎՈՂԻՊՈՂ / ԱՂՋԻԿՆԵՐ

- 1997- Արեւմտեան Մ.Ն.
- 2005- Հարավային Ամերիկա
- 2013- Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.
- 2017- Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.

## ԱԹԼԷԹ / ՏՂԱՔ

- 2001- Արեւելեան Մ.Ն.
- 2013- Լիբանան
- 2017- Լիբանան

## ԱԹԼԷԹ / ԱՂՋԻԿՆԵՐ

- 2001- Լիբանան
- 2013- Լիբանան
- 2017- Լիբանան

## ՓԻՆԿ-ՓՈՆԿ / ՏՂԱՔ

- 2001- Ռազմիկ Շեմմեսեան (Լիբանան)
- 2009- Ռոպէրթ Շահնազարի (Արեւմտեան Մ. Ն.)
- 2013- Միսաք Պոյաճեան (Լիբանան)
- 2017- Աւօ Մոլնջօղլեան (Լիբանան)

## ՓԻՆԿ-ՓՈՆԿ / ԱՂՋԻԿՆԵՐ

- 2001- Լիզա Պարիկեան (Լիբանան)
- 2009- Լիանա Մելիքեան (Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.)
- 2013- Դուլին Մոլնջօղլեան (Լիբանան)

- 2017- Լարա Քէչէ-պաչեան (Լիբանան)

## ՓԻՆԿ-ՓՈՆԿ / ԶՈՅԳ ՏՂԱՔ

- 2017- Հրաչ Զաւատեան եւ Էրիք Շահնազարի (Արեւմտեան Մ.Ն.)

## ԼՈՂ / ՏՂԱՔ

- 2005- Արեւելեան Մ.Ն.
- 2009- Արեւմտեան Մ.Ն.
- 2013- Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.
- 2017-Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.

## ԼՈՂ / ԱՂՋԻԿՆԵՐ

- 2005- Արեւելեան Մ.Ն.
- 2009- Արեւմտեան Մ.Ն.
- 2013- Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.
- 2017- Կիպրոս

## ՃԱՏՐԱԿ / ՏՂԱՔ

- 2009- Դաւիթ Պոլոնազեան (Հայաստան)
- 2013- Նարեկ Նաճարեան (Լիբանան)
- 2017- Հրաչեայ Վարդանեան (Հայաստան)

## ՃԱՏՐԱԿ / ԱՂՋԻԿՆԵՐ

- 2009- Անահիտ Դանիէլեան (Հայաստան)
- 2013- Շողեր Կովալսկայա (Հայաստան)

## ԹԵՆԻՍ / ՏՂԱՔ

- 2013- Վահագն Թոնաբանեան (Գանատա)
- 2017- Էտմոն Այնէճեան (Կիպրոս)

## ԹԵՆԻՍ / ԱՂՋԻԿՆԵՐ

- 2013- Դարար Մազլումեան
- 2017- Անժելինա Մկրտչեան (Արեւմրտեան Մ.Ն.)

## ՖՈՒԹՍԱԼ / ՏՂԱՔ

- 2017- Լիբանան

## ՖՈՒԹՍԱԼ / ԱՂՋԻԿՆԵՐ

- 2017- Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.



ՀՈՍԿԷ ԱՆՑԱԾ Է  
ՆՈՅՆ ՑԵՂԱՍՊԱՆԸ...  
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

